KONRAD ADENAUER STIFTUNG

CDA EFF Eduardo Frei Foundation

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ.

Կանանց հզորացում հետպատերազմյան համայնքներում

2025

Հակամարտությունների փոխակերպում. կանանց հզորացում հետպատերազմյան համայնքներում

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Պրոֆ. Դր. Արթուր Աթանեսյան, Աննա Սարկիսյան

Երևան - 2025

Բովանդակություն

Ներածություն…… 4
1. Հայաստանյան հասարակության բնութագրիչները Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման արդի փուլում, և կանանց առաջնորդական ներուժի խթանմամ խնդիրները …… 7
1.1. Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման հիմնախնդիրները…… 7
1.2. Հետպատերազմյան հայ հասարակության իրավիճակը և բնութագրիչները…… 13
1.3. Հետպատերազմյան հայ հասարակությունում տրավմատիկ երևույթների դրսևորումներ, և հաղթահարման հնարավորություններ կանանց առաջնորդական ներուժի խթանմամբ…… 22
2. Կանանց ավանդական և ժամանակակից դերերը փոխակերպվող հայաստանյան հասարակությունում…… 30
2.1. Արժեքային փոխակերպումները հայաստանյան հասարակությունում…… 30
2.2. Դրական և բացասական փոփոխությունները մարզում, համայնքում, բնակավայրում վերջին տարիներին…… 35
2.3. Կանանց սոցիալական դերերի փոխակերպումները հետանկախության փուլում…… 42
3. Ղարաբաղյան հակամարտությունն ու 44-օրվա պատերազմը. կանանց դերակատարումն ու պատկերացումները…… 56
3.1. Ղարաբաղյան հակամարտության փոխակերպումը, հնարավոր սցենարները, Հայաստանի ապագայի կանխատեսումները կանանց կողմից…… 56
3.2. Կանանց դերակատարումը՝ Ղարաբաղյան հակամարտության, պատերազմի և հետպատերազմական պայմաններում…… 63
4. Կանանց առաջնորդական ներուժն ու իրականությունը…… 70

4.1. Առաջնորդության ընկալումը կանանց պատկերացումներում. արդյունավետ դեպքեր..... **70**
4.2. Կանանց առաջնորդությանն աջակցող և խոչընդոտող գործոնները..... **76**
4.3. Կանանց կարիքներն ու կարողությունները՝ համայնքների և պետության անվտանգության, զարգացման ապահովման համատեքստում..... **93**

Ներածություն

«Հակամարտության փոխակերպում. կանանց դերը, կարիքները և կարողությունների զարգացումը հետպատերազմյան հասարակությունում» ծրագրի իրագործման համար նախատեսվել է դուրս բերել ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում բնակվող կանանց կարիքները և կարողությունները՝ մասնակցելու իրենց համայնքի և ընդհանուր առմամբ պետության ու հասարակության զարգացմանը:

Հայաստանում կանանց հզորացման, ղարաբաղյան հակամարտության փոխակերպման պայմաններում նրանց առաջնորդական ներուժի բացահայտման ու խթանման նպատակներն ունեն ռազմավարական կարևորություն ոչ միայն Հարավային Կովկասի տարածաշրջանի, այլև Եվրոպական միության համար՝ վերջինիս հարևանության քաղաքականության շրջանակում: Նպատակը ենթադրում է անցումային հասարակություններում հիմնական դերակատարների փոփոխվող դերերը, նոր շահակիցների ներգրավման հնարավորությունները, պատերազմի վերսկսման ռիսկերի հավանականությունը, խաղաղ բանակցությունների ուղղությամբ ջանքերը, ինչպես նաև այլ հնարավոր սցենարներ՝ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» ներկայիս իրավիճակում:

2020թ.44-օրյա ղարաբաղյան պատերազմից հետո, հակամարտության տևական և անցումային բնույթի պայմաններում, հայաստանյան հասարակությունը պետք է հատկապես կարևորի մարդկային ներուժի արդյունավետ օգտագործումն անվտանգության, պաշտպանության, պետության և հասարակության զարգացման նպատակներով, ինչը ենթադրում է սեռով պայմանավորված տարաբնույթ կարծրատիպերի հաղթահարումը, կանանց ակտիվ ներգրավվածությունը հետպատերազմական կայունացման և զարգացման ծրագրերում, կանանց առաջնորդական կարողությունների վերհանումն ու խթանումը:

Սույն ծրագիրը հետազոտահեն է և ներառում է կանանց կարիքների, առաջնորդական ներուժի և փորձի վերհանում, ինչպես նաև կանանց առաջնորդական կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացների բաղադրիչներ:

<u>Ծրագրի բաղադրիչները</u>

Բաղադրիչ 1. Հայաստանյան հասարակության հետազոտությունների տեսական ակնարկ

Այս փուլում ուսումնասիրվել և դուրս են բերվել հայաստանյան հասարակության բնութագրիչները Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման արդի փուլում, իրականացվել է արդեն կատարված հետազոտությունների, հրապարակումների վերաբերյալ տեսական ակնարկ: Դիտարկվել են արդեն իրականացված այնպիսի ուսումնասիրություններ, որոնցում անդրադարձ է կատարվում հետպատերազմական հասարակությունների տրավմատիկ վիճակին, սոցիալ-հոգեբանական բնութագրիչներին (ապագայի հանդեպ անորոշություն, վստահության անկում, պասիվացում/ակտիվացում, հիասթափություն, և այլն), վերականգնման դինամիկային, կանանց առաջնորդական ներուժի բացահայտման և խթանմամ խնդիրներին: Վերլուծվել են ակադեմիական հոդվածներ, հաշվետվություններ և ուսումնասիրություններ՝ կապված հետպատերազմյան վերականգնման, համայնքի կառավարման և կանանց առաջնորդության, ավանդական և ժամանակակից ոլորտներում կանանց ներգրավվածության հետ: Այս ուսումնասիրությունը մեթոդաբանական հիմքերից էր՝ դաշտային փուլում իրականացված հետազոտության համար:

Բաղադրիչ 2. Դաշտային հետազոտություն, որի հիմնական նպատակներն էին.

- Պարզել կանանց ներուժն ու պրակտիկ ներդրումը՝ որպես համայնքային առաջնորդների հակամարտության փոխակերպման և հասարակության վերակառուցման գործընթացում:
- Բացահայտել կանանց կարիքներն ու ներուժը որպես առաջնորդների՝ հաշվի առնելով ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղության հնարավոր սցենարները:

Հետազոտության մեթոդները՝

- Խորին հարցազրույցներ համայնքներում բնակվող կանանց հետ, ովքեր ցուցաբերել են առաջնորդական կարողություններ և նախաձեռնություններ կառավարման, ձեռնարկատիրության, կրթության, բարեգործության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության, կամավորության և այլ ոլորտներում:

- Ֆոկուս-խմբային քննարկումներ նույն կատեգորիաների կանանց հետ:

Հետազոտության կազմակերպման և իրականացման փուլերը՝

1. **Ռեսպոնդենտների քարտեզագրում**. Բացահայտել հիմնական մասնակիցներին (ՀԿ-ներ, պետական մարմիններ, տեղական առաջնորդներ, կանանց կազմակերպություններ և կանայք գիտակրթական ոլորտում): Կազմվել է շուրջ **110 կանանց** ցանկ Հայաստանի **10 մարզերից և Երևանից**՝ յուրաքանչյուրից 10 ներկայացուցիչ:
2. **Խորին հարցազրույցներ**. 2025թ. Ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել է **55 խորին հարցազրույց** (յուրաքանչյուր մարզից 5) համայնքային ակտիվ կանանց հետ՝ նրանց տեսակետները պարզելու նպատակով՝ կապված հակամարտության փոխակերպման ընթացիկ փուլերի գնահատման, համայնքային դինամիկայի, սպասվող զարգացումների (ներառյալ պատերազմի և խաղաղության սցենարները) և այդ իրավիճակներում կանանց հնարավոր և իրական դերի, ներուժի, արգելքների, ռիսկերի, դժվարությունների վերաբերյալ:
3. **Ֆոկուս-խմբային քննարկումներ**. 2025թ. հունիս-հուլիս ամիսներին իրականացվել են **5 ֆոկուս-խմբային քննարկումներ**՝ յուրաքանչյուրում 8-11 մասնակից, որոնք նախապես ընտրվել են ծրագրին մասնակցելու համար, սակայն չեն ընդգրկվել խորին հարցազրույցներում: Ֆոկուս-խմբային քննարկումներն իրականացվել են Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում:

Վերլուծական մոտեցումներից է SWOT վերլուծությունը, որի միջոցով հնարավոր է պարզել հակամարտության փոխակերպման պայմաններում կանանց առաջնորդական ներուժի և կարողությունների դրսևորման վրա դրական և բացասական գործոնների ազդեցությունը, գնահատել հնարավորությունները և ռիսկերը, այդ թվում՝ մշակելու կանանց սատարման ծրագրեր:

2. Հայաստանյան հասարակության բնութագրիչները Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման արդի փուլում, և կանանց առաջնորդական ներուժի խթանմամ խնդիրները

2.1. Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման հիմնախնդիրները

Հակամարտության փոխակերպումը (conflict transformation) սահմանվում է որպես մի գործընթաց, որի ընթացքում փոփոխվում են հակամարտության կողմերի մասնակցությունը, փոխհարաբերությունները, մտադրությունները, հաղորդակցական գործընթացները և, երբ անհրաժեշտ է, այն հասարակության բնույթն ու կառուցվածքը, որն այլ պարագաներում կշարունակեր ձգտել դեպի հակամարտության բռնի, ռազմական լուծումներ[1]: Փաստորեն, հակամարտության փոխակերպումը ենթադրում է մասնակիցների, իրենց մտադրությունների և գործողությունների փոփոխություններ, ինչը պետք է ուղղված լինի հակամարտության խաղաղ լուծմանը, սակայն միշտ չէ, որ դրան նպաստում է:

Ինչպես նշվում է մասնագետների կողմից, հակամարտության փոխակերպումը տևական գործընթաց է և պետք է ունենա հեռահար նպատակներ՝ ներառելով պետական մարմիններն ու հասարակական կառույցները, և փոխակերպելով հակամարտության մասնակիցներին, հակամարտության բուն խնդիրը, կառուցվածքը, և մոտեցումները[2]:

Ցանկացած հակամարտություն, առավելևս՝ տևական բնույթ ունեցող, անհրաժեշտաբար փոխակերպվում է՝ տեղափոխվելով մեկ փուլից մյուսը: Հեղինակների մոտեցումները հակամարտության փոխակերպման հիմնախնդրին կարելի է բաժանել երկու խմբի. մի խումբն այդ հարցին վերաբերում է չեզոք՝ գտնելով, որ փոխակերպման փուլերն անպայման չէ որ տանում են հակամարտության կողմերի միջև հարաբերությունների կարգավորմանն ու հակամարտության լուծմանը[3]:

---

[1] Miall, H. 2004. Conflict Transformation: A Multi-Dimensional Task. Berghof Research Center for Constructive Conflict Management. URL: https://core.ac.uk/download/pdf/71735641.pdf

[2] Lederach, J.P. 1995. Preparing for Peace: Conflict Transformation Across Cultures, New York: Syracuse University Press; Vayrynen, R. (ed.) 1991. „To Settle or to Transform? Perspectives on the Resolution of National and International Conflicts." New Directions in Conflict Theory: Conflict Resolution and Conflict Transformation. London: Sage, 1-25.

[3] Graf, W., Kramer, G., & Nicolescou, A. (2006). Conflict Transformation through Dialogue: From Lederach's Rediscovery of the Freire Method to Galtung's "Transcend" Approach. Journal für

Հեղինակների մյուս խումբը համակարտության փոխակերպումը դիտում է որպես հնարավորություն՝ հակամարտության կարգավորման և լուծման համար, ուստի և փոխակերպման գործընթացի վերջնանպատակ է համարվում հակամարտության լուծման փուլը, որին նախորդում են կողմիրի միջև հաղորդակցման հնարավորությունների ձևավորումը, ընդհանուր շահերի դուրսբերումը, միասնական գործողությունների նախաձեռնումն ու կայուն հարաբերությունների ապահովումը[4]: Ինչպես գրում է հայտնի կոնֆլիկտաբան Լ. Կրիսբերգը, հակամարտությունների փոխակերպումն ավելի ու ավելի հաճախակի կիրառվող հասկացություն է՝ հակամարտությունների վերլուծության և լուծման, խաղաղության ուսումնասիրության և միջազգային հարաբերությունների ոլորտներում, և ընդհանուր առմամբ վերաբերում է հիմնարար և կայուն փոփոխությանը, որը պետք է տանի հակառակորդների միջև տևական ու կործանարար պայքարից դեպի կառուցողական հարաբերությունների ձևավորմանը[5]:

Հակամարտաբանության դասական Յոհան Գալթունգը նշում է, որ հակամարտությունների մեծ մասը լուծում չի ստանում, մենք դրանցով ապրում ենք. հակամարտությունները նման են հիվանդությունների, որոնք կարող են որոշ իմաստով մեղմվել, ժամանակավոր բուժում ստանալ, սակայն, ինչպես որ հիվանդանոցից դուրս գալով երբեք լիակատար առողջ չենք, այնպես էլ հակամարտությունների պայմաններում կարող ենք “առողջանալ” միայն այն դեպքերում, երբ մեր օրգանիզմն ինքը տրամադրվի առողջացմանը, այդ ուղղությամբ ջանքեր գործադրի, միջոցներ ձեռնարկի: Գալթունգի խոսքերով՝ հակամարտության փոխակերպման վերջնական նպատակն է խաղաղությունը, սակայն, դրան կա՛մ պետք է ձգտեն բոլոր կողմերն ու այդ վիճակը պատկերացնեն,

Entwicklungspolitik. 22. 55-83. 10.20446/JEP-2414-3197-22-3-55. URL: https://www.mattersburgerkreis.at/dl/nktuJMJKokJqx4KooJK/JEP-3-2006_04_GRAF-ET-AL_Conflict-Transformation-through-Dialogue-From-Lederachs-Rediscovery-of-the-Freire-Method-to-Galtungs-Transcend-Approach.pdf

[4] B. Austin, M. Fischer, H.J. Giessmann (eds.) 2011. Advancing Conflict Transformation. The Berghof Handbook II. Opladen/Framington Hills: Barbara Budrich Publishers.

[5] Kriesberg, L. 2008. Conflict Transformation. In: Lester Kurtz (Editor-in-Chief), Vol. [1] of Encyclopedia of Violence, Peace, & Conflict, 3 vols. p. 401. URL: https://lkriesbe.expressions.syr.edu/wp-content/uploads/2008-Conflict-Transformation.pdf

ցանկանան, ջանքեր գործադրեն, կամ էլ հակամարտությունը խաղաղությանը չի փոխակերպվելու[6]:

Հակամարտությունների և դրանց փոխակերպումների պայմաններում կանանց դերակատարումը կախված է կոնֆլիկտային դինամիկայից, ինչպես նաև էականորեն՝ այն դերերից, որոնք կանայք կատարում են, կամ որոնք կանանց վերագրվում են այս կամ այն հասարակությունում: Հաշվի առնելով, որ հակամարտություններն իրենց բնույթով ուղղակիորեն առնչվում են անվտանգությանը, իսկ անվտանգության ապահովումն ավանդաբար վերագրվել է տղամարդկանց, ներկայումս ավանդական հասարակություններում անվտանգության ապահովման բոլոր ոլորտները, առաջին հերթին՝ ռազմաքաղաքական, հիմնականում կապված է տղամարդկանց հետ, իսկ կանանց դերն ածանցված է տղամարդկանց կողմից ընդունվող և իրագործվող որոշումներից:

Ժամանակակից հասարակություններում, որտեղ պատմականորեն և հատկապես արդի ժամանակաշրջանում իրականացվել են կանանց իրավունքների պաշտպանության և երկու սեռերի իրավահավասարությանն ուղղված բարեփոխումներ, կանանց ներգրավվածությունն անվտանգային համակարգերում ավելի էական է և՛ որակական, և՛ քանակական իմաստներով, այդ թվում՝ պաշտոնների զբաղեցման, զինծառայության, ոստիկանության շարքերում ծառայության, արտակարգ իրավիճակների կանխարգելման համար ստեղծվող մարմիններում ներգրավվածության առումներով:

Միևնույն ժամանակ, արդի ռազմական հակամարտությունների ուսումնասիրություններում կանանց ներգրավվածության հարցը մնում է ոչ միանշանակ և բարդ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հակամարտությունների ընթացքում և փոխակերպման տարբեր փուլերում կանայք հանդես են գալիս և՛ որպես ակտիվ, և՛ պասիվ կողմ, իսկ ակտիվ կողմ լինելով կարող են ստանձնել և՛ այլոց, այդ թվում՝ հակառակորդի կանանց հանդեպ բռնություն գործադրողների, և՛ փրկողների, աջակցություն ցուցաբերողների դերեր[7]: Կանանց

[6] Galtung, J. (2000). Conflict Transformation by Peaceful Means (The Transcend Method). Participant's and Trainer's Manual. United Nations Disaster Management Training Program, 5. 10.1007/978-3-642-32481-9_5. URL: https://www.transcend.org/pctrcluj2004/TRANSCEND_manual.pdf

[7] Hedström, J., Senarathna, T. (co-editors, 2015) Women in Conflict and Peace. IDEA, URL: https://www.idea.int/sites/default/files/publications/women-in-conflict-and-peace.pdf;
Cruz Almeida, C., Cochrane-Buchmüller, V. and Dudouet, V. (2022). Gender-inclusive conflict transformation: Insights from female former combatants and women associated with resistance and liberation movements. Policy Insight Series (1) Berlin: Berghof Foundation.

ներգրավվածությունը զինված հակամարտություններում կարող է տեղի ունենալ զինված ստորաբաժանումների կազմում, քաղաքացիական ընդվզման խմբերում, առաջնագծում և թիկունքում, հետկոնֆլիկտային վերականգնողական աշխատանքներում: Հակամարտությունների պրակտիկան, ինչպես նաև այն արտացոլող հետազոտությունները ցույց են տալիս, որ կախված հասարակության մեջ առկա կարծրատիպերից՝ կանայք կարող են հետ պահվել ակտիվ մասնակցությունից, ինչպես նաև դառնալ հակամարտություններում տեղի ունեցող ռազմական գործողությունների և ռազմական հանցագործությունների ուղղակի և անուղղակի զոհը[8]:

Ղարաբաղյան հակամարտությունը, լինելով հետխորհրդային տարածաշրջանի ամենատևական և բարդ հակամարտությունը, սկիզբ է առել ավելի վաղ անցյալում[9] և դրսևորվել է ներպետական, միջպետական, միջէթնիկ, ռազմաքաղաքական մակարդակներում՝ ներառելով անհատներին, խմբերին և հասարակություններին, պետական մարմիններին, ինչպես նաև կողմերի մարդկային, տնտեսական, ռազմական, տեղեկատվական միջոցներ: Ղարաբաղյան հակամարտությունը կապված է կողմերի շահերի, արժեքների, իրավունքների հետ, և քննարկվել է ներպետական և միջազգային իրավական հարթակներում, հիմնականում՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության և ինքնորոշման իրավունքի դրսևորում, տարածքային ամբողջականության խնդիր[10], հակամարտության փոխակերպման արդի փուլում նաև՝ որպես էթնիկ խմբի ցեղասպանության փորձ[11]:

Ղարաբաղյան հակամարտությունն իր ուշ-խորհրդային փուլից սկսած և դրսևորումների (փոխակերպումների) բոլոր հետագա փուլերում էապես պայմանավորել է նաև հայկական և ադրբեջանական կողմերի ներքին և հատկապես արտաքին քաղաքական ուղղությունների նախընտրությունն ու

---

[8] Women, War and Peace: The Independent Experts' Assessment on the Impact of Armed Conflict on Women and Women's Role in Peace-building (2002) United Nations Development Fund for Women. URL: https://unfpa.org/sites/default/files/pub-pdf/3F71081FF391653DC1256C69003170E9-unicef-WomenWarPeace.pdf

[9] Svante E. Cornell (1999) The Nagorno-Karabakh Conflict. Department of East European Studies, Report no. 46, Department of East European Studies, Uppsala University. URL: https://is.muni.cz/el/fss/jaro2019/POL587/um/Cornell_The_Nagorno-Karabakh_Conflict.pdf

[10] Մանասյան, Ա. (2019) Արցախյան հիմնախնդիր: նորովի իմաստավորման ենթակա հարցեր: «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», № 3 (30), էջ 37-53: URL: http://www.old.ysu.am/files/04A_Manasyan.pdf; Փաշայան, Հ. (2015). Ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական փաստարկները. 21-րդ ԴԱՐ, (3 (61)), 13-37.

[11] Luis Moreno Ocampo. Expert Opinion Genocide against Armenians in 2023. New York, August 7, 2023. URL: https://www.cftjustice.org/wp-content/uploads/2023/08/Moreno-Ocampo-Expert-Opinion.pdf

զարգացումը, այդ թվում՝ 2020թ-ի ռազմական փուլից հետո, երբ հայկական կողմը սկսեց էապես վերիմաստավորել Ռուսաստանի Դաշնության հետ իր ռազմավարական հարաբերությունների բնույթն ու արդյունավետությունը[12]:

Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման գործընթացը տեղի է ունեցել մի քանի փուլերով: Առաջին փուլում Խորհրդային Միության փլուզման գործընթացներին զուգահեռ Արցախյան շարժման սկզբում այն ունեցել է քաղաքական բնույթ՝ դրսևորվելով որպես Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության զանգվածային ցույցեր, պահանջներ և հանրաքվե՝ դուրս գալու Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության կազմից և միավորվելու Հայաստանի Հանրապետության հետ[13]: Ղարաբաղյան հակամարտության փոխակերպումը քաղաքական փուլից դեպի ռազմաքաղաքական փուլ տեղի ունեցավ 1991-1994թթ-ին և ընդհատվեց հայկական կողմի հաղթանակով ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմամբ: Դրանից հետո հակամարտությունը նորից վերադարձավ քաղաքական փուլ: Սակայն, ի տարբերություն առաջին փուլի, երբ ղարաբաղյան հակամարտությունը տեղի էր ունենում ներքաղաքական մակարդակում՝ Խորհրդային Միության ներսում, և համարվում էր ներքաղաքական հակամարտություն[14], առաջին ռազմական փուլից (1991-1994թթ.) հետո այն փոխակերպվեց և դարձավ միջազգային՝ ներառելով Հայաստանի և Ադրբեջանի անկախ հանրապետությունները, նորանկախ և չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ինչպես նաև երրորդ կողմերին՝ միջնորդ պետություններին, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին՝ Ռուսաստանի Դաշնությանը, ԱՄՆ և Ֆրանսիային[15]:

---

[12] Atanesyan, A.V., Reynolds, B.M., & Mkrtichyan A.E. (2024) Balancing between Russia and the West: the hard security choice of Armenia, European Security, 33:2, 261-283, DOI: 10.1080/09662839.2023.2258528

[13] Քոթանջյան, Հ. (խմբ., 2010) Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխումներին գիտական հակազդեցության ռազմավարական ուղենիշները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում. գիտությունը և կրթությունը հայության ցանցապետական զարգացման գերակայություն: Հայկական բանակ ռազմագիտական հանդեսի հավելված, 4/16/: URL: https://razmavaraget.wordpress.com/wp-content/uploads/2010/11/at4-_2010.pdf

[14] Մանասյան, Ա. (2015). Ղարաբաղյան հակամարտությունը ԽՍՀՄ տրոհման համատեքստում: 21-րդ Դար, թիվ 4 (62), էջ 47-77. URL: https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/08/Manasyan-Aleksandr-Karabakh-conflict-USSR-trohum.pdf

[15] Armenia and Azerbaijan: Between war and peace. European Parliament, EPRS | European Parliamentary Research Service, June 2023. URL: https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2023/747919/EPRS_BRI(2023)747919_EN.pdf

Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման փուլերն արտահայտվել են հայկական և ադրբեջանական կողմերի առաջնորդների քաղաքական օրակարգերում և ծրագրերում, պայմանավորել են քաղաքական գործիչների հանդեպ վստահության դինամիկան: Եթե Ադրբեջանի ղեկավարությունը՝ 1993թ-ից սկսած չի փոփոխվել և, լինելով ոչ ժողովրդավարական, կախված չի ժողովրդի կամքից, ապա Հայաստանի Հանրապետության և չճանաչված, 2023թ-ին բնակչության բռնի տարհանման հետևանքով գոյությունը դադարեցրած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական պետությունների իշխանությունների վարկանիշը, ժողովրդականությունը և արդյունավետությունը ըստ էության ուղղակի կապված և կախված են եղել Ղարաբաղյան հակամարտության տարբեր փուլերում հայկական կողմի դրսևորած ջանքերից, մոտեցումներից, դրանց արդյունավետության աստիճանից[16]: Փաստորեն, Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման և հայկական իշխանությունների փոփոխման փուլերը սերտաճած էին և փոխադարձ պայմանավորման մեջ էին՝ ներառյան 2020թ-ի պատերազմի և հետպատերազմյան փուլը, երբ ՀՀ իշխանություններն Ադրբեջանի կողմից ուժի սպառնալիքի և ճնշման ազդեցությամբ որդեգրել են խաղաղության օրակարգի հանրայնացման և իրականացման գործընթացը: Ինչպես արդեն նշվել է հակամարտությունների փոխակերպման քննարկման մասում, փոխակերպումը վերջիվերջո պետք է միտված լինի խաղաղության հաստատմանը, սակայն ենթադրում է հակամարտության բոլոր կողմերի ջանքերն ու միտվածությունը դեպի համագործակցում. 2020թ. պատերազմում հայկական կողմի գործողությունները միակողմանի են, իրականացվում են հաղթող կողմի պարտադրանքով, ենթադրում են միակողմանի զիջումներ և չեն արտացոլում հանրային կարծիքը: Բացի այդ, ադրբեջանական կողմը պարբերաբար հնչեցնում է պատերազմի վերսկսման սպառնալիքը: Այդ պատճառներով ղարաբաղյան հակամարտության ներկայիս փուլում հնարավոր է խոսել հակամարտության փոխակերպման միակողմանի ջանքերի, կողմերի՝ միմյանցից տարբերվող, ոչ համազոր մոտեցումների, պատերազմի և բռնության սպառնալիքի արդիականության մասին, ինչը դժվարեցնում է դեպի խաղաղություն միտվածությունն ու հնարավորությունները:

[16] Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները: Լույս հիմնադրամ, 2020: URL: https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573%D4%BC%D5%82%D4%B3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81.pdf

2020թ-ի պատերազմից և 2023թ-ին Լեռնային Ղարաբաղի (Արցախի) բնակչության բռնի տարհանումից հետո հայաստանյան հասարակությունը դարձյալ փոխակերպվել է՝ կրկին վերապրելով տրավմատիկ իրադարձություններ, դրսևորելով հերոսական մղումն ու հիասթափվելով, հայտնվելով իր կարողությունների վերիմաստավորման, ուժերի և ջանքերի միավորման անհրաժեշտության առաջ: Այս ամենում կարևոր է դիտարկել կանանց դերը՝ ներառյալ ներկային և ապագային միտված իրենց մոտեցումները, պատկերացումները, ջանքերը, հույսերն ու կարողությունները:

2.2. Հետպատերազմյան հայ հասարակության իրավիճակը և բնութագրիչները

2020թ-ի 44-օրյա պատերազմում կրած պարտության անսպասելիությունը հայաստանյան հասարակության, Լեռնային Ղարաբաղի չճանաչված հանրապետության հայության և հայկական սփյուռքում ապրողների համար, առաջ բերեց խաբված և հիասթափված լինելու զանգվածային տրամադրություններ: Դրան նպաստեցին ոչ միայն ռազմաքաղաքական գործընթացների՝ հասարակության մեծամասնության համար չկանխատեսված ելքերը, այլև դրանց ուղեկցած պետական պաշտոնական հաղորդագրությունները, որոնք փաստացի այլ էին, քան՝ իրական գործընթացները, հնչում էին ոգևորիչ կերպով (“Հաղթելու ենք”, և այլն), բնակչությանը մղում էին դեպի հերոսական մասնակցություն և, միևնույն ժամանակ, ապակողմնորոշում էին:

Հիասթափվածության զգացումն արտացոլվեց վստահության կտրուկ անկմամբ՝ առաջին հերթին ՀՀ իշխանությունների հանդեպ, որոնք 2018թ-ի “Թավշյա հեղափոխությունից” հետո վայելում էին հայաստանցիների զգալի մասի ոգևորված վերաբերմունքն ու վստահությունը: Պետք է նշել, որ «Թավշյա հեղափոխության» զանգվածային գործընթացներին էական մասնակցություն են ցուցաբերել կանայք և աղջիկները, այդ թվում՝ ուսանողուհիները, ովքեր, մասնավորապես, փակում էին փողոցներ, խաղաղ երթեր էին կազմակերպում, դասադուլ էին հայտարարում, գիշերում էին Երևանի Ազատության հրապարակում, մշտապես առցանց եղանակով շրջանառում էին տեղեկատվություն տեղի ունեցողի վերաբերյալ, լուսաբանում էին իրավիճակը, ընդորում՝ սեփական նախաձեռնությամբ՝ հանդես գալով որպես քաղաքական կյանքի ինքնուրույն և

ինքնաբավ սուբյեկտներ[17]: Բնակչության մեծ մասը՝ այդ թվում կանայք, հետագայում հիասթափվեցին և հետպատերազմյան փուլում ներկայացնում են որևէ քաղաքական ուժին չաջակցող մեծամասնությունը:

Վստահությունն էապես անկում ապրեց նաև ՀՀ անվտանգության համար սկզբունքային նշանակություն ունեցող արտաքին քաղաքական դաշնակցի՝ ՌԴ հանդեպ, ում մեղադրում էին ոչ հայամետ, ավելի շատ՝ չեզոք դիրքորոշման համար, մինչդեռ տվյալ պարագայում չեզոքությունը համարժեք էր ադրբեջանական գործողությունների պասիվ դիտարկմանն ու ընկալվեց որպես “հայկական կողմին միայնակ թողնելու մոտեցում”: Ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև արևմտյան, առաջին հերթին՝ ԵՄ պետությունների և եվրոպական կառույցների հանդեպ վստահության անկում՝ պայմանավորված այդ կառույցների կողմից “հակամարտության բոլոր կողմերին” ուղղված նույն կոչերով, դրանց անարդյունավետությամբ, իրականությանը չհամապատասխանելու հանրային ընկալմամբ: Պետք է նշել նաև, որ հետպատերազմյան հայաստանյան հասարակության ստվար զանգվածների մոտ առկա էր նաև ինքնաքննադատություն՝ պատերազմում պարտություն կրելու համար սեփական մեղքի ընդունում[18]:

Հետպատերազմական հասարակությունների ուսումնասիրություններում կարևոր տեղ է զբաղեցնում զանգվածային տրավմայի բացահայտման, տրավմատիկ շոկի, տրավմայի հաղթահարմանն ուղղված մոտեցումների և ջանքերի ամբողջությունը: Սա հատկապես բնութագրական է պատերազմներում պարտություն կրած հասարակությունների համար, ինչը թույլ է տալիս այս հարթության վրա քննարկելու նաև հետպատերազմական հայ հասարակության իրավիճակը, հիմնախնդիրները, մարտահրավերներն ու հնարավորությունները:

Զինված հակամարտությունների մասնակիցների և զոհերի հոգեբանական տրավմայի ուսումնասիրությունը մի շարք գիտությունների արդիական ոլորտներից է: Հոգեբանության, սոցիալական աշխատանքի ոլորտներում շեշտադրվում են զինված հակամարտությունների անմիջական մասնակիցների,

[17] Атанесян А. В. (2018) “Бархатная революция” в Армении: потенциал, достижения и риски политико-протестной активности // ПОЛИС (Политические исследования), N6, сс. 80-98. DOI: 10.17976/jpps/2018.06.06 URL: https://www.politstudies.ru/article/5463

[18] Աթանեսյան, Ա., Մկրտիչյան, Ա. (2021) Հայաստանյան հասարակությունը խաչմերուկում. արտաքին քաղաքական կողմնորոշումներ, առաջնահերթություններ և ընկալումներ: Սոցիոլոգիական հետազոտություն: Երևան, ԵՊՀ հրատ.:

ականատեսների և զոհերի հիմնախնդիրները, տրավմաները[19]: Սոցիոլոգիայում հետպատերազմյան հասարակություններն ուսումնասիրվում են կոլեկտիվ (սոցիալական, մշակութային) տրավմայի տեսանկյունից, այդ թվում՝ հիշողության մշակույթի առումով, որն ուղղված է պատմական իրադարձությունների, ներառյալ ռազմական, տրավմատիկ հետևանքների վերիմաստավորմանն ու հաղթահարմանը[20]: Հատկապես հին ազգերի պարագայում, ինչպիսին հայերս ենք, պատմական անցյալում տեղի ունեցած բազում իրադարձությունների մասին հիշողությունը համադրվում է յուրաքանչյուր նոր իրադարձության հետ՝ կա՛մ սրվելով, առաջ բերելով դրական հիշողություններ հաղթանակների մասին, կա՛մ՝ հակառակը, հիշողության առաջին պլան մղելով բացասական, տրավմատիկ հիշողություններ կրած դժվարությունների, պարտությունների մասին:

Ըստ հայտնի գիտնական Ջ.Ալեքսանդրի՝ «Երևույթներն ինքնին տրավմատիկ չեն: Վնասվածքը սոցիալական վերագրվող հատկանիշ է»[21]: Սա նշանակում է, որ այս կամ այն երևույթի ազդեցությունը մարդկանց հանդեպ էապես կախված է մեր սպասումներից. եթե նախապես ձևավորված սպասումները դրական են, իսկ հետևանքները՝ անսպասելի և բացասական, ապա սա կարող է ստեղծել տրավմատիկ ապրումներ: Այնուամենայնիվ, կոլեկտիվ տրավմայի ըմբռնումը որպես սուբյեկտիվորեն կառուցված, կոլեկտիվ ընկալում, առանց բավարար օբյեկտիվ պատճառների, ճիշտ չենք համարում: Պատմության ընթացքում տեղի ունեցած բազում երևույթներ օբյեկտիվորեն բացասական են, տրավմատիկ՝ անկախ նրանից, թե ինչպես դրանք ընկալենք. օրինակ՝ ցեղասպանությունն ինքնին այնպիսի զանգվածային և միտումնավոր իրականացվող ոճռագործություն է, որը չի կարելի վերագրել միայն սուբյեկտիվ զգացմունքներին և ապրումներին: Միևնույն ժամանակ, կոլեկտիվ տրավմայի ընդունումը այն հաղթահարելու համար անհրաժեշտ գործողությունների ձեռնարկման սկիզբն է: Հակառակ պարագայում, խոսելով այն մասին, թե այն, ինչ կատարվել է, իրականում տեղի չի ունեցել և չի ազդել, նշանակում է՝ փախչել իրականությունից և հետաձգել անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը. «Մշակութային տրավմայի կառուցման միջոցով սոցիալական խմբերը, ազգային համայնքները և

[19] Markosian C, Layne CM, Petrosyan V, Shekherdimian S, Kennedy CA, Khachadourian V. (2022) War in the COVID-19 era: Mental health concerns in Armenia and Nagorno-Karabakh. International Journal of Social Psychiatry. No. 68(3): 481-483. DOI:10.1177/00207640211003940
[20] Eyerman, Ronald. (2019). Introduction: Identity, Memory, and Trauma. Palgrave Macmillan
[21] Alexander J. C. (2012) *Trauma: A Social Theory*. Cambridge & Malden: Polity, p. 13.

երբեմն նույնիսկ ամբողջ քաղաքակրթությունները ոչ միայն ճանաչում են մարդկային տառապանքների առկայությունը և աղբյուրները, այլև պատասխանատվություն են ստանձնում դրանց հանդեպ քայլեր ձեռնարկելու համար[22]:

Ըստ Պ. Ծտոմպկայի, իրադարձությունները, երևույթներն ու գործընթացները կարող են տրավմատիկ լինել՝ առաջացնել կոլեկտիվ տրավմա, եթե դրանք միաժամանակ համապատասխանում են հետևյալ բնութագրիչների. առաջ են գալիս հանկարծակիորեն, համապարփակ բնույթ են կրում, ազդում են հասարակության բոլոր ներկայացուցիչների վրա, խորն են և հիմնարար, ներառում են պետության և հասարակության կյանքի բոլոր հիմնական բնագավառները[23]:

Ընդհանուր առմամբ՝ հետպատերազմական հասարակություններում առկա տրամադրությունները հասկանալու համար պետք է համադրել օբյեկտիվ իրադարձությունների հետևանքների մասին պատկերացումները հասարակության մեջ առկա ընկալումների, զգացմունքների, ապրումների հետ:

Ճգնաժամային և հետճգնաժամային հասարակություններում կոլեկտիվ տրավմայի առկայությունը թույլ է տալիս այդ հասարակությունները դիտարկելու որպես «տրավմայի հասարակություն»[24]: Այս հայեցակարգն ինքնին հստակեցման կարիք ունի. «տրավմայի հասարակություն» ասելով՝ ստեղծում ենք հասարակության անդամների հանդեպ այնպիսի ներազդում, որը միշտ չէ որ դրդում է մարդկանց դեպի բացասական երևույթների հաղթահարում, կամքի և ջանքերի գործադրում: Հավանական է, որ «տրավմայի հասարակություն» բնութագրումը մարդկանց պիտակավորի, ճնշի, թույլ չտա վերականգնվել: Ինչպես առողջապահության ոլորտում՝ այնպես էլ տվյալ դեպքում մարդկանց մի մասը, լսելով, որ հիվանդ է, ոչ թե սկսում է առողջանալուն ուղղված ջանքեր գործադրել, այլ, հակառակը, խուճապի է մատնվում, թուլանում և պասիվանում է: Մարդկանց մի մասին հնարավոր է դրդել ակտիվության և վերականգնման՝ ոչ թե օբյեկտիվորեն ախտորոշելով իրենց հիմնախնդիրը, այլ, հակառակը, ոգեշնչելով, նշելով իրենց արժանիքները, գովելով: Այդպիսին է նաև հայաստանյան

[22] Smelser N. J., Alexander J. C., Eyerman R., Giesen B., Sztompka P. (2004) *Cultural Trauma and Collective Identity*. Berkeley: University of California Press, p. 1.
[23] Նույն տեղում, էջ 158-159:
[24] *Волков Ю. Г.* Общество травмы: поиск пути исцеления (приглашение к дискуссии) // Социологические исследования. 2020. № 9. С. 16-27.
DOI 10.31857/S013216250009344-1

հասարակության մի զգալի մասը, ովքեր նախընտրում են լսել գովեստի խոսքեր, և ոչ թե՝ քննադատություն:

Այդ իսկ պատճառով հասարակության աշխորոշմանը պետք է հետևեն այնպիսի մոտեցումներ, որոնք համահունչ են մարդկանց ընկալողականությանը, և հասցեական են: Այսպես, եթե խոսքը գնում է հետպատերազմական հայ հասարակության մեջ, օրինակ, կանանց ներուժի օգտագործման, իրենց մեջ առաջնորդական հատկությունների զարգացման և կիրառման մասին, ապա այս թիրախային խմբի մի մասին կարող է մոբիլիզացնել իրենց ստացած տրավման, մյուսներին՝ հակառակը, ոգևշնչող, պատմական անցյալից բերվող այնպիսի օրինակների մասին հիշատակում, որտեղ կանայք առաջնորդել են, ցուցադրել քաջության, իմաստության, կազմակերպական կարողություններ, ռազմավարական պլանավորման ձիրք, և այլն:

Այնուամենայնիվ, հետպատերազմական արդի հայաստանյան հասարակությանը հատուկ են այնպիսի դրսևորումներ, որոնք նշվում են հեղինակների կողմից և բնութագրական են «տրավմատիկ հասարակության» համար.

- զարգացման հստակ ռազմավարության բացակայություն,
- տնտեսական դեգրադացիա,
- ստեղծարար սոցիալական ուժերի բացակայություն,
- քաղաքական և տնտեսական վերնախավերի սերտաճածություն,
- բնակչության մեծամասնության ինքնակամ, ինչպես նաև հարկադիր բացառում քաղաքական կյանքից,
- պետական գաղափարախոսության և/կամ ազգային գաղափարի բացակայություն,
- ազգային շահերի կա՛մ անտեսում, կա՛մ՝ բացարձակայնացում,
- խորացող սոցիալական անհավասարություն,
- պետության պատմության, անցյալի հանդեպ անհարգալից վերաբերմունք և այն նորովի ընկալելու, փոփոխելու ակտիվ ջանքեր, կամ, հակառակը, միայն անցյալով ապրելու միտում»[25]:

Նմանատիպ հատկանիշներ կարող են բնորոշ լինել հետպատերազմյան հասարակություններին, հատկապես նրանց, որոնք պարտություն են կրել: Այդ

[25] *Макаров Т.* Общество травмы: между эволюцией и революцией (круглый стол) // Социологические исследования. 2019. № 6. С. 3-14. DOI 10.31857/S013216250005477-7

դրսևորումները ճանաչելի են նաև՝ արդի հայաստանյան հասարակության դիտարկման առումով:

«Տրավմայի հասարակությունն» ունի ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին պատճառներ. անպայման չէ, որ հասարակությունն ապրի պատերազմական և հետպատերազմական փուլում, կրի պարտություն պատերազմում, և այլն: Պետության ներքին տևական անկայունությունը նույնպես կարող է ներազդել հասարակական բացասական տրամադրությունների, ապագայի հանդեպ անորոշության զգացման, հոռետեսության, քաղաքական նիհիլիզմի և այլ բացասական երևույթների տարածման վրա: Հասարակության մեջ տրավմատիկ ապրումներին նպաստող ներքին երևույթներից են.

- քաղաքական իշխանության անկայունությունը, այդ թվում՝ երբ քաղաքական վերնախավը ներկայացնում է առանձին քաղաքական խմբերի շահերը, որոնց գլխավոր նպատակն է՝ ամեն գնով ստանալ և պահել իշխանություն,
- ժողովուրդի հեռացվածությունը քաղաքականության վրա ազդելու լծակներից, երբ մարդիկ չեն կարող կանխորոշել ոչ միայն երկրի, այլ անգամ իրենց և իրենց ընտանիքների ապագան,
- «տրավմատիկ» հասարակություններում չկան հստակ գաղափարական մոտեցումներ, որոնք կմարմնավորվեին պետական գաղափարախոսության մեջ: Դրանց բացակայությունը հանգեցնում է հասարակական գիտակցության շփոթվածության, կյանքի հստակ ուղեցույցների կորստի, հասարակական գիտակցության վրա պատահական և բացասական ազդեցությունների: Հասարակական գիտակցության մեջ բացասական տրամադրությունների, շփոթվածության, հիասթափության տարածմանը նպաստում են էլիտաների կողմից այնպիսի կարգախոսների շրջանառումներ, ինչպիսիք են ազատությունը, անկախությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, եթե այդ ամենը իրականությանը չի համապատասխանում,

- հասարակության սոցիալական տրավմային նպաստող ներքին գործոններից է ընկիմության բացակայությունը, կամ դրա պայմանական, զուտ սիմվոլիկ, ցուցադրական բնույթը[26]:

Ճգնաժամային իրավիճակներում «մարդիկ ստիպված են մշտապես անդրադառնալ տրավմատիկ փոփոխություններին՝ վերանայելով իրենց արժեքները: Այստեղ կարելի է առանձնացնել նաև հետևյալ դրսևորումները, որոնք շատ տիպիկ են նաև հետպատերազմական հայ հասարակության մեջ տարածված տրամադրությունների համար.

1. անվստահության զարգացում: Դրական սպասումներից և լավատեսությունից հետո ի հայտ է գալիս «հաջորդ առավոտվա սինդրոմը», որը դրսևորվում է պետական ինստիտուտների նկատմամբ վստահության անդադար նվազմամբ,
2. ապագայի մռայլ ընկալման տարածում, որը դրսևորվում է վախերով ու անհանգստությամբ,
3. անցյալի հանդեպ նոստալգիկ պատկերացումներով. մարդիկ կարծում են և խոսում այն մասին, որ, օրինակ՝ “Սովետը լավ էր”,
4. քաղաքական ապատիայի, ընտրություններում արժանի թեկնածուների բացակայության և քաղաքացիական նախաձեռնությունների անարդյունավետության դրսևորումներով,
5. անցյալի վերաիմաստավորմամբ:[27]

Ինչպես գրում է Կրավչենկոն, «ժամանակի ընթացքում տրավման մտնում է «բուժման» փուլ, որն արտահայտվում է ժողովրդավարության ինստիտուտների, շուկայի, եկեղեցու նկատմամբ հասարակության վստահության աճով. ձևավորվում է «մշակութային նոր կոնսոլիդացիա»[28]:

Իհարկե, պատերազմում և ընդհանրապես հակամարտություններում հաղթանակը օգնում է հաղթահարել հետկոնֆլիկտային, այդ թվում՝ սոցիալ-հոգեբանական, տնտեսական և կենցաղային խնդիրները, մինչդեռ ռազմական պարտություններն ավելի են խորացնում նման տրավմաները:

---

[26] Тощенко Ж.Т. Общество травмы: между эволюцией и революцией (опыт теоретического и эмпирического анализа). Москва: Весь Мир, 2019.
[27] *Кравченко С. А.* Социологические теории травмы: дискурс в современной теоретической социологии // Социологические исследования. 2020. № 4. С.60-69.
DOI 10.31857/S013216250009131-7, с. 62.
[28] Նույն տեղում:

Համապատասխանաբար, պատերազմում պարտված հասարակություններում սոցիալական գործընթացների, փոփոխությունների, ընկալումների, վախերի և սպասումների ծանրությունը կարող է թեթևացվել ավելի երկար ժամանակահատվածներում:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ հետպատերազմյան հասարակությունները ընտրում էին տնտեսության և սոցիալական հարաբերությունների արդիականացման ուղին արդյունաբերականացման, մարդու իրավունքների ապահովման և կոլեկտիվ կարգապահության միջոցով: Օրինակ՝ համացանցում կամ հեռուստատեսությամբ ցուցադրվել են վավերագրական հոլովակներ Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիայի մասին, որոնցում ցուցադրվում է, թե ինչպես կոլեկտիվ տրավմայում գտնվող, իրենց առաջնորդների կողմից ներշնչված և ոգևորված, ապա՝ կործանված, հիասթափված, հյուծված հասարակության անդամները մաքրում են իրենց փողոցները շենքերի պլատակներից, կազմակերպված հերթ կանգնում անվճար սննդի համար, ցուցաբերում կարգապահություն: Կա կարծիք, որ նման իրավիճակներում հայտնված հասարակություններում հետպատերազմյան տրավմայից ելքը ներհամակարգային թերությունների ակտիվ հավաքական հաղթահարման մեջ է[29]:

Միևնույն ժամանակ, արդյո՞ք «տրավմայի հասարակությունը» կարող է ինքնուրույն վերականգնվել և արդիականանալ զգալի տնտեսական և ռազմաքաղաքական կորուստներից հետո. սա դեռևս բաց հարց է: Պատմական փորձը վկայում է այն մասին, որ «տրավմայի հասարակությունների» ներքին ռեսուրսի մոբիլիզացման հետ մեկտեղ՝ հետպատերազմական հասարակությունների մի մասին զգալի օժանդակություն է ցուցաբերվել այլ պետությունների կողմից: Օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիային և Արևմտյան Եվրոպայի այլ պետություններին վերականգնելու համար ԱՄՆ կողմից ստեղծվել էր Մարշալի պլանը, որը նաև ապահովել է Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ մշտական ռազմաքաղաքական ներկայությունը[30]: Սա նշանակում է, որ, մասնավորապես, 2020թ. 44-օրյա պատերազմում պարտությունից հետո

[29] *Макаров Т.* Общество травмы: между эволюцией и революцией (круглый стол) // Социологические исследования. 2019. № 6. С. 3-14. DOI 10.31857/S013216250005477-7; Barakat S., Zyck S. A. (2009) The Evolution of Post-Conflict Recovery. Third World Quarterly. No. 30(6): 1069–1086.

[30] Dobbins J., Poole M. A., Long A., Runkle B. (2008) Post–World War II Nation-Building: Germany and Japan. After the War: Nation-Building from FDR to George W. Bush RAND Corporation: 11–36.

հայաստանյան հասարակությունից ինքնուրույն վերականգնման ակնկալումը՝ առանց կողմնակի միջամտության, կարող է չհամապատասխանել իրականությանն ու հասարակության օբյեկտիվ հնարավորություններին, անգամ եթե դրանք ամբողջությամբ օգտագործվեն:

Առանձին հետազոտություններ նվիրված են հետպատերազմյան հասարակությունների վերականգնման հիմնախնդիրներում կանանց դերակատարմանը: Դրանց էական մասում կանայք դիտվում են որպես ռազմական գործողությունների, դրանք ուղեկցող ֆիզիկական և հոգեբանական բռնությունների զոհը: Համապատասխանաբար, քննարկվում է հետպատերազմական պետությունների փորձը՝ վերականգնելու կանանց ֆիզիկական և հոգեբանական առողջությունը, ապահովելու տնտեսական ակտիվության հնարավորություններով, օգտագործելու կանանց ներուժն ու ռեսուրսները՝ ի նպաստ հասարակության վերականգնմանը[31]: Այդ նպատակին են ծառայել, մասնավորապես, ՄԱԿ-ի ծրագրերը հետպատերազմական գոտիներում[32]:

Հատկանշական է հետպատերազմական հասարակություններում կանանց հատուկ կարիքների առկայությունը, որոնց դուրսբերման և ապահովման մոտեցումները կապված են միջազգային և տեղական իրավաքաղաքական մոտեցումների, ռեսուրսների, այդ ուղղությամբ տարվող ջանքերի հետ[33]: Միևնույն ժամանակ, հակամարտությունների և հետպատերազմական հասարակությունների վերականգնման պայմաններում կանանց հատուկ կարիքների մասին խոսելը կանանց դիտարկում է որպես առավել խոցելի խումն, ինչը կարող է կանխարգելել կանանց դիտարկմանը որպես այդպիսի հասարակությունների հնարավոր և իրական առաջնորդների: Այս իմաստով տեսական և սոցիալ-քաղաքական մոտեցումների մի մասը կանանց

[31] Տե՛ս, օրինակ. Sørensen, B. (1998). Women and Post-Conflict Reconstruction: Issues and Sources. Social Change. 29. 10.1177/004908579902900423. URL: https://www.files.ethz.ch/isn/38684/WS-OP%2003.pdf; Nordenving, S., Rogall, T., Zarate-Barrera, T. (2025). Women's Empowerment and Post-Conflict Recovery after Mass Killings. In: Presented at the ESOC Annual Meeting. URL: https://viewsforecasting.org/wp-content/uploads/Womens_empowerment_postconflict_recovery.pdf

[32] Ryan, C. (2020) Women, Peace and Security: Women's Post-War Economic Empowerment, Joint Brief Series: New Insights on Women, Peace and Security (WPS) for the Next Decade, Stockholm: Folke Bernadotte Academy, PRIO and UN Women. URL: https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2020/New-insights-on-WPS-Womens-post-war-economic-empowerment-en.pdf

[33] Տե՛ս, օրինակ. Naomi, C. (2006). Women in Post-Conflict Reconstruction: Dilemmas and Directions, 12 Wm. & Mary J. Women & L. 335. URL: https://scholarship.law.gwu.edu/cgi/viewcontent.cgi?params=/context/faculty_publications/article/1367/&path_info=Women_in_Post_conflict.pdf

առաջնորդական կարողությունների զարգացման համար նպաստավոր չէ, այլև, հակառակը, ամրապնդում է կանանց՝ որպես “թույլ սեռի” մասին տարածված ստիգման:

Համապատասխանաբար, ավելի արդյունավետ ենք համարում այն հետազոտությունները, մոտեցումները և ծրագրերը, որոնք ուղղված են հետկոնֆլիկտային հասարակություններում կանանց առաջնորդական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, կանանց քաղաքական մասնակցության և դերակատարման սատարմանը, իրենց գիտելիքների, կարողությունների, ներգրավվածության զարգացմանը[34]:

Հատկանշական է հետպատերազմական հասարակություններում կանանց կողմից կանանց սատարման նպատակով հասարակական կազմակերպությունների ստեղծման և ծրագրերի իրականացման փորձը[35], որը կարող է ոչ միայն օգտակար լինել Հայաստանի համար, այլև հայաստանյան հասարակության մեջ ունենալ իր նախատիպերն ու ազգային օրինակները:

2.3. Հետպատերազմյան հայ հասարակությունում տրավմատիկ երևույթների դրսևորումներ և հաղթահարման հնարավորություններ կանանց առաջնորդական ներուժի խթանմամբ

Ներկայիս հայ հասարակությունում տեղի ունեցած փոխակերպումները, առաջին հերթին՝ 2020թ-ի 44-օրյա պատերազմում կրած պարտությունն ու տված կորուստները, ապա՝ 2023թ-ի աշնանը Արցախի բռնի հայաթափումը, արցախցիների ներգաղթը ՀՀ, դրանով պայմանավորված սոցիալ-հոգեբանական, տնտեսական, կենցաղային դժվարությունները, ինչպես նաև ընդհանուր հիասթափվածությունը իշխանության գործելակերպից հետհեղափոխական փուլում, բերեցին կոլեկտիվ տրավմայի դրսևորումներին: Ինչպես արդեն նշվեց, ճգնաժամային փուլերում հասարակությունները հակված են հիշելու իրենց անցյալը՝ դրանում փնտրելով ներկայիս դժվարությունների պատճառները: Այսպես

[34] Տե՛ս, օրինակ. Advancing Women’s Participation in Post-Conflict Reconstruction. Permanent Mission of the UAE to the UN 2020. https://giwps.georgetown.edu/wp-content/uploads/2020/11/Advancing-Women%E2%80%99s-Participation-in-Post-conflict-Reconstruction.pdf

[35] Rugamba, D., & Gitahi, N. (2023). Women Empowerment and Post-Conflict Reconstruction: Women for Women NGO in Rwanda. *Journal of Public Policy & Governance*, *7*(3), 54–64. https://doi.org/10.53819/81018102t2242

նաև պաշտոնական քննարկումներում մշտապես արվում է “նախկինների”՝ նախկին իշխանությունների մասին հիշատակում՝ որպես ներկայիս հիմնախնդիրների պատճառի: Ընդհանուր բացասական ընկալումների խորացմանը նպաստում է նաև անցյալում հայ ժողովրդի՝ զոհի դերում լինելը, որը գումարվում է մերօրյա ապրումներին. «տրավմայի հասարակության» բնութագրիչները հայ հասարակության մեջ ունեն պատմական նշանակալից նախադրյալներ, մասնավորապես, 1915 թվականի ցեղասպանությունից հետո չլուծված կոլեկտիվ տրավմայի («միջսերնդային մշակութային տրավմա») պատճառով[36]: Թուրքիայի կողմից Ցեղասպանության փաստի չճանաչումը մեզ թույլ չտվեց վերջ տալ անցյալ դարի պատմական իրադարձությունների ողբերգական և դրամատիկ ընկալմանը ողջ հայ ժողովրդի, այդ թվում՝ սփյուռքի համար. Պատմության տրավմատիկ փորձը պարբերաբար «թարմացվում» էր այնպիսի իրադարձություններով, ինչպիսիք են Թուրքիայում հայ լրագրող Հրանտ Դինքի սպանությունը, Թուրքիայի կողմից Ադրբեջանի հայատյաց քաղաքականության սատարումը[37], ապա՝ բուն 44-օրյա պատերազմը: Փաստացի նկատելի են այն բոլոր հատկանիշները, որոնք, ըստ Պ. Շտոմպկայի արդեն քննարկված մոտեցման, բնութագրական են կոլեկտիվ տրավմայի համար. ներկայիս իրավիճակի առաջացման հանկարծակիությունը, հասարակության ներկայացուցիչների մեծամասնության համար անակնկալ լինելը և բոլորի վրա ազդելը, հետևանքների խորությունն ու հիմնարարությունը:

Փաստորեն, 2020թ-ի 44-օրյա պատերազմում հայկական կողմի պարտության մասին պետք է խոսել ոչ այնքան որպես նոր տրավմայի, այլ որպես հնի ակտուալացման, սրման: Հետպատերազմյան փուլում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունները դուրս են բերում բնակչության մոտ անհանգստության, ապատիայի, անորոշության, հուսահատության և լքվածության, դեպրեսիայի, զայրույթի և խորը հիասթափության զգացմունքներ և ապրումներ: 2020թ. պատերազմում հայ հասարակությունը հերթական անգամ ցուցաբերեց զանգվածային հայրենասիրություն և անձնազոհություն, սակայն դա չհանգեցրեց հաջողության, ինչն էլ ավելի է խորացնում վերոնշյալ զգացումները:

[36] Karenian H, Livaditis M, Karenian S, Zafiriadis K, Bochtsou V, Xenitidis K. (2011) Collective Trauma Transmission and Traumatic Reactions Among Descendants of Armenian Refugees. International Journal of Social Psychiatry. No. 57(4): 327-337. DOI:10.1177/0020764009354840; Mangassarian S. L. (2016) 100 Years of Trauma: The Armenian Genocide and Intergenerational Cultural Trauma. Journal of Aggression, Maltreatment & Trauma. No. 25(4): 371-381. DOI: 10.1080/10926771.2015.1121191.
[37] Eyerman, Ronald. (2019). Introduction: Identity, Memory, and Trauma. Palgrave Macmillan, p. 14.

Հանրային կարծիքում նկատելի է նաև ապագայի հանդեպ որոշակի լավատեսություն, որը հայաստանցիները կապում են հայրենասեր, լուսավոր, որակյալ կրթություն ստացող և ազգային արժեքներով առաջնորդվող հայ երիտասարդության հետ, ինչպես նաև մտավորականության (օրինակ՝ գիտնականների, հոգևորականների) հետ, ում մասնակցությունը պետության կառավարմանը խիստ արդիական է համարվում: Հայ հասարակության ներկայացուցիչների ընկալումներում և կողմնորոշումներում կարելի է տեսնել ինքնատիրապետման ներքին մեխանիզմներ, այդ թվում՝ սոցիալապես օգտակար գործունեություն իրականացնելու, երեխաների և երիտասարդների հայանպաստ դաստիարակման, փոխօգնության միջոցով: Հայաստանցիները մեծամասամբ չեն հավատում արտաքին ուժերի մասնակցությանը և աջակցությանը. հասարակությունը կարող է օգնել միայն ինքն իրեն[38]:

Այս իմաստով արդիական է դառնում մեր պատմական փորձը՝ հաղթահարելու այն տրավմատիկ երևույթներն ու գործընթացները, որոնց բախվել էինք նախկինում, հասարակության բոլոր ներկայացուցիչների, այդ թվում՝ կանանց ջանքերով: Ղարաբաղյան հակամարտության առաջին փուլը համընկել էր Հայաստանի Հանրապետության ձևավորման, պետական մարմինների ստեղծման, բանակաշինության սկզբի հետ: Այդ պահից ի վեր վերականգնվել էր հայոց բանակի պատմությունը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի, պատերազմներին մասնակցության անցյալի պատմական հիշողությունը, որի շարունակությունն էր ՀՀ արդի գործընթացների նախաձեռնումն ու իրականացումը:

Շարունակելով պատմական անցյալում հայ կանանց՝ պետության, հասարակության, հայկական համայնքներում և ընտանիքներում ունեցած ներդրումն ու սխրանքների մասին պատմությունները, նորանկախ Հայաստանում ձեռնարկվեցին միջոցառումներ և կիրառվեցին մոտեցումներ, որոնց նպատակն էր՝ շարունակելու հանրային խնդիրների լուծման մեջ կանանց ներառվածությունը, աջակցելու կանանց առաջնորդական կարողությունների ձևավորմանն ու կիրառմանը, ապահովելու հայ հասարակության բոլոր բնագավառներում, պետական իշխանության մարմիններում, տնտեսության, քաղաքականության,

[38] Atanesyan A.V., Anikin V.A. “Society of Trauma”: Public Perceptions, Hopes and Fears in the Armenian Society After the Karabakh War. *Sotsiologicheskie issledovaniya [Sociological Studies].* 2024. No 12. P. 102-114

կառավարման, պաշտպանության և այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն ու հավասար հնարավորությունները:

Այդ գործընթացներում իրենց ուրույն դերակատարումն են ունեցել և ունենում պետական իշխանության մարմինները, կրթական հաստատությունները, քաղհասարակության կազմակերպությունները, միջազգային կազմակերպություն-ները, կանանց նախաձեռնությունները: Այսպես, 2013-ից Երևանի պետական համալսարանում գործում է Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը[39], որի աջակցությամբ իրականացվել են բազում ծրագրեր՝ նվիրված տարբեր ոլորտներում կանանց առաջնորդության սատարմանը:

«Հանուն հավասար իրավունքների» հասարակական կազմակերպությունն իրականացրել է դասընթացների շարք՝ «Կանանց առաջնորդության ակադեմիա» խորագրով[40], իսկ «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ն տարիներ շարունակ տրամադրել է խորհրդատվություն կանանց և աղջիկների համար, պաշտպանել իրենց իրավունքները, իրականացրել մի շարք հանրային միջոցառումներ[41], որոնք միշտ չէ որ ստացել են հասարակության դրական արձագանքն ու աջակցությունը, այդ թվում՝ ազգային արժեքներին չհամապատասխանելու պատճառով:

Կանանց՝ անվտանգության և պաշտպանության ոլորտում մասնակցելու, այդ թվում՝ առաջնորդական դերակատարում ունենալու հիմնախնդիրը քննարկվել է բանակաշինության գործընթացի սկզբից ի վեր, և նույնպես հաճախ հանդիպել բացասական վերաբերմունքի, այդ թվում՝ ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց կողմից: Չնայած բազում պատմական փաստերի և հիշատակումների, այդ թվում՝ ղարաբաղյան առաջին պատերազմից այն մասին, թե ինչպես են հայ կանայք ծառայել զինված ստորաբաժանումներում, պաշտպանել իրենց ընտանիքները, համայնքներն ու երկիրը, այնուամենայնիվ կար և շարունակում է տարածված լինել այն մոտեցումը, որ կանայք անվտանգային-պաշտպանական ոլորտում պետք է կատարեն ավելի սահմանափակ գործառույթներ և բոլոր հնարավորությունների պարագայում զերծ պահվեն ուղիղ մարտական

[39] http://www.old.ysu.am/gender/hy/1383045644
[40] https://forequalrights.org/projects/%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B6%D6%81-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%B6%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A4%D5%A5%D5%B4%D5%AB%D5%A1/
[41] https://womenofarmenia.org/

գործողություններին մասնակցելուց.այդ մոտեցումը կիրառվում է նաև բազում առաջատար երկրներում, այդ թվում՝ Իսրաելում:[42]

Այս ոլորտում մտածողության ու ընկալումների փոփոխության համար հիմք դրվեց 2000 թ-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի ընդունմամը: Այս բանաձևը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված առաջին փաստաթուղթն է, որն ինստիտուտցիոնալ մոտեցումներով անդրադարձ է կատարում **կանանց վրա զինված հակամարտությունների ազդեցության, զինված հակամարտությունների լուծման գործընթացին կանանց ներգրավման և խաղաղաշինության գործընթացին նրանց մասնակցության հարցերին**: Այն վերահաստատում է հակամարտությունների լուծմանը, խաղաղ կարգավորման բանակցություններին, խաղաղապահության, խաղաղաշինության, մարդասիրական այլ առաքելություններին, հետկոնֆլիտային շրջանում վերականգնողական գործողություններին կանանց իրավահավասար և ամբողջ ծավալով ներգրավման կարևորությունը և անդամ-պետություններին կոչ է անում քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ[43]:

ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձևի կարևորությունն այն է, որ, չունենալով իրավաբանորեն պարտադրող բնույթ (հանդիսանալով ՄԱԿ-ի Կանոնադրության 6-րդ՝ «Վեճերի խաղաղ կարգավորումը» գլխի շրջանակում ընդունված փաստաթուղթ), և պարտադրող մեխանիզմներ, այնուամենայնիվ աստիճանաբար ձեռք է բերել «կամավոր-պարտադիր» կատարման ենթակա փաստաթղթի հատկանիշներ մի քանի պատճառներով: Նախ, ՄԱԿ-ի մասնագիտացված կառույցների թիրախային աշխատանքի արդյունքում 1325 բանաձևի դրույթներն ինկորպորացվել են ոչ միայն ՄԱԿ-ի համակարգի մեջ մտնող մարմինների աշխատանքային փաստաթղթերում, այլ էականորեն ընդլայնել են իրենց շրջանակը և տարբեր ձևաչափերով լայն կիրառականություն են ձեռք բերել այլ միջազգային կազմակերպությունների (ՆԱՏՕ, ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ և այլն) աշխատանքային օրակարգերում: Բացի այդ, տարբեր միջազգային կազմակերպությունների շրջանակում ստեղծվել են մշտական կամ ժամանակավոր հենքի վրա գործող մասնագիտացված կառույցներ, խորհրդատվական և/կամ

[42] Աթանեսյան, Ա.Վ., Ավետիսյան, Ա.Ռ, Սավթալյան, Ա.Մ. (2022) Կանայք զինված ուժերում: ՀՀ Պաշտպանության նախարարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ իրականացված հետազոտությունների արդյունքների ամփոփ ժողովածու: Ե., Անտարես:

[43] https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/WPS%20SRES1325%20.pdf

աշխատանքային խմբեր, որոնք պարբերաբար զեկույցներ են պատրաստում անդամ-պետությունների կողմից այս ուղղությամբ պարտավորությունների կատարման վերաբերյալ, տալիս են առաջարկություններ և մշակում վերահսկման մեխանիզմներ, իրազեկվածության բարձրացման միջոցառումներ և այլն: Օրինակ՝ ՆԱՏՕ-ի հովանու ներքո իրականացվող ծրագրերում խրախուսվում է երկրների կողմից 1325 բանաձևի իրագործման «Ազգային գործողությունների ծրագրի» (National Action Plan - NAP) ընդունումը: Բանաձի պահանջների կատարումն աստիճանաբար ներառվում է նաև երկրների «Անվտանգության ոլորտի բարեփոխումներ» (Security Sector Reform) ձևաչափում իրականացվող աշխատանքներում:

Եթե փորձենք կանոնակարգել և խմբավորել 1325 բանաձևի պահանջները, ապա դրանք հիմնականում հետևյալ ուղվածությունն ունեն.

1. իրավունքների երաշխավորում և պաշտպանություն հատկապես հակամարտությունների շրջանակում,
2. որոշումների կայացմանը և գործողություններին մասնակցության երաշխավորում,
3. իրազեկման բարձրացում և վարժանքների անցկացում, այդ թվում՝ խաղաղության աջակցության առաքելությունների և հետկոնֆլիտային գործընթացների շրջանակում:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ պաշտպանական բարեփոխումների օրակարգում բավականին երկար ժամանակ ընդգրկված է ՀՀ պաշտպանության համակարգում կանանց իրավունքների պաշտպանության և կարողությունների ճիշտ գնահատման ու արդյունավետ կիրառման հարցը, որը, պետք է փաստել, արդեն իսկ որոշակի գործնական արդյունքներ է տալիս: Դրա ակնառու վկայությունը ռազմաուսումնական հաստատություններում տարեցտարի ավելացող իգական սեռի կուրսանտների քանակն է: 2012-2013թթ.սկսված այս գործընթացի արդյունքում արդեն 2016թ. նրանց թիվը ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում հասնում է մոտ 2 տասնյակի և հարաբերականորեն կայուն թիվ է դարձել: Սա զինված ուժերում զինվորական գործի մասնագետ հանդիսացող կին զինծառայողների թվակազմի աճի և նրանց ներգրավմանն ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլ էր:

Այս ուղղությամբ աշխատանքների համակարգման հարցում կարևոր նշանակություն ունեցավ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ պաշտպանական գերատեսչության համագործակցության ծրագրի մշակումը: 2014 թ-ից սկիզբ առած

այս գործընթացի շրջանակում տրամաբանական հաջորդականությամբ իրականացվեցին առկա վիճակի վերլուծության, հասարակական կարծիքի բացահայտման, կազմակերպչական և սոցիալ-իրավական խնդիրների հայտնաբերման և վերջապես դրանց լուծման ուղղված ծրագրեր, որոնց իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին նաև քաղաքացիական հասարակության, ակադեմիական-փորձագիտական հանրույթի ներկայացուցիչներ[44]:

Պաշտպանության բնագավառում կանանց դերի հստակեցման, իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ ՊՆ և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի միջև համագործակցության ծրագրի շրջանակում մշակված և 2016թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում կանանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման ուղեցույցը» իր գործողությունների ծրագրով: Այս փաստաթղթի ընդունմամբ հստակ սահմանվեցին բարեփոխումների ուղղությունները, նշվեցին կատարման համար պատասխանատու ստորաբաժանումները և ժամկետները[45]:

Հետպատերազմյան փուլում ՀՀ ԶՈՒ համակազմում կին կուրսանտների և սպաների սոցիալական հարմարման, զինծառայությունն անցնելու դրդապատճառներին, ապագայի վերաբերյալ պատկերացումներին է նվիրված 2022թ-ին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ իրականացված հետազոտությունը, որի շրջանակներում բացահայտվեցին կանանց ռազմական ուսման առավելությունները, հնարավորությունները, ինչպես նաև բարեփոխումների անհրաժեշտ ուղղությունները: Հետազոտությունը դուրս բերեց նաև հիմնականում տղամարդ սպաների շրջանակում առկա կարծրատիպեր՝ կանանց զինծառայության սահմանափակումների վերաբերյալ, որոնք ակտիվորեն հերթվում են կանանց կողմից իրենց ուսման և զինծառայության ընթացքում[46]:

Հետպատերազմական, ճգնաժամային վիճակում հայտնված հասարակություններում կանանց դերակատարման և անվտանգային ոլորտներում

---

[44] Այդ ծրագրերին փորձագիտական մասնակցություն է ունեցել սույն զեկույցի հեղինակ Ա. Աթանեսյանը:

[45] Այդ մասին տե՛ս՝ Ավետիսյան, Ա.Ռ., Աթանեսյան, Ա.Ա. (2016) Կինը և բանակը. Հիմնախնդիրներ, մարտահրավերներ և հնարավորություններ: Ե., ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ:

[46] Աթանեսյան, Ա.Վ., Ավետիսյան, Ա.Ռ, Սավթալյան, Ա.Մ. (2022) Կանայք զինված ուժերում: ՀՀ Պաշտպանության նախարարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ իրականացված հետազոտությունների արդյունքների ամփոփ ժողովածու: Ե., Անտարես:

մասնակցության հիմնահարցի դաշտային հետազոտման են նվիրված 2022թ. հոկտեմբեր - 2023թ.մարտ ամիսներին **OxYGen Foundation-ի կողմից** ՀՀ երեք մարզերում՝ Տավուշում, Վայոց Ձորում և Սյունիքում իրականացված ֆոկուս-խմբային քննարկումները կանանց հետ, ինչպես նաև տեղեկատվական բնույթի միջոցառումները: Ինչպես նախորդ հետազոտությունը, այնպես էլ այս ուսումնասիրությունը դուրս բերեց համայնքներում առկա այն կարծրատիպերը (այդ թվում՝ կանանց կողմից իրենց վերագրվող ինքնակարծրատիպերը), որոնք ձևավորվել են հասարակության կենսակերպի ընթացքում և վերաբերում են անվտանգային տիրույթում կանանց մասնակցությանը:[47]

Այսպիսով՝ հետպատերազմյան փուլում հայաստանյան հասարակության մտավախությունները, ապագայի վերաբերյալ պլանները, անվտանգային պատկերացումները, հույզերը, վերաբերմունքը պետության վերականգնման և զարգացման գործում սեփական ներդրման, անհրաժեշտ գործողությունների, մասնավորապես՝ կանանց դերակատարման վերաբերյալ պարզելու համար ուսումնասիրությունները պետք է մշտական, տևական բնույթ ունենան, և խիստ արդիական են:

[47] Research Report On Perspectives for Women's Participation in Security and Peace Processes in Armenia. OxYGen Foundation in partnership with WomenNet NGO and Mughdusyan Art Center. Yerevan, 2023. URL: https://oxygen.org.am/wp-content/uploads/2023/03/Research-Report-WEPS_ENG-05.03.2023-final.pdf

2. Կանանց ավանդական և ժամանակակից դերերը փոխակերպվող հայաստանյան հասարակությունում

2.1. Արժեքային փոխակերպումները հայաստանյան հասարակությունում

Հետխորհրդային փուլում տեղի ունեցած ժողովրդավարական գործընթացները, արևմտյան արժեքների տարածումը, պետության բացումը տուրիզմի, կրթական գործընթացների, միջազգային համագործակցության, տեղեկատվական գործընթացների և համացանցի միջոցով, բերեցին հայաստանյան հասարակության արժեքային համակարգի էական փոփոխությունների, հիմնականում՝ ավանդական արժեքներից և մոտեցումներից անցմանը դեպի արդիական, նորաձև, ազատական արժեքներ: Այս ամենը ունի նաև տարիքային պայմանավորվածություն. հասարակության ավելի երիտասարդ անդամներն արդիականացման կրողն են, մինչդեռ ավագ սերնդի ներկայացուցիչները՝ ավանդական արժեքների և մոտեցումների:

Մեր հետազոտության արդյունքում պարզվեց, որ Հայաստանի կանանց մոտ տարածված են և՛ ավանդական, և՛ արդիական, և՛ հիբրիդ մոտեցումներ ավանդական-ազգային, և արդիականացված-գլոբալ արժեքների վերաբերյալ, ընդորում՝ ավանդական արժեքներ կրողները հանդիպում են և՛ երիտասարդ, և՛ ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ, իսկ արդիականացված, ժամանակակից արժեքների հանդեպ ավագ սերնդի ներկայացուցիչներից շատերի վերաբերմունքը նույնքան դրական է, որքան՝ երիտասարդ աղջիկների:

Գրեթե բոլոր զրուցակիցների կողմից նշվում է ավանդական արժեքների կորուստը, փոխադարձ վստահության մակարդակի անկումը: Այդ մասին են խոսում բազում ռեսպոնդենտներ, ովքեր գտնում են, որ մարդու իրավունքների և ազատությունների ամրապնդումն ու պաշտպանությունը չպետք է իրականացվի՝ ի վնաս այլ մարդկանց, ընտանիքի, համայնքի և հասարակության միասնականության և համերաշխության:

«Կա նաև ազգային արժեքները մերժելու մոտեցում. ինքս այդ մոտեցումը չեմ ընդունում: Փոփոխություններն անհրաժեշտ են և օգտակար, սակայն, ամեն բան մերժելով չէ, որ պետք է լինի: Բաներ կան, որ մեր ազգի մեջ պետք է մնան: Դրանք են, որ մեզ պահում են: Պառակտվածությունը. այն ամուր ընկերությունը,

վստահությունը, որ նախկինում կար, այժմ վերանում է: Աչքիս առաջ այնպիսի ամուր հարաբերություններ են քանդվել, որ երբեք չէի պատկերացնի: Սա մեկ այլ մեծ ողբերգություն է, երբ այժմ փոքր բաներից կարող են միմյանց հետ ընդհարվել, լուրջ խնդիրների առաջ կանգնել, և այս ամենն ունի լուրջ ազդեցություն բոլորիս նյարդային համակարգի, հոգեբանության վրա: Շատ դյուրագրգիռ ենք դառնում» (Մարիամ, Կոտայքի մարզ):

Ռեսպոնդենտների մի մասը, ով ներկայացնում է խորհրդային սերնդի մտավորականությունը, նշում են, որ հետխորհրդային փուլում տեղի է ունեցել հոգևոր արժեքների համատարած անկում, բարոյական արժեքների կորուստ: Մարդիկ դարձել են անտարբեր, եսասեր, միմյանց չվստահող, ամեն ինչ քննադատող: Հայրենիքը իրենց ընկալումներում դարձել է նյութական մի բան՝ կորցրել հոգևոր արժեքը: Նշվում է, որ անգամ մտավոր գործունեությամբ զբաղվողները, որքեր պետք է ավելի սթրեսակայուն լինեին և մյուսներին առաջնորդեին, այժմ նույն հոգեբանական վիճակում են, ինչ բոլորը:

Համացանցի տարածվածությունը նպաստել է ոչ թե արժեքների, այլև հակարժեքների տարածմանը: Հատկապես վտանգավոր է համարվում խոսքի ազատության զանգվածային չարաշահումը սոցիալական ցանցերում, որի հետևանքով ատելության և բռնության խոսքն է տարածվել և քարոզվում:

«Ամբողջ օրը նստած են Ֆեյսբուքում, ինչ ասես գրում են, միմյանց հայհոյում, մտածում են՝ ոչ ոգ չի իմանա, թե ով է, անպատիժ կմնա այդ ամենը: Համացանցն ու խոսքի ազատությունը բերեցին արժեհամակարգի դեֆորմացիային: Սրան զուգահեռ՝ արժեքներ չեն տարածվում» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

«Շատ բան ծնողներից է գալիս: Երեխաներին արգելում են կրթվել, զարգանալ, բայց միևնույն ժամանակ, օրինակ՝ համացանցով հայհոյանքներ են նայում, կամ հեռուստատեսությամբ սերիալներ. դպրոցական երեխան կողքին նստած է՝ դա չի՞ ընդորինակի» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Շիրակի մարզ):

Փաստորեն, նկատելի է հակասություն. մի կողմից, կարևորվում և դրական է գնահատվում հայ հասարակության “ազատագրումը” ավանդույթներից, ավանդապաշտության հաղթահարումը, այդ թվում՝ կանանց ազատագրման

միջոցով, բայց մյուս կողմից, խոսվում է ազգային արժեքների, կոլեկտիվ արժեքների, համակեցության մոտեցումների անկման, կորստի մասին, այդ արժեքների կարևորության և դրանք վերադարձնելու, վերականգնելու անհրաժեշտության մասին:

«Երիտասարդները գիտեն իրենց իրավունքները, բայց չգիտեն իրենց պարտականությունները» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

«Հիմա հաճախ եմ տեսնում. աղջիկ թե տղա՝ մեծերի հանդեպ հարգանքը պակասել է: Ես չեմ կիսում այն կարծիքը, թե տրանսպորտում պետք է միշտ զիջել տեղը տարիքով մեծերին, դա կախված է իրավիճակից, սակայն երթուղայինում, օրինակ՝ նստած է երիտասարդ կին, կողքի նստարանին նստեցնում է 2-3 տարեկան իր երեխային: Կարող ես իրեն ոտքերիդ նստացնել, մանավանդ որ իր համար չես վճարում, և տեղը զիճել կանգնածներին» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Շիրակի մարզ):

Արժեքների փոխակերպումն ու կորուստը դրսևորվում է հատկապես կենցաղում, երբ հաճախակի է դարձել անհարգալից վերաբերմունք տարիքով մեծերի հանդեպ:

«Մեր շենքի տակը՝ առաջին հարկում, համակարգչային դասընթացների կենտրոն է, շատ են աղջիկ սովորողները: Մուտքի մոտ մշտապես աղտոտում են: Առաջին հարկի մի տատիկ նկատողություն արեց, այն էլ՝ փափուկ ձևով, ասաց՝ աղջիկներ ջան, որ փաթել եք՝ ձեր հետևից հավաքեք: Այդ աղջիկները, տեսնեմ՝ մեկին երեք են պատասխանում. ասում են՝ հասկացանք էլի, ի՞նչ ես խոսում» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Հետխորհրդային փուլում տեղի ունեցած բացասական փոփոխություններից է աշխատանքի հանդեպ պասիվ վերաբերմունքը, որը փոխարինվել է սպասողական տրամադրություններով՝ օգնություն ստանալու, հեշտ ապրելակերպ ունենալու առումով: Պետական քաղաքականությունը՝ արտերկրից հումանիտար և ֆինանսական աջակցության ստացման ուղղությամբ, մարդկանց մեջ ձևավորել է «շահառուի», «սոցիալապես անապահով խավի» հոգեբանություն:

«Մեր ժողովուրդն այնքան էլ չի սիրում աշխատել, սպասում է օգնության» (Իվետա, Տավուշի մարզ):

Բացասական կարծիքների ամփոփումը բերում է ռեսպոնդենտներից մեկի հետևյալ եզրահանգման. «հասարակությունը հիվանդ է», քանի որ հասարակության մեջ տեղի է ունենում բարոյական, համամարդկային արժեքների անկում:

«Հայաստանում տարածում ստացածը ոչ թե ազգային, կամ ժամանակակից արժեքներ են, այլ հակարժեք են: Մարդիկ ուզում են, որ իրենց սպասարկեն: Ուզում են արագ հարստանալ: Իրենց պարտականությունները բարդում են այլոց վրա: Իրենց մասին շատ բարձր կարծիքի են, այլոց մասին՝ շատ ցածր: Փնթի են և՛ իրենց վարքում, և՛ մարդկանց հանդեպ: Նույնիսկ այն պահին, երբ ազգը սգի մեջ էր՝ 44-օրյա պատերազմից հետո, կային մարդիկ, ովքեր փողոցում բարձր միացնում էին ու լսում երաժշտություն: Խոսքը հասարակության բարոյական վիճակի, մակարդակի մեջ է: Կամ. երբ գալիս են համերգների, ու հետները խշխշան փաթեթներով ուտելիք են բերում և ուտում: Գարշելի բան է՝ երբ քեզ համար երգում են, իսկ դու ուտում ես: Մի հատ էլ հետո շուրջդ թափում ու թողնում: Մեր հասարակությունը հիվանդ է» (Մարո, Վայոց Ձոր):

Երիտասարդներն են, որ շատերի կողմից համարվում են հասարակության հույսը, վերականգնման և զարգացման հիմնական տանող ուժը:

«Երիտասարդներն են իրենց համայնքի տերը: Իհարկե, համայնքապետարանն այս ամենով զբաղվում է, բայց ընտրողաբար և իրենց ցանկությամբ, մինչդեռ երիտարսարդներն են, որ իսկապես անտարբեր չեն իրենց համայնքում առկա խնդիրների վերաբերյալ: Նաև՝ գիտելիքի սով ունեն. միշտ գտանցվում ու մասնակցում են տարաբնույթ թրեյնինգներին, փորձում են նոր հնարավորություններ գտնել ինքնադրսևորվելու համար» (Գոհար, Գեղարքունիքի մարզ):

Երիտասարդների մասին դրական կարծիքների, իրենց հետ կապվող հույսերի հետ մեկտեղ՝ ռեսպոնդենտներից ոմանք նշում են երիտասարդ սերնդի ներկայացուցիչների հետընթացը, պասիվացումը, ապամոտիվացվածությունը,

որոնք կապում են նաև ներկայիս պայմաններում տարածված ինֆանտիլության՝ հասունանալ չցանկանալու հետ:

«Մեր քաղաքում պատերազմից հետո որևէ փոփոխություն չեմ տեսել, որ ինչ-որ բան է բացվել, որ գործընթացներ են տեղի ունենում, որ երիտասարդներն ակտիվացել են: Երիտասարդներն ակտիվ չեն՝ ցանկացած համայքնում, ու բոլոր նախաձեռնությունները գցել են մեր՝ մեծերի վրա: Մենք մեր երեխաներին այնպես ենք դաստիարակել, որ երեխաները չեն կարող ինքնուրույն որևէ բան անել. մեզ մեր ծնորներն ավելի դիմացկուն են դաստիարակել: Երիտասարդների խնդիրը հենց դա է» (Նաիրա, Կոտայքի մարզ):

Հետաքրքիր է նաև երևանաբնակ և մարզաբնակ /գյուղաբնակ/ երիտասարդների տարբերակումը. նշվում է, որ մարզաբնակներն իրենց համայնքին ավելի հոգատար են վերաբերվում, քան՝ երևանցիները, շարունակում են պատասխանատվություն զգալ իրենց համայնքի համար և, համապատասխանաբար, դրսևորում եմ ակտիվություն և նախաձեռնողականություն՝ համայնքների զարգացմանն ուղղված ծրագրերում:

«Ունենք երիտասարդների խումբ՝ ոչ բոլորն են ակտիվ, ու իրենց պետք է բերել, բայց այն երիտասարդները, ովքեր գիտեն ինչ են ուզում, միանգամից ցանկացած միջոցառում, նախաձեռնություն «բռնում են»՝ կլանում, յուրացնում, գալիս են, որպեսզի հետո ստանան մի փոքրիկ դրամաշնորհ և իրենց համայնքի համար մի բարի ու արժեքավոր գործ անեն: Երևանի և մեր համայնքի երիտասարդների (Դիլիջան, Տավուշի մարզ) միջև տարբերությունն այն է, որ Երևանում երիտասարդները, կարծում եմ, շատ քիչ են մտածում իրենց համայնքների մասին, իսկ այստեղի երիտասարդներն ասում են՝ «մեր գյուղի», «մեր համայքնի» համար ինչ-որ լավ բան անենք: Օրինակ՝ գյուղերի դպրոցներից մեկին կից ունեն ջերմոց, մտածում են՝ ելակ աճեցնեն, տան դպրոցի ճաշարանին, երեխաներին, հանրօգուտ գործեր անեն: Երբ ես էի նոր սկսում, մեր դեպքում ծրագրերն ավելի կարճաժամկետ էին՝ աղբահանություն անել, ծառեր տնկել, և այլն, իսկ հիմա իրենց 15-16 տարեկան են, բայց մտածում են ավելի երկարատև ծրագրերի կազմակերպման մասին» (Մելինե, Տավուշի մարզ):

2.2. Դրական և բացասական փոփոխությունները մարզում, համայնքում, բնակավայրում վերջին տարիներին

Դրական փոփոխություններից նշվել է քաղաքաշինությունը, ճանապարհների բարեկարգումը, գյուղերում փողոցային լուսավորության իրականացումը, մանկապարտեզների և դպրոցների մասնակի վերանորոգումը, որոշ մարզերում՝ հանրային տրանսպորտի բարելավումը, ինչը, սակայն, կախված է բնակավայրից. որոշ գյուղերի և մարզկենտրոնների միջև հանրային տրանսպորտը, ընդհակառակը, դադարել է գործել և գյուղաբնակներից զրկում է կրթության, մշակույթի, առողջապահության մատչելիությունից (այդ մասին մանրամասն՝ հաջորթիվ):

Որպես դրական փոփոխություն՝ նշվել է *«մասնագետներին, գիտելիք և կրթություն ունեցողներին այժմ ավելի շատ տեղ տալը, քան նախկինում»*՝ մասնագիկական գիտելիքների կարևորումը: Զրուցակիցներից մեկը պատմեց աշխատանքի ընդունվելու իր դրական փորձը.

> *«Անցյալ տարի, շատ պատահականորեն, ընկերուհիներից մեկն ասաց, ուզու՞մ է արդյոք տեղեկատու բաժնում աշխատել: Սկսեցի դասերից հետո աշխատել, նաև՝ հանգստյան օրերին: Բժիշկների հետ էի շփվում: Մի օր գինոկոլոգիայի բաժանմունքում կար վիրահատություն, բժշկուհին եկավ, ասաց, որ օրդինատորը չի կարողացել գալ, հրավիրեց ինձ, մասնակցեցի՝ որպես ասիստենտ, այդպես սկսեցի իրենց հետ վիրահատություններին մասնակցել» (Անի, Սյունիքի մարզ):*

Նշվում է, որ արդյունավետ են աշխատում հարկային մարմինները, մասնավոր գործունեությունը ստվերային հատվածից բերվել է օրենսդրական դաշտ:

> *«Հազար ու մի լավ և վատ բան ունենք մեր երկրում, բայց դրականներից է, որ մեր երկրում չգրանցված գործունեությամբ զբաղվող այլևս չկա՝ բոլորը բերվել են հարկային դաշտ: Մյուս կողմից, շատերը, ովքեր ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում, չեն տիրապետում հարկային օրենսդրությանը, դրանում աջակցություն է պետք» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):*

Հայաստանի տուրիստական բնակավայրերում վերջին տարիներին սրընթաց զարգանում է տուրիզմը: Այդ հատվածում ներգրավված կանայք նշում են, որ

պայքարում են գնաճի դեմ, հաշվի են առնում մրցակցությունը հարևանների հետ: Այսպես, Ծաղկաձորի տուրիստական բիզնեսը համակարգող ռեսպոնդենտը նշում է, որ Վրաստանում Բակուրիանի և Գուդաուտ քաղաքներում զարգանում է նման առաջարկներ ներկայացնող տուրիզմը՝ Ծաղկաձորից ավելի էժան գներով:

Տուրիզմը զարգանում է Իջևանում, Դիլիջանում, սակայն, նկատելի է նաև բնության աղտոտումը, բնապահպանության ոլորտում պետական քաղաքականության գրեթե բացակայությունը:

«Օրինակ՝ Իջևան քաղաքում արդեն նկատում ենք, որ եթե կա մեծ խանութ, ապա շուրջը մաքրություն չի պահպանվում: Աղստև մեր գետն է աղտոտվում՝ թափոններն են այնտեղ նետվում: Պետք է սկսենք կրթել մեր երեխաներին՝ սկսած մանկապարտեզից, թե ինչ է աղբը և ինչպես այն վերացնել՝ բնությանը վնաս չտալով: Ինչ-որ հաստատություն դրանով պետք է զբաղվի, արշավներ կազմակերպվեն, և այլն: Այդ մշակույթը հայերիս մեջ շատ թույլ է» (Կարինե, Տավուշի մարզ):

Միևնույն ժամանակ, զրուցակիցներից շատերը նշում են, որ իրենց բնակավայրերում տեղի ունեցող փոփոխությունները, այդ թվում՝ ճանապարհների, շինությունների բարեկարգման աշխատանքները, ինքնըստինքյան ենթադրվող երևույթ են, կատարվում են բնակիչների կողմից վճարվող հարկերով: Բացի այդ, նման աշխատանքներ հաճախ արվում են՝ իշխանության ներկայացուցիչների ինքնագովազդման նպատակով, և միշտ չէ որ հասցեական են:

«Այն, ինչ արվում է՝ աչքակապություն է. օրինակ՝ գերեզմանատանը լույս են քաշել. դա մարդկանց ի՞նչ է տալիս, ինձ համար դա աբսուրդ է: Մեկ հեկտար հող ունենք ու չունենք այն վարելու տրակտոր՝ այ դա կլիներ անհրաժեշտ աջակցությունը» (Սիրանուշ, Կոտայքի մարզ):

Զրուցակիցները նշում են, որ իրենց մարզերի բնակավայրերն անհամաչափ են զարգանում, շատերն ընդհանրապես չեն զարգացվում: Օրինակ, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքը, ապա՝ Մարտունին, Վարդենիսը պակաս են զարգանում, քան՝ Սևանա լճի տուրիստական վայրերը: Ինքը Սևան քաղաքն է թերզարգացած մնում: Զարգացման անհամաչափությունը դրսևորվում է, օրինակ, գնային կտրուկ տարբերություններում, անհամաչափություններում: Մարդիկ նախընտրում են

Արաբական Էմիրություններ գնալ, հանգստանալ, բայց ոչ՝ Սևան, որովհետև անհամաչափ թանկ է:

«Մարտունու կողմից Սևանա լճի կողմը շատ անբարեկարգ է, գնում ենք Սևան քաղաք՝ լճի ափին հանգստանալու համար: Մեր կողմից ափը շատ վատ վիճակում է, և եթե տուրիզմը զարգանար, կանանց և աղջիկների համար աշխատատեղեր կբացվեին» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):

Սևան քաղաքի թերզարգացվածության մասին խոսել են գրեթե բոլոր ռեսպոնդենտները՝ Գեղարքունիքի մարզից: Չկան աշխատատեղեր, նոր կազմակերպություններ չեն բացվում, աշխատատեղեր չեն ստեղծվում: Զբոսաշրջությունը Սևանում և ընդհանուր առմամբ մարզում չի զարգանում: Բացի Սևանավանքից, թերակղզուց, բուն Սևանա լճի ափից՝ որևէ այլ հետաքրքիր վայր տուրիստներին չեն կարողանում ուղարկել: Սևան քաղաքի թանգարանը հնաոճ է, չունի հետաքրքիր ցուցանմուշներ.

«Չորացրած արծիվ ցույց տալով՝ չես կարող տուրիզմ զարգացնել: Նույնն է նաև Ազգային պարկը. ես որպես տուրիստ՝ կյանքում չէի գնա այդ թանգարանը: Այս իմաստով միակ հետաքրքիր տեղը Bohem սրճարանն է, որտեղ տեղացի երաժիշտները համերգներ են տալիս, ներկայացված են հետաքրքիր իրեր, կարելի է ճաշակել ազգային ուտեստներ» (Գոհար, Գեղարքունիքի մարզ):

Բնակիչները ջանքեր են գործադրում՝ իրենց էներգիան որևէ տեղ կիրառելու, սակայն, այդպիսի տեղեր խիստ սահմանափակ են: Այս իրավիճակը ուղղակի և անուղղակի կերպով դժվարություններ է ստեղծում կանանց և երիտասարդ աղջիկների համար՝ աշխատանք գտնելու, ինքնադրսևորվելու առումով:

«Սևանում չկա որևէ ռեսուրս և հետաքրքրություն, որոնց կանայք և աղջիկները կարող են մասնակցություն ունենալ: Սևանում չկա որևէ տեղ, որտեղ աղջիկները կարող էին աշխատել, օգտագործել իրենց գիտելիքներն ու եկամուտ ստանալ: Աղջիկների ակտիվությանն օգնում է այն, որ ոչինչ չկա: Ոչնչից ինչ-որ բան են փորձում ստեղծել» (Գոհար, Գեղարքունիքի մարզ):

Հայաստանի զարգացումը խիստ կենտրոնացված է Երևանում, որի համեմատ մյուս մարզերը չեն ընկալվում որպես զարգացած:

«Հայաստանը դա Երևանն է. ամեն ինչ կենտրոնացվել է Երևանում: Մեր երեխաները որ մի քիչ այստեղ առաջադիմում են՝ վազում են Երևան: Երևանն էլ ոնց որ ուռած լինի արդեն մարդկանցից» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):

Մարզերում առկա խնդիրներից է միջհամայնքային, միջմարզային հանրային տրանսպորտի առկայությունն ու ոչ բավարար աշխատանքը: Այսպես, նշվել է, որ նախկինում միկրոավտոբուսներ էին գնում Թալին քաղաքից Երևան, Գյումրի և այլն, այդ թվում՝ գյուղերով, այժմ այդ տրանսպորտը վերացել է, և մարդիկ ստիպված են տեղափոխվել տաքսիներով: Հարցվողը ստիպված անգլերեն դասերը տեղափոխել է առցանց հարթակ, որովհետև գյուղաբնակ երեխաները չեն կարող իրենց թույլ տալ հազար դրամ մի ուղղությամբ վճարել տաքսիներին՝ դասերի գալու-գնալու:

«Հիմա փորձում ենք այդ խնդիրն էլ լուծել, մանավանդ՝ «Մշակույթի բաց տարածքի» նախագծի շրջանակներում. տեսնենք, թե մեքենա ումից կարողանանք ձեռք բերել: Լավ նկարող երեխաներ ունենք գյուղերում, և շատ լավ կլիներ, որ երեխաները կարողանային այստեղ հասնել, հանդիպել նկարիչների հետ, սովորել» (Գայանե, Արագածոտն):

Դրական փոփոխություններից է՝ բակերում ապօրինի ավտոտնակների, կրպակների վերացումը, մանկական խաղահրապարակների կառուցումը, պուրակների լուսավորումը: Միևնույն ժամանակ, ինչպես նշում են ռեսպոնդենտները, անհրաժեշտ է մարզերում զարգացնել գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, վերաբացել փակված գործարաններ և ստեղծել նորերը, բնակիչներին ապահովել աշխատանքով, տրանսպորտով:

«Ավելի շատ կենտրոնացել են խաղահրապարակ-այգի հարցերի վրա, իսկ կարևոր խնդիրները՝ խմելու ջրի պրոբլեմը, ճանապարհների՝ շատ ճանապարհներ ձմռանը փակվում են, նաև աշխատատեղերի, լուծված չէ: Մարդիկ ասում են. աշխատանք, եկամուտ չունենք: Գնամ նստեմ այգիներում ի՞նչ անեմ: Առաջին հերթին սոցիալական խնդիրները պետք է լուծել, նոր՝ այգիների լուսավորության» (Գայանե, Արագածոտն):

Բացասական գործընթացներից շատերի կողմից նշվել է խաղամոլության և թմրամոլության տարածումը, հատկապես՝ երիտասարդների և գործազուրկների

շրջանում, անգամ՝ դպրոցականների մոտ: Նման երևույթներ, ռեսպոնդենտների կարծիքով, հայաստանյան հասարակության և հայկական կենսակերպում առկա չէին և հարիր չեն, ինչպես նաև խիստ վտանգավոր են հայ ինքնության, կեցության, անվտանգության տեսանկյուններից: Հատկապես երեխաների և երիտասարդների շրջանում խաղամոլության և թմրանյութերի տարածումը ունի հասարակության քանդման նպատակ, և իշխանությունների կողմից բավարար կերպով չի կանխարգելվում:

«Տղա երեխաները տարված են համակարգչային խաղերով, հաճախ տնից դուրս չեն գալիս, դպրոց չեն գնում: Այդ պատճառով նաև պասիվ են մասնակցում տարաբնույթ ծրագրերին, չեն զարգանում»: (Անի 1, Վայոց Ձոր):

«Մարզում լուրջ, տագնապալի խնդիր է թմրամոլությունը. երիտասարդները շատ են թմրանյութեր օգտագործում, դրանք նույնիսկ դպրոցներում են տարածվում: Աղջիկների բարոյականությունն է փոխվել, տղաներինը՝ թմրամոլություն» (Անի, Վայոց Ձոր):

«Տղաների ուշքն ու միտքը հեռախոսով տիկտոկ սքռոլ անելն է» (Անի 2, Վայոց Ձոր):

Նշվել է կրթական համակարգի հետընթաց, հատկապես՝ դպրոցական կրթության, որը պայմանավորված է կրթության ոլորտում մշտապես իրականացվող, հաճախ՝ չհիմնավորված «բարեփոխումներով», փորձերով, կրթության համակարգի ապակայունացմամբ, առհասարակ կրթության արժեզրկմամբ: Դպրոցականներն ապամոտիվացված են, դպրոց չեն ուզում հաճախել, որևէ մեխանիզմ չկա իրենց մոտիվացնելու գիտելիքներով և կրթության հեռանկարներով: Զուգահեռաբար, ահրեստական բանականության տարածումը նվազեցնում է երիտասարդների՝ ինքնուրույն մտածելու կարողությունն ու ցանկությունը:

«Շատ քոլեջներում ընդամենը մեկ-երկու երեխա է սովորում: Կրթական մոդելը վատն է: Ասում են՝ գնում ենք դասի՝ մարդ չկա, ինչու՞ գնանք: Այդ տարիքի երիտասարդներին թողնել փողոցու՞մ: Հաճախ եմ տեսնում փողոցում այդ տարիքի դպրոցականներին» (Անի, Վայոց Ձոր):

«Շատ դեմ եմ արհեստական բանականությանը: Վերջերս մի թրեյնինգի եմ մասնակցել, որտեղ ունեինք ստեղծագործական հանձնարարություն: Բոլորը միանգամից մտան ChatGPT լուծումներ գտնելու համար, մինչդեռ կարող էին ինքնուրույն մտածել: Վերջերս այդ միջոցներով նաև սկսել են միմյանց պատվի հետ խաղալ, վարկաբեկել, սա շատ մեծ սպառնալիք է» (Մարիամ, Կոտայքի մարզ):

Բացասական և վտանգավոր երևույթներից է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին **արտագաղթը**. գյուղական համայնքներին ձգտում են տեղափոխվել քաղաքներ, հատկապես՝ Երևան, ինչպես նաև առհասարակ Հայաստանից գնալ:

«Աղջիկները գնում են Երևան, ոմանց կյանքն է այնտեղ դասավորվում, տղաներն էլ գնում են խոպան ու հազվադեպ են հետ գալիս: Հիմնականում գնում են բանակ, գալիս են, ու լքում են Հայաստանը: Հազվադեպ են փորձում բարձրագույն կրթություն ստանալ: Ցավալի փաստ է» (Անի, Վայոց Ձոր):

«Համայնքում ներկայումս դինամիկա կա. համայնքը բարեկարգում են, ինչ-որ բաներ վերանորոգում են, բայց ցավոք՝ առկա է մշտական արտագաղթ. երիտասարդները չեն տեսնում, թե ինչպիսի զարգացում է հնարավոր համայնքում. ցավոք՝ դա չի երևում: Երիտասարդները մեր ապագան են, և կոնկրետ մեր համայնքում չկա որևէ հեռանկար: Սիսիանում մարդիկ ավելի «սառն են», հույս չեն տեսնում, այդ թվում՝ համեմատած Գորիսի հետ, Կապանի հետ: Սիսիանն ակտիվ չէ» (Լաուրա, Սյունիքի մարզ):

Արտագաղթի մյուս գործոնը Հայաստանում գործազրկությունն ու ցածր աշխատավարձն է. եթե կանանց համար ցածր աշխատավարձը քիչ թե շատ ընդունելի է, տղամարդիկ կա՛մ ղեկավար պաշտոններ են զբաղեցնում, կա՛մ՝ այլ աշխատատեղերին չեն համաձայնվում: Նշվեց, որ, օրինակ, միջին աշխատավարձը Եղեգնաձորում 120-150.000 դրամ է, որը հատկապես այն ընտանիքներում, որտեղ կինը չի աշխատում և կան երեխաներ, տղամարդկանց համար բոլորովին բավարար չէ:

Ներքին արտագաղթի հետևանքով դատարկվում են փոքր համայնքներ, և երիտասարդների՝ հիմնականում Երևան տեղափոխվելու հետևանքով մարզերում, այդ թվում՝ մարզային քաղաքներում շատ դժվար է իրականացնել կանանց

սատարման նախաձեռնություններ. կանանց սատարելով՝ հաճախ նպաստում են իրենց արտագաղթին դեպի ավելի շատ հնարավորություններ ունեցող բնակավայրեր:

«Քանի որ Երևանը Չարենցավանին մոտ է, մեր երիտասարդներն այնտեղ են սովորում ու այնտեղ են իրենց առօրյան կազմակերպում: Հետևաբար՝ այստեղ ակտիվանալու կարիքը չունեն: Գալիս են տուն ուշ ժամերին, ու էլ ի՞նչ ակտիվություն: Ավելի ակտիվ են 30-անց մարդիկ: Երիտասարդները նախաձեռնություններով հանդես չեն գալիս, խնդրում-աղաչում ենք, որ անգամ եթե որևէ բան են նախաձեռնում, դիմեն՝ օգնենք: Օրինակ՝ ուզում են համերգ: Բայց երբ այդ համերգը կազմակերպում ենք, չեն գալիս: Չի կարող տարվա մեջ իրենց գոնե մեկ բան հետաքրքրել: Բայց չեն գալիս. պետք է անհատապես հրավիրել, որ մի քանի հոգի գա: Նույնիսկ երիտասարդներին նվիրված միջոցառումներին չեն գալիս, երբ իրենց համար նվերներ ենք նախատեսում, խրախուսանքներ, և այլն» (Սաթենիկ, Կոտայքի Մարզ):

Արտագաղթը ուղեղների, մասնագետների, հաճախ՝ երիտասարդության արտահոսքի հիմնական գործոնն է, որի հետևանքները պետության և հասարակության ապագայի, հեռանկարների համար լուրջ սպառնալիք է: Մարդկային ներուժի զարգացմանն ուղղված բոլոր ջանքերը կարող են արտագաղթի հետևանքով ապարդյուն լինել: Այդ մասին խոսել է ռեսպոնդենտ կանանց մեծ մասը. սա իսկական աղետ է: Արտաքին միջավայրի հետ կապն ու “դրսում” ստացած գիտելիքները Հայաստանում ներդնելը կարևոր, բայց հազվադեպ տարբերակներից է. մեծամասնությունը գնում է, ու չի վերադառնում:

«Սկսած դպրոցից, քոլեջից, ապա՝ համալսարանում սովորելու ընթացքում երիտասարդ աղջիկներն ավելի հեշտ են պատկերացնում իրենց հետագա ճանապարհն ընտրելու, կամ լքելու Գավառը, սովորելու և չվերադառնալու: Ինքս իմ դպրոցական տարիքից հետո նկատեցի, որ տարիներ անց շուրջբոլորս մարդիկ չկան. մի քանիսն ենք մնացել: Այն երեխաները, որ ասում էինք՝ ինչ ուղեղ ունեն, ինչ տաղանդավոր են, հետո անհայտացան մարզից, գուցե և Հայաստանն են լքել: Շատ քչերս մնացինք, շարունակեցինք: Չեմ մեղադրում. շատ քիչ հնարավորություններ կան այստեղ: Ինքս էլ չեմ սահմանափակվել Գավառով, աշխատանքս կազմակերպել եմ դրսի հետ, միշտ շարժի մեջ եմ եղել, դրա շնորհիվ է, որ կարողացել եմ ապահովել առաջխաղացումս ու չլքել: Եթե դրսի հետ կապ

չպահենք, շատ դժվար կլինի այստեղ զարգանալ, առաջընթաց ունենալ» (Դիանա, Գեղարքունիքի Մարզ):

Հայաստանից արտագաղթն ինտենսիվացել է 2020թ. Ղարաբաղյան պատերազմից ու դրան հաջորդած բացասական գործընթացներից հետո. մարդկանց մի մասը պետական քաղաքականության հետ իրենց անհամաձայնությունն արտագաղթելով է հայտնում: Կանանց դեպքում արտագաղթը կա՛մ կռում է ուսման և չվերադառնալու միտում, ինչպես արդեն նշվել է, կա՛մ էլ ունի արտագաղթող տղամարդու /ամուսնու, հոր հետ/ լռակյաց համաձայնության տեքս:

«Բոլորը գտնվել են սթռեսային վիճակում, բոլորը կոտրված են: Մի քիչ էլ զգացել եմ, որ մարդիկ այսօրով են ապրում, չգիտեն՝ վաղը ինչ կլինի: Անորոշություն է՝ չեն կարող մտածել վաղվա մասին: Գյուղերում արտագնա աշխատանքի են գնում: Առաջ գնում էին և վերադառնում, այժմ գնում են՝ նաև աշխատելով իրենց ընտանիքները տանել: Առաջ գնալով՝ այստեղ ինչ-որ բան թողնում էին, որ վերադառնան, այժմ արտագաղթում են: Կանանց դերն արտագաղթելիս պասիվ համաձայնություն է. ասում են՝ եթե ամուսինս գնացել է, ես էլ պիտի գնամ: Կան դեպքեր, երբ այնտեղ չեն հարմարվում ու ուզում են վերադառնալ Հայաստան, այդ տիպի մարդիկ էլ կան, չեն կարող դրսում հարմարվել» *(Նազելի, Գեղարքունիքի մարզ):*

2.3. Կանանց սոցիալական դերերի փոխակերպումները հետանկախության փուլում

Կանանց ակտիվության, ինքնադրսևորման, առաջնորդական կարողությունների զարգացման և դրսևորման, ինքնակայացման մասին խոսել են բոլոր հարցազրույցներում: ՀՀ անկախության տասնամյակների ընթացքում տեղեկատվահաղորդակցական միջոցների սրընթաց զարգացման, կրթության ոլորտում առաջարկվող ծառայությունների մատչելիության և բազմազանության, տուրիզմի և այլ գործընթացների ազդեցության արդյունքում բարձրագել է կանանց իրավագիտակցությունը, հավատքը սեփական ուժերին, նպատակասլացությունը: Կանայք զբաղվում են և՛ տնտեսական, և՛ հասարակական, և՛ քաղաքական գործունեությամբ:

«Նաև բիզնես եմ անում՝ մազահեռացման սարք եմ գնել, տանը աշխատում եմ: Հողամաս եմ մշակում: Զբաղվում եմ քաղաքական հարցերով, ինձ դա հետաքրքիր է» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):

Միևնույն ժամանակ, ինչպես նշում են զրուցակից կանայք, հայաստանյան հասարակության մեջ կանանց մի մասն այս կամ այն առումով ակտիվ է և զարգացող, առաջադիմող, մյուս մասը՝ անտարբեր. իրենց ոչինչ չի հետաքրքրում:

«Իր շրջապատում տեսնում եմ երկու տիպի կանանց. կան կանայք, ում որևէ ակտիվություն չի հետաքրքրում: Կանայք զբաղվում են իրենց տան տնտեսությամբ, և չեն ուզում քաղաքացիական կյանքով զբաղվել: Մյուս կողմից, կան կանայք, ովքեր իրենց տեսնում են հենց հանրային ակտիվության, քաղաքացիական կյանքում: Առաջինները երևի չեն պատկերացնում, որ բացի իրենց տնտեսությունից, երեխաներ պահելուց՝ կա նաև այլ կյանք» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Ինչպես նշվել է ֆոկուս-խմբային քննարկումներից մեկում, ֆինանսատնտեսական գործոնը կանանց առաջադիմության, ուսման, զարգացման կարևոր, բայց ոչ միանշանակ նախապայմաններից է: Աղքատ ընտանիքների աղջիկ երեխաների մի մասը նախընտրում է շուտ ամուսնանալ՝ ամուսնության մեջ տեսնելով տնտեսական կարիքների մի մասի լուծումը: Մյուսները նապխընտրում են ջանք գործադրել և փորձել փոփոխել անբարենպաստ կարգավիճակն ուսման և աշխատանքի միջոցով:

«Ինքս դասավանդում եմ, նաև՝ շփվում անապահով ընտանիքների երեխաների հետ: Ինչպես ասում են՝ կեցությունն է պայմանավորում գիտակցությունը: Շատ աղջիկներ, ովքեր անապահով ընտանիքներից են, միայն մեկ բանի մասին են մտածում՝ շուտ ամուսնանալ, որպեսզի կարողանան ունենալ սեփական միջոցները, տունը, անկյունը, և բարելավեն իրենց կենցաղը: Ինքս իմ օրինակն եմ իրենց բերում. տե՛ս՝ սովորել եմ, դասավանդում եմ, ամուսնացած չեմ, ինքս իմ հարցերն եմ կարգավորում, և այլն: Դա իրենց չի օգնում, որովհետև իրենց մոտ կա ընտանիքի միակ մոդելը, երբ պետք է շուտ ամուսնանալ և ներփակվել իրենց ընտանեկան հոգսերում» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Հատկապես խնդրահարույց է գյուղաբնակ աղջիկների կյանքում փոփոխությունների իրականացումը:

«Դասընթացների կազմակերպման ժամանակ հատկապես դժվար է ներգրավել գյուղաբնակ աղջիկներին: Անգամ երբ զանգում ես ծնողներին, ասում ես՝ ամեն ինչ ապահովում ենք, գյուղից տրանսպորտ ենք ապահովում դեպի քաղաք և հետ, ձեր երեխան կարող է անհոգ, հանգիստ ու ապահով գալ, սնունդն էլ ենք ապահովում, ամեն ինչ կազմակերպում ենք, ձեր երեխան նոր գիտելիքներով տուն է վերադառնալու, ծնողները շատ կասկածամիտ են արձագանքում: Նույնիսկ մեկ անգամ դասընթաց ենք կազմակերպել, որին նաև ծնողները կարող էին գալ, կամ երեխաների ընտանիքի ավագ անդամները. անգամ այդ դեպքում չէին ուզում գալ: Խնդիրը ընտանիքի դրվածքն է, մտածելակերպը: Երբեմն երբ իրենց ասում ես՝ տեսեք, ինչ հաջողությունների եմ հասել, ձեր աղջկա տարիքի եմ եղել, երբ սկսել եմ այսպիսի դասընթացներով առաջ գնալ, իրենց անգամ բացասական են ընկալում, եթե ակտիվ ես ու կաս տարբեր ոլորտներում: Մեկ-մեկ անգամ մտածում եմ այդ մասին չխոսել, թե չէ ավելի բացասական ազդեցություն կունենա» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Շիրակի մարզ):

Հետազոտությունը ցույց է տալիս, որ կանանց միջավայրում առկա են **մասնագիտական և ընտանեկան կյանքը համատեղելու, կամ հակադրելու միտումներ**: Դրանք հակադրելով՝ կինը զրկվում է կա՛մ անձնական կյանքից ի օգուտ մասնագիտական առաջխաղացման, կա՛մ՝ ինքնազարգացման հնարավորություններից և հասարակական-քաղաքական կյանում ինքնակայացման ցանկությունից՝ ի օգուտ անձնական կյանքի:

Բացի այդ, պարզվել է, որ կանանց կարծիքով, Հայաստանում առկա է կանանց ինքնակայացման ու մշտական ձգտում և ինքնազարգացման ցանկություն, մինչդեռ տղամարդկանց մոտ ինքնազարգացման ու ինքնակատարելագործման ձգտումն ավելի թույլ է: Որպես հետևանք՝ զարգացած կանայք չեն կարողանում ու ցանկանում իրենց անձնական կյանքը կապել իրենցից թույլ և ձգտումներ չունեցող տղամարդկանց հետ, և կարծես հաստատում են այն կարծրատիպը, թե կարիերան կնոջ կյանքում վտանգում է իր անձնական երջանկությանը:

«Ինքս այսքան սովորել եմ, ունեմ մի քանի դիպլոմ, ակտիվ աշխատում եմ, արդեն քառասուն տարեկան եմ, ու չեմ ամուսնացել: Գիտեք՝ որքան մարդ բարձր մակարդակ ունի, այնքան՝ բարձր սպասումներ, պահանջներ, ու չեմ կարողացել ընտանիք կազմել: Իսկապես, երևի, ***կա՛մ ընտանիք, կա՛մ կարիերա****» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):*

Մինչդեռ, ռեսպոնդենտներից շատերը նշում են, որ անհրաժեշտ է փորձել համադրել ու արդյունավետորեն զուգակցել անձնական կյանքն ու մասնագիտական առաջընթացը:

«Ավանդաբար ընդունված է, որ կինը պետք է ամուսնանա, երեխաներ պահի, և դա է իր հիմնական զբաղմունքը: Ինքս առաջադեմ եմ, ու փորձում եմ այլ օրինակ ծառայել: Հատկապես քաղաքականության մեջ հստակ բաժանված էր. սա տղամարդկանց, իսկ սա՝ կանանց գործն է: Այժմ շատ բան փոխվում է, օրինակ՝ ավագանում մեկ երրորդը կանայք են: Բայց պետք է հետաքրքիր միջոցառումներ կազմակերպել, որ կանայք ավելի ակտիվ ներգրավվածություն ունենան» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):

Հետաքրքիր էր նկատել, որ ընտանեկան կյանքը և մասնագիտական առաջընթացը, համայնքի և մարզի մակարդակում առաջնորդական դերակատարումը համատեղելու արդյունավետ օրինակներ շատ չեն բերվել: Այսպես, Վանաձորում ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ նշվել է մարզում հայտնի կին առաջնորդի՝ պրոֆեսոր Թերեզա Շահվերդյանի օրինակը, ով *«կանացի հատկություններ չի կորցրել. շատ լավ ընտանիք, երեխաներ ունի: Բայց ամբողջ Վանաձորի համար մենք մի Շահվերդյան ենք նշում, ուրիշը չկա: Կինը պետք է ուժեղ լինի, բայց կանացիություն չկորցնի»:*

Նշվում է, որ կանայք և աղջիկները հատկապես վերջին տասնամյակում շատ են առաջադիմել. **«Իրենց ոչինչ չի կանգնեցնի»** (Արևհատ, Սյունիքի մարզ): Իրենք աշխատում են բոլոր ոլորտներում, ակտիվ ներգրավված են նաև տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքապետարանում, ավագանիում, և այլն:

«Ինքս՝ որպես կին, ինձանով եմ դատում: Չեմ կարող ասել, որ նախկինում այնպես էի մտածում, ինչպես այսօր: Մարդ եմ. կյանքից ուզում եմ կյանք, և հետաքրքիր կյանք եմ ուզում» (Նաիրա, Կոտայքի մարզ):

«Նկատելի փոփոխությունն այն է, որ կանայք սովորել են իրենց կարիքներն ավելի բարձրաձայնել: Հնարավոր է՝ ես եմ շփվում այն կանանց հետ, ովքեր ուզում են փոփոխել իրենց կյանքը, ու մյուսներն այդ համարձակությունը չունեն, սակայն իմ միջավայրում ավելի ու ավելի շատ են այդպիսի կանայք, և՛ տեղացի, և՛ արցախցի, ովքեր նախաձեռնում են փոքր բիզնեսներ, իրենց կյանքն են փորձում փոխել: Մեզ մոտ իրականացվում է Դիլիտոն փառատոնը, որտեղ կանայք բերում, ներկայացնում, վաճառում են իրենց պատրաստած ապրանքները: Հաստատ չեմ հիշում, որ այդ ամենը մի տաս տարի առաջ կանայք անեին՝ հիմնականում կանգնած էին ետևի պլանում, իսկ հատկապես վաճառքով զբաղվում էր տղամարդը: Այժմ կանայք իրենք են այդ բոլորն անում, և խոսքը ոչ այնքան գումար վաստակելու, որքան՝ համայնքում երևալու մեջ է: Դա շատ-շատ մեծ բան է» (Մելինե, Տավուշի մարզ):

Հասարակության կողմից կանանց հանդեպ պահանջներն ու ճնշումը նվազել են, և նվազեցվել հենց կանանց ջանքերով. կինն այլևս "**չի վախենում սխալվել**".

«Այն հանգամանքը, որ նախկինում կանայք կարող էին որևէ ակտիվությամբ հանդես գալուց առաջ խուսափել, քաշվել, այժմ փոխվել է. ռիսկի ավելի հեշտ են գնում՝ բարձրացել է կանանց ինքնագնահատականը, չեն վախենում սխալվելուց, անհաջողություններից: Մտնում են ակտիվության մեջ, հասնում են հաջողությունների, իսկ եթե չեն հասնում՝ դուրս են գալիս, փոխում են բնագավառը, ու դա նորմալ բան է» (Դիանա, Գեղարքունիքի մարզ):

Կինը ամենակարող էակ է. կարողանում է արդյունավետորեն համադրել ընտանեկան կյանքն ու աշխատանքը, ջանքեր գործադրել, առաջ գնալ: Մինայն թե պետք է խանգարել ու խոչընդոտել:

*«Ինքս հանդիպել եմ կնոջ՝ երկու երեխա ունի, ու անընդհատ աշխատում է, ամուսինն էլ է աշխատում: Կանայք ավելի մեծ ձգտում ունեն, քան՝ տղամարդիկ: **Մի քիչ որ բաց ես թողնում կնոջ՝ ավելի մեծ բարձունքների է հասնում: Կնոջը պետք է բաց թողնել**» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):*

Պետք է նշել, որ ռեսպոնդենտ կանանց պատկերացումները հասարակության մեջ կնոջ տեղի, դերի, գործառույթների վերաբերյալ տարբեր են, և կարող են

բնութագրվել որպես ավանդականից անցում դեպի արդիականի. ոմանց համար առավել օպտիմալ տարբերակն է կանանց ակտիվ գործունեությունը միջին մակարդակի նախաձեռնություններում՝ համայնքային ծրագրերում, կազմակերպություններում, փոքր և միջին բիզնեսում և, միևնույն ժամանակ, ավանդական դերակատարումն ընտանիքում, ծնողավարության հարցերում:

Հարցվածները բազմիցս ընդգծել են, որ կանանց մասնակցության աճը կապված է ոչ միայն ազգային մակարդակի քաղաքականության, այլև համայնքային մակարդակում փոխակերպման հետ: Գյուղերում և քաղաքներում կանայք դարձան դպրոցական խորհուրդների, համայնքային խորհուրդների և տեղական նախաձեռնությունների ղեկավարներ: Նրանք կազմակերպեցին կոլեկտիվ գործողություններ գործնական կարիքների շուրջ, ինչպիսիք են ջրամատակարարումը, ճանապարհների վերանորոգումը, կրթությունը և առողջապահությունը՝ ցույց տալով, որ կառավարումը վերաբերում է ոչ միայն բարձր քաղաքականությանը, այլև առօրյա կյանքին:

Համայնքային ղեկավար պաշտոններում կանանց ներկայությունը կրկնակի ազդեցություն ունեցավ: Մի կողմից, այն ուղղակիորեն բարելավեց համայնքային խնդիրների լուծումը, քանի որ կանայք հաճախ առաջնահերթություն էին տալիս սոցիալական համախմբվածությանը և բարեկեցությանը: Մյուս կողմից, այն փոխեց մշակութային նորմերը՝ կարգավորելով կանանց հեղինակությունը հասարակական ասպարեզում:

Այս իմաստով քաղաքական պաշտոնները, պետության ղեկավարումը շարունակում է վերապահվել տղամարդկանց: Այդպես են կարծում նաև առաջնորդական դերակատարում ունեցող, իրենց համայնքում ինքնահաստատված, նաև՝ քաղաքական գործունեություն ծավալող կանայք /ստորև ներկայացվող կարծիքը քաղաքական կուսակցության մարզային գրասենյակի պատասխանատու է, գործարար/:

«Ավանդապաշտ մարդ եմ, սիրում եմ պահպանել մեր պապերի, տատերի ժառանգությունը: Հասարակությունը հիմա տարված է տարաբնույթ բաներով, մոռանում է ինքն իրեն: Կինը որպես փխրուն էակ, հասարակության համն ու հոտ, պետք է իրեն պահպանի: Կնոջը նախարարական պաշտոններում չեմ տեսնում: Կնոջը տեսնում եմ փոքր բիզնեսում, որ ունենա իր զբաղմունքը կրթության, մշակույթի ոլորտում, հոգևոր արժեքների պահպանման հետ կապված գործունեության մեջ: Կոպիտ ոլորտներում կնոջը չեմ տեսնում՝

ոստիկանությունում, բանակում: Տղամարդն ու կինը պետք է զբաղվեն իրենց գործերով» (Կարինե, Սյունիք):

Նշվում է նաև, որ կանանց և տղամարդկանց ավանդաբար վերագրված սոցիալական դերերը վաղուց փոփոխվել են, սակայն, կինը և տղամարդը օբյեկտիվորեն հավասար չեն, ուստի իրենց իրավունքների հավասարության պայմաններում չեն կարող հաշվի չառնվել իրենց պարտականությունների տարբերությունները, որոնք բխում են տղամարդու և կնոջ օբյեկտիվ տարբերություններից: Դարձյալ, այսպիսի կարծիքներ ներկայացվել են ակտիվ, առաջնորդող կանանց կողմից, ովքեր էական նվաճումների են հասել իրենց համայնքներում և մասնագիտական բնագավառներում:

«Կինը պետք է իր դերում լինի. ամեն դեպքում՝ կինը և տղամարդը տարբերվում են: Ի՞նչ է նշանակում՝ հավասար լինել: Եթե հավասարություն է, ապա թող տղամարդն էլ երեխա բերի (ծիծաղում է): Պետք է կինը իր գործառույթներ ունենա, տղամարդը՝ իր: Չեմ ասում, որ, օրինակ՝ կինը բանակում չպետք է ծառայի, բայց պետք է ծառայի այն ոլորտներում, որտեղ կարող է արդյունավետ լինել, օրինալ՝ թարգմանիչ, դիվանագետ, բանակցող լինի: Կինը փխրուն էակ է: Անգամ գտնում եմ, որ կինը չպետք է մեքենա վարի՝ թող տղամարդիկ վարեն» (Լաուրա, Սյունիքի մարզ):

«Կանայք, աղջիկները ապագա մայրեր են, բնականաբար՝ ամեն ինչ չէ որ պիտի իմանան բիզնես ոլորտում. որ շատ տարվում են բիզնեսով, ընտանիքը մի կողմ է դրվում» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):

Նրանք միաձայն նշեցին, որ բոլոր այն ոլորտները, որտեղ կանայք ավելի մեծ ներկայացվածություն են ձեռք բերել, օգուտ են քաղել վերջիններիս ներկայությունից: Այս որակները՝ սկսած կարեկից հաղորդակցությունից մինչև խնդիրների համալիր լուծում, կառավարմանը պարզապես «լրացումներ» չեն, այլ ներառական քաղաքականություն կառուցելու և կայուն սոցիալական զարգացման էական բաղադրիչներ: Հետևաբար, հասարակական ներդաշնակության և լավ կառավարման համար անխուսափելիորեն կարևոր է, որ երկու սեռերն էլ ներկայացված լինեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Կանանց ներդրման այս ճանաչումը ցույց է տալիս հայ հասարակության մեջ վերաբերմունքի զգալի փոփոխությունը: Պատմականորեն քաղաքականությունը, պետական կառավարումը և համայնքի ղեկավարումը համարվում էին տղամարդկային ոլորտներ, մինչդեռ կանայք սահմանափակված էին ընտանեկան խնամքի և տնային տնտեսության կառավարման մասնավոր ոլորտով: Նման բաժանումներն ամրապնդվում էին մշակութային ավանդույթներով, սոցիալական ակնկալիքներով և պատրիարխալ կառավարման ժառանգությամբ: Սակայն վերջին տասնամյակների անկայունությունը, այդ թվում՝ Հայաստանի անկախությունը, տնտեսական վերափոխումները, քաղաքական ցնցումները, պատերազմները, համավարակները և զանգվածային տեղահանությունը, խախտել են այս սահմանները: Կանայք բազմիցս ստանձնել են այնպիսի դերեր, որոնք մի ժամանակ անհասանելի էին նրանց համար՝ ոչ միայն ձգտման, այլև անհրաժեշտության պատճառով: Կանանց դերերի այս ընդլայնումը վերաձևավորել է ինչպես հանրային ինստիտուտների կառուցվածքը, այնպես էլ համայնքային կյանքի նորմերը:

Ֆոկուս-խմբային քննարկումներում նույնպես հնչեցվել է կանանց առաջնորդական կարողությունների խթանման, զարգացման և, միևնույն ժամանակ, կանանց և տղամարդկանց սոցիալական դերերը տարբերելու անհրաժեշտությունը:

«Կինը չպետք է ձևանա տղամարդ. օրինակ՝ ղեկավար շատ պաշտոններում կին չպետք է լինի»:
«Կինը իր բնությամբ, իր ամեն ինչով ստեղծված է արարելու, թեթևության... Բայց շատ դժվար է մեր իրականության պայմաններում այդ հոգսը տանելը, ու ստիպված մենք մեզ տղամարդու նման ենք պահում ու դրսևորում. ստացվում է, բայց դրա փոխարեն մենք մեր կանացիությունն ենք կորցնում, ու դա բնության առումով ճիշտ չէ» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Հետաքրքիր է նկատել, որ հատկապես երիտասարդ աղջիկներն իրենց ժամանակակից դերը հասարակության մեջ կապում են “եվրոպական” արժեքների և ազդեցության հետ, իսկ կնոջ իրավունքների սահմանափակումն ու խտրականությունները՝ խորհրդային անցյալի և իսլամական երկրների պատմական ազդեցության հետ հայ հասարակության վրա:

«Այժմ մարդիկ ավելի թեթև են, ավելի ազատ, ավելի ինքնավստահ: Սովետական բարքերը ավելի սահմանափակող էին, եվրոպական մտածելակերպը՝ շատ ավելի վստահ, ավելի ազատ, կանանց ավելի շատ տեղ են տալիս: Երբ ուսումնասիրում ենք հայկական մշակույթը վաղ ժամանակներից, օրինակ՝ հայկական դիցաբանությունը, ապա տեսնում ենք, որ կանայք ազատ էին: Ենթադրում եմ, որ սովետական ժամանակ հայերն ու մուսուլմանները միասին էին ապրում, և դա ազդել է հայկական բարքերի վրա, դրանք կաշկանդել է» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Կանայք ավելի ու ավելի շատ են մասնակցում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ակադեմիական ոլորտին, լրատվամիջոցներին և նույնիսկ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են անվտանգությունը, ոստիկանությունը և զինված ուժերը՝ ոլորտներ, որոնք ավանդաբար կապված են տղամարդկանց հետ: Նրանց ներգրավվածությունն այս ոլորտներում ցույց է տալիս, որ կանայք կարող են հաջողության հասնել ուժ, դիմացկունություն և հեղինակություն պահանջող դերերում:

Քաղաքացիական հասարակության ոլորտում կանայք ի հայտ եկան որպես հասարակական կազմակերպությունների, ժողովրդական նախաձեռնությունների և իրավունքների պաշտպանության արշավների հիմնական առաջնորդներ: Այս ոլորտները հաճախ թույլ են տալիս կանանց ավելի ազատորեն գործել, քան պաշտոնական քաղաքականության մեջ՝ ապահովելով հարթակներ սոցիալական խնդիրների լուծման համար, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, կրթությունը և մշակույթի պահպանումը: Հարցվածներից շատերը շեշտեցին, որ քաղաքացիական հասարակությունը դարձել է կանանց առաջնորդության կենսականորեն կարևոր փորձադաշտ՝ հնարավորություն տալով նրանց ձեռք բերել փորձ, կառուցել կապեր և, ի վերջո, անցնել քաղաքական դերերի:

Կանանց ներկայությունը ակադեմիական աշխարհում և լրատվամիջոցներում նույնպես կարևոր դեր է խաղացել հասարակական կյանքի վերաձևավորման գործում: Կին գիտնականները ներդրում են ունեցել քաղաքականության վերլուծության, գենդերային և սոցիալական հետազոտությունների մեջ, որոնք հիմք են հանդիսացել կառավարման համար: Կին լրագրողները ներկայացրին տեսակետներ, որոնք մարտահրավեր էին նետում գերիշխող կարծիքներին և ընդգծում մարգինալացված խմբերի ձայները:

Ժամանակակից կանայք գիտեն իրենց իրավունքները, և պատրաստ են դրանք պաշտպանել: Ռեսպոնդենտ կանայք այդ մասին խոսում են և՛ դրական, և՛ քննադատական իմաստով: Դրական իմաստները վերաբերում են կանանց ինքնիրացմանը, ինքնահաստատման կարողությանը, իսկ քննադատությունը՝ **հատկապես երիտասարդ աղջիկների մոտ եսակենտրոնությանն ու հաշվարկելու մտածելակերպին**, "ոչինչ մարդկանց համար հենց այնպես չանելուն":

«Մենք՝ մեր սերնդի մարդիկ, անգամ սոված, ցուրտ տարիներին, միշտ պատրաստ էինք կամավոր հիմունքներով մարդկանց օգնելու: Իսկ այս նոր սերնդի աղջիկներն ավելի կիրթ են, իրենց իրավունքները պաշտպանող: Փնտրում են աշխատանքի այնպիսի ոլորտներ, որտեղ իրենց աշխատանքը չի շահագործվի. միգուցե այդպես ավելի ճիշտ է: Եթե, ասենք, աշխատանքային ժամերի հետ կապված ես, օրինակ՝ զիջումների գնամ, աշխատանքային ժամերից դուրս, կամ շաբաթ օրը պատրաստ լինեմ աշխատելու, իրենց միշտ նախապես կուզենան ծանոթանալ աշխատանքի պայմաններին, հստակ կպայմանավորվել, ավել չեն աշխատի: Դա ճիշտ է: Ես նաև հասարակական կազմակերպությունների հետ եմ համագործակցում, այնտեղ մենք ունենք 20-25 տարեկան աղջիկներ, ովքեր այնպես են իրենց իրավունքները և պայմանները բարձրաձայնում, որ անգամ եթե ֆորս-մաժորային իրավիճակներ առաջանան՝ դու չես կարող իրենց խնդրել որ խնդիրը կարգավորեն: Ընդունում եմ, որ դա լավ է. մարդ արժևորում է իր աշխատանքը, իր ժամանակը, և ինքս մտածում եմ /ես 40 տարեկան եմ/. ինչու՞ ինքս այդպես չեմ արել: Նաև մեզ համար ինքնիրացվելն է շատ կարևոր՝ հասցնել անել այն ամենը, ինչ երիտասարդ ժամանակ չենք հասցրել: Այսօրվա աղջիկներն այդպիսին չեն, ու դա լավ է» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

«Հիմա այնքան ուրախ եմ աղջկաս և իր սերնդակիցների մտածողության համար, նույնիսկ մեկ-մեկ այնպես են մտածում, որ ես ամաչում եմ: Շատ գրագետ են մտածում իրենց իրավունքների մասին: Նույնիսկ ես՝ պետական համակարգում աշխատող, երբ հանկարծ ավելի երկար եմ աշխատում, ասում է. մամ, արտաժամյա կվարձատրե՞ն» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Միևնույն ժամանակ, սեռով պայմանավորված կարծրատիպերի ազդեցությունը դեռ առկա է և հատկապես աշխատաշուկայում հաճախ խոչընդոտ է հանդիսանում: Շատերն են նշում, որ աշխատաշուկայում առկա բացասական երևույթներից է կանանց արտաքինի ընդգծումը, այնքան՝ այն աշխատատեղերում, որտեղ դա գործառույթներով չի ենթադրվում, ինչպես նաև էյջիզմը. տարիքով պայմանավորված խտրականությունը:

«Հաճախ աշխատատեղերի հայտարարման ժամանակ այնպիսի պահանջներ են ներկայացվում, օրինակ՝ երիտասարդ, բարետես արտաքին, և այլն, որ կանայք և աղջիկներ չեն ուզում այդտեղ աշխատել: Պետք է բացատրել, որ կանայք միայն արտաքինով չէ, որ կարևոր են, և կարող են տղամարդկանց հետ հավասար աշխատել» (Սարվարդ, Սյունիքի մարզ):

Նշվել է, որ փորձելով աշխատել կանանց համաչ ոչ ավանդական ոլորտներում՝ հանդիպել են դիմադրության, սկեպտիցիզմի և նույնիսկ թշնամանքի: Հատկապես քաղաքական կառավարման պաշտոններում կանանց երբեմն անտեսում են՝ «ոչ պիտանի», «չափազանց զգացմունքային» կամ «իրական խնդիրներից շեղող» լինելու համար: Նշվում է, որ նույնիսկ երբ կանայք զբաղեցնում են ղեկավար պաշտոններ, նրանցից ակնկալվում են տղամարդկային ղեկավարման ոճ և որակներ՝ լուրջ ընդունվելու համար, ինչը սահմանափակում է կանանց ներուժը:

Որոշ հարցվածներ մտահոգված են զուտ սիմվոլիկ մոտեցման պահպանմամբ. կանայք ընդունվում են հաստատություններ՝ քվոտաները բավարարելու կամ աշխատակազմում տղամարդկանց և կանանց հավասար/համեմատելի համակազմն ապահովելու համար՝ առանց կանանց իրական իրավասություն տալու: Նման դեպքերում կանայք բախվում են կրկնակի մարտահրավերի՝ ապացուցելու իրենց կարողությունները և միաժամանակ պայքարելու կազմակերպչական մեկուսացման դեմ:

Ավանդական մոտեցումները, ընտանեկան սպասումները նույնպես կարող են կնոջ մասնագիտական առաջխաղացման համար սահմանափակող բնույթ ունենալ: Որոշ ընտանիքներ աջակցում են կանանց ակտիվ ներգրավվածությանը հասարակական-քաղաքական կյանքին, մինչդեռ մյուսները դա չեն խրախուսում՝ կնոջ ամենակարևոր դերը տեսնելով ընտանիքում:

Իջևանում բնակվող ռեսպոնդենտը նշում է, որ կանանց հիմնական զբաղվածությունը կուրորտային գոտիներում, հյուրանոցներում սպասարկման պաշտոններում է, իսկ ղեկեվար անձնակազմը, մենեջերները հիմնականում տղամարդիկ են: Շատ կանայք խուսափում են նաև աշխատել գիշերային հերթափոխով, քանի որ դա կարող է բացասական մեկնաբանությունների առիթ դառնալ:

«Այստեղ մտածելակերպն այնպիսին է, որ երբ լսում են՝ աշխատանք կա հյուրատներում, օրինակ՝ ադմինիստրացիա, հրաժարվել են: Կա տպավորություն, որ եթե հյուրանոց է, ապա աուրան այն չէ» (Իվետա, Տավուշի մարզ):

«Մեզ մոտ շատ զարգացած է տուրիստական ոլորտը, որում կանայք ակտիվ ներգրավված են, բայց կան տաբուներ, օրինակ՝ եթե գիշերային հերթապահություն է, ոպա կինը չպետք է այդտեղ աշխատի, կամ առհասարակ սպասարկման ոլորտը դրական չէ որ ընկալվում է: Վերջին տաս տարիների ընթացքում, միգուցե, կանայք ավելի քիչ են սկսել ուշադրություն դարձնել, թե ինչ կասեն այլ, հատկապես՝ անծանոթ մարդիկ իրենց մասին» (Մելինե, Տավուշի մարզ):

Կանանց հասարակական ակտիվությունն ու ակտիվ ներգրավվածությունը հանրային հարցերում բախվել է դիմադրության, անվստահության, սակայն ժամանակի ընթացքում ավանդական ընկալումները փոխվել են:

«Կանայք շատ ավելի իրավագիտակից են դարձել, ավելի շատ են իրենց տեսնում սոցիալական կյանքում, ավելի բարձր պաշտոններում ենք կարողանում տեսնել կանանց: Երևանում՝ ավելի շատ: Մարզերում, երբ փոքր էի, առհասարակ չեմ հիշում որ կանայք զբաղվեին հասարակական կյանքով: Մեր՝ Գեղարքունիքի մարզը ամենապահպանողականներից է, ու մոտ հինգ տարի առաջ է, որ կանայք ավելի ակտիվ դարձան: Հիշում եմ՝ երբ սեմինարներ էին կազմակերպվում մեր մարզում, օրինակ՝ սեռային հավասարության թեմաներով, մի քիչ շատ սուր էին ընդունում այդ ամենը, թե ինչ-որ բաներ են ուզում փոխել մեր մեջ, ինչ-որ գաղափարներ հրամցնեն: Այժմ այդ ամենն ընկալվում է ավելի շատ որպես հնարավորություն» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Հասարակության մեջ կանանց տեղի և դերի ընդլայնումը, **ավանդաբար տղամարդկանց վերագրվող դերերի ստանձնումը ոչ միայն կանանց ջանքերի, այլ նաև տղամարդկանց հետընթացի արդյունք է**: Գրեթե բոլոր հարցազրույցներում նշվել է, որ տղաները դպրոցից սկսած ավելի վատ են սովորում, քան աղջիկները. խոսքը հասարակության մեջ տարածված արատավոր բարքերի, կարծրատիպերի մասին է, թե լավ սովորելը «տղաների համար չէ», թե «լավ սովորող տղան նմանվում է աղջկան», և այլն:

Նման արատավոր պատկերացումներ և կարծրատիպեր բխում են առնականության՝ մասկուլինության մասին նեղ, միակողմանի պատկերացումներից, որոնք տարածում են ստացել հատկապես պատանիների շրջանում և արգելակում են երիտասարդ տղաների՝ կրթվելու, ինքնազարգացման, դպրոցում և բուհում ինքնադրսևորվելու մոտիվացիան: Որպես հետևանք՝ աղջիկները ուսման տարիներին տղաներից առաջ են ընկնում ոչ միայն իրենց աշխատասիրության, նպատակասլացության շնորհիվ, այլև տղաների պասիվության և ուսման հանդեպ բացասական կարծրատիպային վերաբերմունքի:

«Տղաներն ավելի անտարբեր են, քան՝ աղջիկները: Շատ տղաներ զինծառայությունից վերադառնալուց հետո կենտրոնանում են գումար վաստակելու վրա, և շատերի համար դա ինքնանպատակ է. ոչ թե՝ այն, օրինակ՝ կրթության մեջ ներդնելու, զարգանալու համար, այլ հենց գումար վաստակելու» (Սիրանուշ, Կոտայքի մարզ):

«Վերջին տարիներին նախաձեռնողականությունն անցել է աղջիկներին: Դեռ դպրոցական տարիքից ցանկացած ծրագիր, նախաձեռնություն իրականացնում են աղջիկները, իսկ տղաները կողքից դիտում են: Բալանսը խախտվել է, այս անգամ՝ դեպի աջղիկների կողմը: Սա նույնպես ապամոտիվացնում է.բացակայում է տղաների և աղջիկների միջև առողջ մրցակցություն և համագործակցություն» (Մարիամ, Կոտայքի մարզ):

Նույն տեսակետը և մտահոգությունը հնչեցվել է առաջադեմ կանանց մասնակցությամբ ֆոկուս-խմբային քննարկումներում: Բոլորի կողմից նշվում է հստակ տարբերություն տղաների և աղջիկների միջև. տղաները ավանդապաշտության ետևում թաքցնում են իրենց՝ զարգանալու, կրթվելու, իրենց աշխարհայացքն ընդլայնելու ցանկության, պատրաստակամության

բացակայությունը: Ավելին՝ հետընթաց են ապրում: Կրթություն ստանալը, լավ սովորելը տղաների միջավայրում պիտակավորված է, կապվում է իգական հատկությունների հետ, չի խրախուսվում, ծաղրանքի է ենթարկվում. **լավ սովորող տղաները իրենց հասակակիցների կողմից ենթարկվում են բուլինգի:**

«Աղջիկը 16 տարեկանում հասուն անձնավորություն է, գիտի ինչ է ուզում, մոտակա երեք տարիների պլանը ունի. ուզում է կայանալ: Նույն տարիքի տղաները գալիս են՝ «երբ ենք ուտում, երբ ենք խմում...»: Ի՞նչ ես ուզում դառնալ՝ «դե տեսնենք...»: Լավ՝ «փայլուն» երիտասարդները հատուկենտ են: Անգամ աղքատ ընտանիքներից՝ շատ մեծ ձգտում ունեն, շատ բաների են հասնում: Տղաների մոտ ծայրահեղություն է. կա՛մ շատ լավն են, կա՛մ՝ շատ վատը: Անգամ իմ կուրսում 17 տղա է, և միայն մեկն է սովորում: Բայց այդ մի տղան բուլինգի է ենթարկվում, որովհետև ինչ լինում է, բոլորն ասում են՝ նա կանի, նա կասի, և դա ծիծաղալու կարգավիճակ է, ու նա սկսում է հրաժարվել որևէ բան անելուց» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

«Կան ընտանիքներ, որտեղ շատ սովորող, կարդացող տղաներին իրենց ծնողներն են բուլինգի ենթարկում, օրինակ, ասում էն՝ «ամոթ է, հլը նայիր քո թայ տղաներն ինչեր են անում, իսկ դու նստած գիրք ես կարդում...»: Այդ երեխային ձևավորում է ընտանիքը: «Հաշմել» է դա նշանակում, երբ քո երեխային սովորելու, կարդալու համար կարող ես քննադատության արժանացնես, ասես՝ «հլը գնա, հրապարակում թռի-վռի արա, որ ասեն՝ տղա ես, ծուխ ծխացնող ես դու, այ տղա, ինչու ես գիրք կարդում» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Շիրակի մարզ):

Տղաների մոտ սովորելու հանդեպ ցածր մոտիվացիան պայմանավորված է նաև աշխատաշուկայի ներքին կանոններով, այդ թվում՝ աշխատանքը ծանոթ-բարեկամով ստանալու հավանականությամբ, և կրթության արժեքի անկմամբ: Տղաները նախընտրում են արագ աշխատանք գտնել, գումար վաստակել, իրենց ապագայում երկարատև ներդրումների համար չունեն հնարավորություններ և ցանկություն:

«Հատկապես վերջին տարիներին տղաների մոտ սովորելու ապամոտիվացիան հետևյալն է. մտածում են՝ եթե պետք է սովորեմ ու ամեն դեպքում հետո գնալու

եմ արտագնա աշխատանքների, ապա ինչու՞ սովորեմ: Որպես հետևանք՝ նաև ժողովրդագրական պատկերն է փոփոխվելու. ավելի գրագետ, կայացած, զարգացած աղջիկները կնախընտրեն ոչ իրենց մարզի տղաներին, ովքեր թերզարգացած են և թերուս, ինչը կնպաստի մարզից աղջիկների արտագաղթին: Աղջիկներն արտագաղթում են ուսման և զարգացման նպատակներով, տղաները՝ աշխատանքի, մարզում բնակչությունը մշտապես նվազում է» (Դիանա, Գեղարքունիքի մարզ):

«Երկրում շատ անորոշ վիճակ է. եթե մեր երիտասարդներին այդ անորոշությունից դուրս հանենք՝ շատ կարևոր բան կանենք: Կանայք ավելի շատ են մնում տեղում, քան՝ տղամարդիկ: Տղամարդիկ արտագաղթում են: Պետք է իրազեկել, ցույց տալ, որ գիտելիքը ուժ է: Հիմա ում հետ խոսում ես, ասում են՝ ֆինանս չկա: Պետք է բացատրել, որ ֆինանսը հետո է ստեղծվում, սկզբից՝ գիտելիքն է, դրա միջոցով է, որ ֆինանսն է ստեղծվում» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):

Սրան գումարվում է արդեն հիշատակված՝ տղաների միջավայրում թմրամիջոցների օգտագործման և խաղամոլության արատավոր բարքերի տարածումը, որոնք հասարակության անդամների մի մասին դարձնում են անգործունյա, զրկում ինքնակայացման և զարգացման մոտիվացվածությունից, թուլացնում ամբողջ հասարակությունը:

Ռեսպոնդենտ կանանցից ոմանք նշում են, որ չսովորելը, կամ ուսումը չկարևորելը նաև աղջիկներին բնութագրող բացասական միտում է.

«Կարծես թե ընդունված է, որ տղաները չեն սովորում, իրենք սովորելու հետ գլուխ չեն դնում: Բայց աղջիկների մեջ էլ դա կա. ժամերով կարող են հեռախոսով զբաղվել, փոխանակ՝ մի գիրք կարդան» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):

Առհասարակ՝ կանանց ակտիվացման, առաջընթացի և ինքնադրսևորման միջոցներից է նաև առցանց հաղորդակցումը: Ռեսպոնդենտներից ոմանք նշում են, որ առցանց հաղորդակցությունների զարգացումը կանանց ակտիվացման համար և՛ հնարավորություն է, և՛՝ խոչընդոտ: Մասնավորապես, կանանցից շատերը սկսել են նախընտրել առցանց շփումը, և երբ մարզում տարաբնույթ միջոցառումներ, թրեյնինգներ են կազմակերպվում, շատերը *«հավես չունեն գնալու. ասում են՝ եթե*

առցանց՝ հեռախոսով, համակարգչով լինի՝ կմիանամ, եթե պետք է գնալ, ապա՝ չէ» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):

Պատահական չէ, որ ռեսպոնդենտներն առաջարկում են բարձրացնել կանանց մեդիա-գրագիտության մակարդակը, սովորեցնել բջջային հեռախոսներն ու հաղորդակցական միջոցներն օգտակար կերպով կիրառել, ծառայեցնել աշխատանքային նպատակներին:

«Ոչ միայն համատարած դարձած՝ Տիկտոկում live մտնելը: Կամ՝ ունեմ հարևանուհի, որ զեղջն ու անվճարը չի տարբերում՝ ծառայություններից օգտվելիս: Կամ՝ այստեղ-այնտեղ իրենց անձնական տվյալներն են փոխանցում, ինչը վտանգավոր է: Իրավագիտակցություն բարձրացնել» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):

Ղարաբաղյան պատերազմում տղամարդկանց միջավայրում հազարավոր զոհեր, նաև՝ արտագնա աշխատանքային միգրացիայում հիմնականում տղամարդկանց ներգրավվածությունը ստեղծել են հայաստանյան հասարակության մեջ տղամարդկանց ներուժի պակաս, որը ստիպում է կանանց իրենց վրա վերցնել ոչ միայն նոր, ոչ ավանդական գործառույթներ, այլ նաև դրանց անհամաչափ բեռը: Սա և՛ հնարավորություն է, և՛ մարտահրավեր: Բացի այդ, ինչպես նշվեց, աղջիկների մոտ ուսման և ինքնազարգացման հանդեպ ավելի մեծ ձգտումը կարող է օրինակ ծառայել նաև տղամարդկանց և երեխաների համար: Սակայն, այն դեպքերում, երբ աղջիկների համար ուսումն ու ինքնազարգացման ձգտումը դառնում է ուսման նպատակով արտագաղթի միջոց, այս գործընթացը հասարակության զարգացմանը նույնպես չի նպաստում:

3. Ղարաբաղյան հակամարտությունն ու 44-օրվա պատերազմը. կանանց դերակատարումն ու պատկերացումները

3.1. Ղարաբաղյան հակամարտության փոխակերպումը, հնարավոր սցենարները, Հայաստանի ապագայի կանխատեսումները կանանց կողմից

2018թ. “Թավշյա հեղափոխությունը”, 2020թ. COVID-19 համավարակի բռնկումը, նույն թվականին 44-օրյա պատերազմը և 2023 թվականին հայկական ամբողջ բնակչության բռնի տեղահանումը Արցախից՝ բոլորը բազմիցս նշվել են որպես որոշիչ, կյանքը փոխող իրադարձություններ: Այս իրադարձություններից յուրաքանչյուրը կրում է ոչ միայն անմիջական , այլև երկարաժամկետ հետևանքներ՝ վերաձևավորելով անձնական ընտրությունները, համայնքային դինամիկան և ազգային զարգացման հետագիծը: Այս փորձառությունների կուտակային ծանրությունը ձևավորեց կանանց առօրյա կյանքի ուղղությունը, անվտանգության զգացումը և ապագայի տեսլականը: Այս փոխակերպումները կարելի է ավելի լավ հասկանալ ֆեմինիստական տեսության, հակամարտությունների փոխակերպման և մարդու անվտանգության տեսանկյունից, որոնք ընդգծում են, թե ինչպես են անհատական փորձառությունները փոխկապակցված իշխանության և դիմադրողականության ավելի լայն շրջանակների հետ:

“Թավշյա հեղափոխությունը” սկզբում լավատեսության ալիք առաջացրեց: Շատ կանանց համար դա առաջին անգամն էր, երբ իրենք իրենց իսկապես ներկայացված զգացին քաղաքական կյանքում: Կանանց՝ կառավարության բարձր պաշտոններ զբաղեցնելու տեսարանը, մարտահրավեր էր նետում արմատացած մոտեցումներին, և կանանց նոր հնարավորությունների զգացում էր տալիս: Այս խորհրդանշական տեղաշարժը կարևոր էր: Այն կանանցից ոմանց ստիպեց վերանայել իրենց սեփական կարողությունները: Մայր, ուսուցչուհի, քննարկումների այլ մասնակիցներ հիշեցին, թե ինչպես սկսեցին խրախուսել դուստրերին, զարմուհիներին և աշակերտներին հավատալ, որ իրենց ձայնը կարող է նշանակություն ունենալ ազգային մակարդակով:

“Թավշյա հեղափոխությունը” կատալիզատորի դեր խաղաց կանանց քաղաքական ներկայացվածության հարցում: Կանայք տեսան, որ կառավարման

կառույցների դռները բացվում են: Սիմվոլիկ կերպով սա մարտահրավեր նետեց ավանդական քաղաքական մշակույթին՝ ոգեշնչելով ոչ միայն Երևանի, այլև գյուղաբնակ կանանց:

Սակայն, 2018թ. լավատեսությունը շուտով ստվերվեց հաջորդած ճգնաժամերի պատճառով: 2020թ. COVID-19 համավարակը ընտանիքներին ստիպեց մեկուսանալ՝ խնամքի բեռը անհամաչափորեն տեղափոխելով կանանց վրա: Դպրոցների փակման և առողջապահական համակարգերի լարվածության պայմաններում կանայք դարձան սոցիալական համակարգերի «ամորտիզատորները»՝ կլանելով տնային տնտեսությունների մակարդակով բեռը: Նրանց մասնագիտական հավակնությունները հաճախ հետաձգվում էին, մինչդեռ ընտանեկան պարտականություններն աճում էին: Ոմանք ամբողջությամբ կորցրեցին իրենց աշխատանքը, քանի որ անկում ապրեցին այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տուրիզմը, ծառայությունները և մանրածախ առևտուրը, ինչը նրանց զրկեց ֆինանսական անկախությունից: Մյուսները, ովքեր կարողացել էին պահպանել աշխատանքը, հաճախ դա արել են՝ կրելով խնամքի և մասնագիտական պարտավորությունների կրկնակի բեռ:

Ճգնաժամը նաև վերաիմաստավորեց կանանց դերը իրենց համայնքներում: “Թավշյա հեղափոխությունը” շատ մարդկանց ոգեշնչեց ավելի ակտիվ դառնալ հասարակական կյանքում՝ միանալով տեղական նախաձեռնություններին, ելույթ ունենալով համայնքային հանդիպումներում կամ զբաղվելով քաղաքացիական ակտիվությամբ: Պետական ինստիտուտների գերծանրաբեռնվածության պայմաններում ոչ ֆորմալ ցանցերը կարևոր դեր խաղացին փոխօգնություն ցուցաբերելու գործում: Համերաշխության այս ձևերը ամրապնդեցին կանանց միջև կապերը՝ խթանելով համայնքային դիմադրողականության նոր ձևեր: Դրանք նաև ընդլայնեցին կանանց տեսանելիությունը որպես համայնքային առաջնորդներ:

2020թ. Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմը ամբողջ հասարակության, այդ թվում՝ կանանց համար ամենացավոտ կոլեկտիվ տրավման էր: Նրանք կրում էին զինվորական ծառայության զորակոչված որդիներին, եղբայրներին և ամուսիններին աջակցելու պատասխանատվությունը, հաճախ առանց բավարար պետական աջակցության: Պատերազմին մասնակցել են նաև զինծառայող կանայք:

Հարցվածները նշեցին, որ ապրում են մշտական անհանգստության վիճակում, իսկ իրենց անվտանգության զգացումը քայքայվել է: 2023 թ. ամբողջ

հայ բնակչության բռնի տեղահանումը Արցախից տրավմայի ևս մեկ շերտ ավելացրեց: Շատ կանայք ստիպված էին վերականգնել իրենց կյանքը զրոյից, հաճախ՝ Հայաստանի անծանոթ քաղաքներում և գյուղերում: Նրանք կրեցին ոչ միայն ֆիզիկական, այլև ոչ նյութական մշակութային ժառանգության, հիշողությունների և հողին պատկանելության զգացողության կորստի ցավը: Կանանց համար անվտանգության սպառնալիքների պատճառով երկարաժամկետ պլանավորման անկարողությունը ընդգծեց նրանց անձնական կյանքի կայունության փխրունությունը:

Պատերազմը բացահայտեց կառավարման թույլ կողմերը և հիասթափեցրեց քաղաքացիներին, այդ թվում՝ կանանց, ժողովրդավարացման խոստումներից: Ազգային քաղաքականությունը սկսեց ասոցացվել չիրականացված խոստումների, կորստի և անկայունության հետ:

Ղարաբաղյան հակամարտության մասին մտածողությունն ու վերապրումն ունի ակնհայտ տրամվատիկ բնույթ. հարցվածների մեծամասնությունը նախընտրել է մանրամասն չխոսել ոչ հակամարտության մասին ընդհանուր առմամբ, ոչ էլ՝ 2020թ. 44-օրվա պատերազմի, դրա հետևանքների և հակամարտության փոխակերպման հնարավոր հետագա սցենարների մասին:

«Առանձնապես ես չեմ սիրում խոսել այդ մասին: Շատ ուրախ եմ, որ մեր համայնք եկել են արցախցիներ, դարձել են մեր համայնքի քաղցր մասնիկը, նոր թարմություն, շունչ են բերել մեր համայնք: Իհարկե, բոլորի մեջ կան տարբեր մարդիկ, բայց իրենք ուժեղացնում են մեր համայնքը: Թե հետո ինչ կլինի, կարծում եմ՝ ոչ ոքու հայտնի չէ» (Սաթենիկ, Կոտայքի մարզ):

Նշում են, որ 2020թ. 44-օրվա պատերազմը Հայաստանը չէ, որ սկսել էր, և խաղաղությունը այն արժեք է, որին Հայաստանում ձգտում են:

«Ինքս խաղաղության կողմնակիցն եմ: Պատերազմի ժամանակ եղբորս տղան պատերազմում էր, շատ դժվար ապրումներ ենք ունեցել: Հայ ժողովրդին չեն ցանկանա նորից նման ապրումներ» (Արմենուհի, Կոտայքի Մարզ):

«Պատմությունն ուսումնասիրելով, օրինակ՝ Պարսկաստանի հետ հարաբերությունները, կարող ենք ասել, որ Հայաստանի հետ շատ վատ հարևաններ էին դարեր առաջ, իսկ այժմ Իրանը Հայաստանին շատ օգնում է:

Հայաստանը միշտ թատերաբեմ է մեծ տերությունների համար: Բայց խաղաղությանը հարևանների հետ չեմ հավատում» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

2020թ. պատերազմը և ապա՝ 2023թ. արցախահայության բռնի տեղահանություններն է՛լ ավելի խորացրին համայնքի կախվածությունը միմյանցից: Տեղահանված ընտանիքները ինտեգրվեցին ընդունող համայնքներում՝ հիմնականում կանանց ջանքերի շնորհիվ. նրանք կազմակերպեցին հագուստի հավաքագրում, համատեղ կացարաններ, պատրաստել սնունդ և տրամադրել հոգեբանական աջակցություն: Նրանց դերը սոցիալական համախմբվածության պահպանման գործում դարձավ անփոխարինելի: Այնուամենայնիվ, այս պարտականությունները նաև նոր մարտահրավերներ ստեղծեցին: Կանայք հաճախ իրենց վրա են կրում իրենց համայնքների հուզական բեռը՝ կրելով վիշտը և մխիթարություն առաջարկելով նույնիսկ այն ժամանակ, երբ իրենք էլ դժվարությունների մեջ են:

, **Խաղաղությանը ձգտելով՝** միևնույն ժամանակ **խաղաղության հեռակնարներին չեն հավատում.** նշվում է, որ հարևանները՝ Ադրբեջանը և Թուրքիան Հայաստանի հանդեպ երբեք բարեկամական չեն եղել, և որ ներկայիս պայմաններում շարունակում են իրականացնել հակահայկական քաղաքականությունը՝ օգտագործելով «խաղաղություն» եզրույթը և դրա միջոցով փորձելով հասնել Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությանը սպառնալիք հանդիսացող զիջումներին: Ոմանց համար այս իրավիճակը տագնապի, փախուստի պատճառ է, ոմանց՝ զսպվածության, համառության, ապրելու կարողության:

«Պատերազմը դեռևս չի ավարտվել. դա փաստ է: Մենք ապրում ենք Վայոց Ձորում, ու պատերազմը մեզ ուղղակիորեն սպառնում է: Բայց եթե անընդհատ ապրենք վախի զգացումով, դա մեզ չի օգնի: Եթե մենք այդ վախը սրսկենք երեխաների մեջ, դա շատ վատ հետևանքներ կունենա: Պետք է անվախ լինենք, ապրենք այսօրվա օրով: Մարդիկ սահմանին և ապրում են, և արարում: Պետք է պահպանենք հանգստությունն ու տեսնենք, ինչ է լինելու» (Անի, Վայոց Ձոր):

«Սահմանամերձ բնակավայրերում տղաները տուն չեն կառուցում, ապագա չեն տեսնում՝ առհասարակ Հայաստանում: Պայքարող մարդուն ոչինչ չի կանգնեցնի, բայց հասարակության մեջ կան և՛ պահպանողականներ, և ազատականներ.

պահպանողականների վրա շատ դժվար է ներազդել: Եթե ես էլ չձգտեի, չսովորեի, ապա ինքս էլ կամուսնանայի՝ շատերի պես, կարտագաղթեի՝ իբրև լավ բախտ փնտրելու, տանը կնստեի, կարողա՝ ջերմոցս ունենայի, բայց կմնայի նույն մակարդակի: Մարդ պետք է ամեն ինչի հետ կապ ունենա՝ հոգևորի, քաղաքականի, որպեսզի այդ ամենի մեջ չկորես, գլուխ հանես, առաջադիմես»: (Սիրանուշ, Կոտայքի մարզ)

Առկա է նաև կարծիք, թե խաղաղությանը պետք է ձգել ամեն գնով՝ փորձելով խուսափել Հայաստանի համար ավելի մեծ սպառնալիքներից: Այդ իմաստով կանանց ավելի ակտիվ ներառվածությունը քաղաքականության մեջ կարող է նպաստավոր գործոն լինել:

«Վերջին ժամանակներում նորից լարվածություն է նկատվում: Չեմ կարծում, որ մեր երկիրը այժմ, թեկուզ՝ հետագա հինգ տարիներին պատրաստ կլինի նորից մասնակցելու պատերազմին: Ուստի, պետք է արտաքին քաղաքական բնագավառում ամեն ինչ անել, որպեսզի պատերազմ նորից չլինի» (Թագուհի, Տավուշի մարզ):

«Կինը խաղաղասեր է, իր կարծիքն ու խելքը քաղաքականության մեջ կարևոր է և կարող է ավելի դրական արդյունքների բերել: Անհրաժեշտ է ընդլայնել կանանց մասնակցությունը: Նաև՝ տղամարդկանց հետ պետք է աշխատել, որպեսզի կանանց ակտիվացնեն, խրախուսեն, գոնե՝ չխանգարեն: Խելքը, կրթությունը նույնիսկ պատերազմում կհաղթեն» (Լաուրա, Սյունիքի մարզ):

Թեև շատ հարցվածներ ընդգծեցին հակամարտության կողմերի փոխադարձ ճանաչման և ներառական՝ երկու հասարակությունների փոխադարձ հարգանքի սկզբունքով խաղաղության համաձայնագրերի կարևորությունը, նրանք նաև ընդունեցին, որ նման հեռանկարները շարունակում են սահմանափակվել ուժերի անհամաչափությամբ և Ադրբեջանի իշխանությունների թշնամական հռետորաբանությամբ: Արդյունքում, հարցազրույցի մասնակիցների զգալի մասը մատնանշեց երեք փոխկապակցված ռազմավարություն, որոնք նրանք անհրաժեշտ են համարում բռնության վերսկսումը կանխելու և Հայաստանի երկարատև անվտանգությունը ապահովելու համար. միջազգային խոշոր տերությունների ներգրավումը հակամարտության լուծման միջնորդության

գործում, Հայաստանի դիվանագիտական ցանցի ընդլայնումն ու ամրապնդումը, ինչպես նաև Հայաստանի ռազմական կարողությունների ամրապնդումը Հայաստանի հանդեպ ագրեսիայի վերսկսման կանխման նպատակով: Մշտապես անկայուն աշխարհաքաղաքական դիրք և բարդ հարևանություն ունեցող Հայաստանին անհրաժեշտ է արդյունավետ դիվանագիտություն՝ փոխլրացնելու սահմանափակ ռեսուրսներն ու ռազմական կարողությունները, այդ թվում՝ միջազգային գործընկերության և համաշխարհային սփյուռքի մոբիլիզացման միջոցով: Սփյուռքի ցանցերն օգտագործելով՝ Հայաստանը կարող է ուժեղացնել իր ձայնը միջազգային հարթակներում և հակակշռել հակահայկական դիսկուրսի ազդեցությունը:

Ցավոք, արդյունավետ դիվանագիտության մասին խոսակցությունները հայաստանցիները լսում են ՀՀ անկախությունից ի վեր, սակայն մինչ այժմ պետական իշխանության մարմիններն ռազմավարական կարևորության այդ տիրույթը մշտապես անտեսել են և շահագործել՝ նեղ-իշխանական շահերից ելնելով:Նշվում է, որ ներկայիս պայմաններում բացակայում է հավատքը վաղվա օրվա հանդեպ, տիրում է անորոշություն, տագնապայնություն, մարդիկ ապրում են մեկ օրով: Մասնավորապես, ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները ապագան նկարագրել են որպես անկանխատեսելի՝ պայմանավորված սոցիալական, տնտեսական և քաղաքական փոփոխություններով, որոնք հաճախ գտնվում են անհատական վերահսկողությունից դուրս: Այնուամենայնիվ, կանայք խոսում են իրենց դիմադրողականության մասին՝ դրսևորելով մասնագիտական և կենցաղային բնույթի ռազմավարություններ, որոնք կարող են օգնել իրենց և իրենց համայնքներին կողմնորոշվել անորոշության մեջ: Շատերի համար անորոշությունը ոչ միայն անհանգստության աղբյուր է, այլև հնարավորություն՝ մտորելու, աճի և նախաձեռնողական ներգրավվածության համար:

Քննարկումների ընթացքում նշվեց «դասեր քաղելու և առաջ շարժվելու» կարողության զարգացման կարևորությունը. ընդունելով ձախողումները՝ դրանց չհանձնվել: Այս մոտեցումը արտացոլում է պրագմատիկ լավատեսություն. ճանաչելով դժվարությունները՝ միաժամանակ պահպանել հույսը և կառուցողականորեն գործելու վճռականությունը: Կանայք դիմադրողականությունը նկարագրել են որպես այնպիսի հատկանիշ, որն ամրապնդվում է ակտիվություն ցուցաբերելու արդյունքում ստեղծվող սոցիալական ցանցերի և հարաբերությունների, միմյանց սովորեցնելու

/մենթորության/ և համատեղ փորձի միջոցով: Կրթությունը, համայնքային մասնակցությունը և դիմակայունությունը փոխկապակցված ռազմավարություններ են:

Հայաստանի համայնքների խոշորացումը նոր հնարավորություններ և մարտահրավերներ ստեղծեց: Համայնքների խոշորացումից հետո որոշ բնակավայրեր հայտնվել են սահմանամերձ համայնքներում: Այդպիսի համայնքներում կան տարբեր տրամադրություններ. 2020թ-ի պատերազմից հետո ոմանք, այդ թվում՝ սահմանամերձ գյուղերի բնակիչների մի մասը հաստատվել է այն մտքում, որ չի թողնի, չի տեղափոխվի, կշարունակի ապրել իրենց բնակավայրերում, ամուսնանալ տեղացիների հետ, կյանքը շարունակել՝ անկախ սպառնալիքներից:

«Ես նախորդ տարի եղել եմ սահմանամերձ գյուղերից մեկում, Վարդենիսի՝ Աղբրաձոր գյուղում: Սարի վրա երևում է մեր հարևանների (Ադրբեջանի) դրոշը: Ու այդ սարի տակը երևի մի տասը մետր լվացքի պարան է, ու այդ պարանի վրա՝ լրիվ երեխաների շորեր: Սա կարևոր վիճակագրություն է, որ անկախ այդ բոլոր վտանգներից՝ չպետք է թողնես-գնաս: Սա ինձ համար շատ հուսադրող է. հիմա աշխարհում ամեն տեղ անկայուն է, վտանգավոր: Ուղղակի մարդկանց՝ ժողովրդի հետ պետք է խոսել: Եթե իրենք չեն վախենում, ապա վախենալ չի կարելի» (Նազելի, Գեղարքունիքի մարզ):

Կանանց մոտեցումները սահմանամերձ մարզերում ապրելու և աշխատելու արտահայտում է և՛ մտահոգություն, անհանգստություն վաղվա օրվա հանդեպ, և՛՝ կանանց որոշակի մասի կամքի ուժն ու աշխատասիրությունը: Պետք է շարունակել ապրել, պաշտպանել պետությունն ու ստեղծագործել, զարգանալ, ներդնել ու զարգացնել՝ անկախ սպառնալիքներից:

«Ինքս ծրագրեր եմ ղեկավարում Սյունիքում: Երբ ասում են՝ բա չե՞ք վախենում գնալ սահմանամերձ բնակավայրեր, օրինակ՝ Ճամբարակ, ասում եմ. չէ՞ որ բոլոր տարիներին հարևան պետության կողմից հարձակումների սպառնալիքը միշտ եղել է, միշտ այնտեղից մեր բնակավայրերի ուղղությամբ կրակել են: Սահմանապահ բնակավայրեր ենք եղել. ոչ թե սահմանամերձ, այլ սահմանապահ. մարդիկ միշտ սահման են պահել, ու այդ պայմաններում շարունակել են ապրել, զբաղվել գյուղատնտեսությամբ, սովորել, աշխատել: Համայնքը միշտ նշանառության տակ է եղել, և մարդիկ շարունակել են իրենց

կյանքը: Բնականաբար, այժմ շատ ավելի դժվար է դարձել հնարավորություններ ստեղծել, բայց մենք շարունակում ենք: Ինքներս մեր ծրագրերում՝ ուղղված կանանց աղջիկներին, ունեցել ենք շատ հաջողակ կանանց, ովքեր սահմանամերձ գոտիներում իրենց տներում կարողացել են հյուրերի տուն ստեղծել, զարգացնել տուրիզմը, իրենց համայնքների զարգացման շարժիչ ուժն են դարձել, իրենց ամուսիններին են օգնել, կարողացել են այստեղ գումար վաստակել» (Դիանա, Գեղարքունիքի մարզ):

Կան նաև հակառակ տրամադրություններ, վախեր:

«Սահմանազատման գործընթացը սկսված է, ու մեր մարզում կան բնակավայրեր, որոնք սահմանազտման գծին շատ մոտ են, օրինակ՝ Ազատամուտ գյուղը. մարդիկ շտապում են իրենց տները վաճառել, որովհետև ինքնապաշտպանության համակարգ չկա, դրան չեն հավատում: Ասում են՝ գնալու ենք Հրազդանում ապրենք, որովհետև այնտեղ սահման չկա (ժպտում է): Գիտեմ մարդկանց, ովքեր հիմա հիպոթեկայով կարող են Իջևանում տուն գնել, բայց չեն ուզում, տագնապ են զգում: Գիտեմ մարդկանց, ովքեր հիմա հիպոթեկայով կարող են Իջևանում տուն գնել, բայց չեն ուզում, տագնապ են զգում» (Անահիտ, Արագածոտնի մարզ):

Այնուամենայնիվ, գերակայում են ուժի, տոկունության, համառության մոտեցումներ. ոչ մի դեպքում տունը և հայրենիքը չթողնել, չփախչել, շարունակել ապրել:

«Վայքը դարձել է խոշորացված համայնք, դրանով իսկ՝ սահմանամերձ: Սահմանին գտնվող Խնձորուտ գյուղը սահմանից երկու կմ. հեռավորության վրա է: Բայց այնտեղ կյանքը եռում է, չնայած ամեն ինչի՝ այնտեղ որևէ դպրոց չի փակվել, շեն գյուղ է (Անի, Վայոց Ձոր)»:

«Մենք միշտ ենք շրջապատված եղել թշնամիներով: Արդեն իսկ այդ հոգեբանությամբ պետք է ապրենք: Վախ չպետք է լինի, այն մեզ չպետք է խանգարի արարելու, զարգանալու: Պետք է ուժեղանալ.փախնել բոլորը կարող են: Ինքս չեմ պատրաստվում այստեղից փախչել, չնայած՝ ունեմ այդպիսի հնարավորություններ» (Լաուրա, Սյունիքի մարզ):

Ռեսպոնդենտներից մեկի դուստրը վերապատրաստվել է ՈՄԱ (Ողջ մնալու արվեստը) դասընթացներում: Սահմանամերձ գոտի են, և ռազմական սպառմալիքներին պատրաստ լինելն անհրաժեշտություն է.

«Մենք թուրքերին չենք վստահում, վայց և չենք վախենում: Մեզ մեր սարերն են պաշտպանում: Եթե հարձակվեն, այստեղից դուրս չեն գա» (Արևհատ, Սյունիքի մարզ):

Խաղաղության օրակարգի հանդեպ թերահավատ վերաբերմունքը նաև զուգակցվում է ներքաղաքական լարված մթնոլորտի վերաբերյալ բացասական հանրային կարծիքների հետ. ռեսպոնդենտ կանայք նշում են, որ ճգնաժամային պայմաններում Հայաստանի քաղաքական ուժերից ակնկալում են ոչ թե փոխադարձ ատելություն, այլև՝ միասնական ջանքեր:

«Մենք բաժանված ենք մի քանի խմբերի, օրինակ՝ ես լավատես եմ: Այո, հիմա լարված իրավիճակ է ամեն տեղ՝ թե հասարակության մեջ, թե՛ քաղաքական կյանքում: Երբ երկրի դեմքերն իրար այսպես են վերաբերում, սովորական մարդկանց մասին էլ ի՞նչ ասես: Պետք է միավորվել: Հիմա բոլորը կարծես խուսափեն իրենց աշխատանքից, ապրում են մեկ օրով, գալիս են աշխատանքի՝ արդեն հոգնած, չուզենալով: Պետք է միավորվել, աշխատել, որպեսզի հետո ավելի լավ լինի: Խաղաղության մասին խոսակցություններին չեմ հավատում. Մենք գործ ունենք թշնամու հետ, ով այսօր խոսում է խաղաղության մասին, վաղը կարող է ցանկացած այլ բան անել» (Իվետա, Տավուշի մարզ):

Պատահական չէ, որ վախի, անհանգստության, խաղաղության հանդեպ թերահավատության սոցիալ-հոգեբանական մթնոլորտը հատկապես բնութագրական է Արրբեջանի հետ սահմանամերձ մարզերի բնակիչների, այդ թվում՝ կանանց համար, ովքեր ապրում են անորոշության և անհանգստության պայմաններում: Նշվում է, որ **այդ վիճակից դուրս գալու սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և մոտեցումների անհրաժեշտություն կա, և այդ մոտեցումները պետական մակարդակում չեն կիրառվում. որոշ համայնքներում կանայք իրենց նախաձեռնությամբ են փորձում միմյանց սատարել**:

«Մարդիկ չունեն հստակ գործիքակազմ, որով կկարողանային իրենց հանել այդ հետպատերազմական «փոսից»: Այն կանայք, ովքեր իրենց վրա են զգացել

պատերազմի ազդեցությունը, մինչև այսօր կարծես մոլորված են: Վատ չէի լինի, եթե նման գործիքակազմ փոխանցվեր իրենց» (Մելինե, Տավուշի մարզ):

«Բերքաբեր, Կիրանց, Վազաշեն գյուղերում պատերազմից հետո նկատել ենք, որ կա ներքին լարվածություն, վախ. իրենց էլ են ասում, որ ցանկացած պահին կարող է նորից պատերազմ բռնկվել, և միշտ պատրաստ պահում են իրենց անձնագրերը, ջուրը, առաջին անհրաժեշտության ապրանքները, որպեսզի եթե նորից սկսվեց՝ կարողանան արագ տեղից պոկվել, պատսպառվել ապաստարաններում, և այլն: Այդ վախերի փոքրացմանն ուղղված՝ հրավիրել էինք հոգեբանների, նաև կազմակերպում ենք յոգայի դասեր: Վստահ եմ, որ եթե հոգեբանները այցելեն սահմանամերձ բնակավայրեր, ոչ միայն կանայք, այլ ամբողջ բնակչությունը կդիմեր» (Կարինե, Տավուշի մարզ):

Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը կախված չէ Հայաստանից և հայ ժողովրդի ջանքերից, այս ամենը վերագրվում է գերտերությունների միջև հարաբերություններին, մրցակցությանը, որից կախված է նաև Հայաստանի ապագան:

«Մենք չունենք այն ռեսուրսները, որոնք պետք են. ոչ մարդկային քանակի, որ զենքի առումով: Մենք առավոտյան արթնանալիս չգիտենք, մեզ ինչ է ստասում: Հակամարտությունը կարող է լուծվել գերագույն ուժերի՝ ոչ հայաստանյան, քաղաքական որոշումների արդյունքում» (Անի, Վայոց Ձոր):

Միևնույն ժամանակ, միջազգային հանրության միջամտությանը, հայամետ դիրքորոշմանը, Հայաստանի շահերը պաշտպանելու այլոց ցանկությանն ու պատրաստակամությանը նույնպես չեն հավատում: Հարցված կանայք գտնում են, որ միայն սեփական ուժերով հնարավոր կլիներ ապահովել Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությունը, իսկ գերպետություններին դիմելը, աջակցություն խնդրելը նվաստացուցիչ է, և արդյունավետ չէ:

«44-օրյա պատերազմի ժամանակ այլ պետություններից միայն կոչեր էին հնչում, որևէ աջակցություն չստացանք, ու տեսանք, որ որևէ մեկի վրա հույս դնել չի կարելի: Ես դրան այլևս չեմ հավատում: Բայց պետք է շատ պետությունների հետ ունենալ ռազմական պայմանագրեր: Բայց ոչ ՀԱՊԿ-ի հետ.պատերազմի

ժամանակ որևէ քայլ չարեց: Իսկ մնացածը՝ թե ԵՄ-ի հետ, թե՛ ԱՄՆ-ի, թե՛ ՆԱՏՕ-ի հետ՝ ես կողմ եմ» (Արմենուհի, Կոտայքի մարզ):

«Որպես թարգմանիչ՝ վերջերս հանդիպել եմ ք. Ջերմուկում տեղակայված միջազգային դիտորդներին: Հարցրեցի. եթե, օրինակ, լինի հարձակում Ջերմուկի վրա, կօգնե՞ք, օրինակ՝ երեխաներին տարհանել: Ասացին՝ չէ, իրավունք չունենք: Շատ կուզեի, որ «վիզներս չծռենք» ու սպասենք, թե ով մեր ճակատագրին կտիրանա: Մի չորս ամիս առաջ քանդել էի իմ պայուսակը, որ պատրաստել էի՝ թե Աստված չարասծե, պետք լինի փախչել, որ ունենայի առաջին անհրաժեշտության գումար, դեսորայք, որ վերցնեմ երեխաներին ու պատսպառվեմ» (Արփինե, Վայոց Ձոր):

Հայաստանյան քաղաքական ղեկավարության հանդեպ վստահությունն ու հավատը նույնպես ցածր է, ինչը բնութագրական է «տրավմատիկ հասարակությունների» համար: Հետազոտությանը մասնակցած կանանց այն մասը, որը պատրաստ էր խոսելու քաղաքականության, հակամարտության, դրա հեռանկարների և պրոբլեմների մասին (մեծ մասը նախընտրեց այդ հարցերը շրջանցել, պատրաստ չէր խոսել), նշում են, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացումը սխալ, անհեռատես մոտեցում էր: Դրա հետևանքով վատթարացան նաև Հայաստանի դիրքերը ղարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցող գործընթացներում, նվազեց Հայաստանի հանդեպ Ռուսաստանի աջակցությունը:

«Մեզ խելոք չպահեցինք. Ի՞նչ կարիք կար Կովիդով հիվանդ ձևանալ, մեկ օրով, և չընդունել հրավերը մասնակցելու Մայիսի 9-ի միջոցառմանը Մոսկվայում:[48]Չպետք է մյուսներին վիրավորել, անգամ՝ եթե ոչինչ չենք ակնկալում: Կարողա մենք ունեինք հնարավորություն, բայց նման քայլերից հետո չենք կարող ոչինչ ակնկալել» (Արփինե, Վայոց Ձոր):

Այսպիսով՝ հարցվածների մեծ մասը շեշտեց և՛ կողմերի՝ միմյանց հավասար կերպով ճանաչելու և հարգելու սկզվունքով խաղաղության հաստատման կարևորությունը, և՛ այս հարցում Ադրբեջանի հայատյաց և ռազմատենչ հայտարարությունների խոչընդոտող դերը, և՛՝ Հայաստանի դիվանագիտական և

[48] Նկատի ունի ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանին:

ռազմական միջոցների զարգացման կանխարգելիչ կարևորությունը: Հաշվի առնելով հակահայկական բռնի գործողությունների մշտական սպառնալիքը՝ Հայաստանը պետք է պատրաստ լինի պաշտպանվել այն դեպքում, եթե բանակցությունները ձախողվեն կամ արտաքին խաղացողները չկարողանան կանխել Հայաստանի հանդեպ ռազմական գործողությունները: Հարցազրույցներում բազմիցս շեշտադրվել է Հայաստանի ռազմական կարողությունների պահպանման և ամրապնդման կարևորությունը: Այս տեսակետը արտացոլում է Հարավային Կովկասում անկայուն անվտանգության միջավայրի պրագմատիկ ճանաչումը, որտեղ պատմական հակամարտությունները պարբերաբար վերսկսվում են, և վերածվում են բռնության:

Հայեցակարգային առումով, կանանց կողմից Հայաստանի ռազմական պատրաստվածության վերաբերյալ շեշտադրումները կարելի է հասկանալ անվտանգության երկընտրանքի տեսանկյունից, որի դեպքում պետությունները զինվում են պաշտպանողական նպատակներով, բայց հակառակորդների կողմից ընկալվում են որպես սպառնալիք՝ այդպիսով շարունակական դարձնելով փոխադարձ անվստահության ցիկլերը: Կանանց համար ռազմական կարողությունն ինքնին չի գովաբանվում որպես արժեք, այլ ընդունվում էր որպես ցավալի անհրաժեշտություն այն պայմաններում, երբ թշնամական մտադրությունները դիտվում են որպես անկանխատեսելի և հավանական:

Մի քանի հարցվածներ ուղղակիորեն անդրադարձան վերջին պատերազմների ցավոտ դասերին, որոնք բացահայտեցին Հայաստանի պաշտպանական կարողությունների խոցելիությունը և ընդգծեցին ռազմական սպառնալիքների թերագնահատման ռիսկերը: Նրանց համար զինված ուժերի ամրապնդումը անհամատեղելի չի խաղաղության ձգտումների հետ, այլև՝ երաշխիք, որ կնքված խաղաղության համաձայնագրերը կարող են պաշտպանված լինել դրանց խախտումից: Այս տեսանկյունը համահունչ է միջազգային հարաբերությունների ռեալիստական տեսություններին, որոնք ընդգծում են ուժի և զսպման կենտրոնական դերը հակամարտությունը կանխելու գործում: Սակայն սա նաև համընկնում է ֆեմինիստական վերլուծության հետ, որն ընդգծում է, որ հակամարտության գոտիներում կանայք հաճախ զբաղեցնում են բարդ դիրքեր՝ միաժամանակ կարևորելով խաղաղությունը և ճանաչելով պաշտպանության անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, շատ հարցվածներ զգույշ են չափազանց ռազմականացման դեմ՝ նշելով, որ ռեսուրսների ուղղորդումը ռազմական կարիքներին կարող է խաթարել սոցիալական զարգացումը, ժողովրդավարությունը և հաշտեցման հեռանկարները: Նրանց նրբերանգային տեսակետները արտացոլում են ռազմականացված անվտանգության ավելի լայն ֆեմինիստական քննադատությունը, որը զգուշացնում է, որ զուտ ֆիզիկական ուժի վրա հույս դնելը կարող է հավերժացնել բռնության ցիկլերը և խոչընդոտել խաղաղության համար անհրաժեշտ սոցիալական փոխակերպումները: Այսպիսով, չնայած նրանք կողմ են Հայաստանի ռազմական բաղադրիչի ամրապնդմանը, շեշտում են նաև, որ դա պետք է համադրվի դիվանագիտության, սոցիալական դիմադրողականության և ներառական կառավարման հետ:

Այս երեք ռազմավարությունները՝ Հայաստանի միջազգային ներգրավվածությունը, դիվանագիտության ուժեղացումը և ռազմական պատրաստվածությունը միասին, բացահայտում են այն բազմաչափ մոտեցումը, որով կին հարցվածները հայեցակարգել են հակամարտությունների կարգավորումը և ազգային անվտանգությունը: Նրանց տեսակետները չեն ենթարկվում «խաղաղության» և «պատերազմի», «դիվանագիտության» և «միլիտարիզմի» միջև պարզունակ դիխոտոմիկ համեմատություններին: Փոխարենը, նրանք մատնանշում են անվտանգության բազմաշերտ ըմբռնումը, որտեղ թշնամական միջավայրում գոյատևումը պահանջում է բազմաթիվ մոտեցումների միաժամանակյա կիրառում: Արտաքին ուժերից կախվածությունը արտացոլում է ինչպես Հայաստանի ռեսուրսների սահմանափակումները, այնպես էլ այն գիտակցումը, որ մեծ տերությունների ներգրավվածությունը մնում է տարածաշրջանային աշխարհաքաղաքականության անխուսափելի առանձնահատկությունը: Դիվանագիտության վրա շեշտադրումն ընդգծում է Հայաստանի ցանկությունը՝ ընդլայնել իր գործունեության շրջանակը, լեգիտիմությունը և դաշինքները իր անմիջական հակառակորդներից այն կողմ: Վերջապես, ռազմական պատրաստվածության կոչը ընդգծում է այն պրագմատիկ գիտակցումը, որ խաղաղությունը չի կարող պահպանվել առանց հուսալի զսպման:

Այս մտորումները բարդացնում են խաղաղության կառուցման գործում կանանց դերի վերաբերյալ ավանդական ենթադրությունները: Հարցվածները չեն սահմանափակվում խաղաղասիրության /պացիֆիզմի/ իդեալականացված պատկերացումներով, այլ փոխարենը ձևակերպում են անվտանգության

պրագմատիկ և բազմակողմանի տեսլական, որը համատեղում է դիվանագիտությունն ու անվտանգային մտածողությունը, փափուկ և կոշտ ուժերը, արտաքին աջակցությունը և սեփական գործողությունները: Նրանց տեսակետները համընկնում են ավելի լայն ֆեմինիստական գաղափարների հետ, որ կանանց դերը հակամարտության մեջ չի կարող սահմանափակվել մեկ դիսկուրսով, այլ ձևավորվում է նրանց վերապրած անապահովության, քաղաքական պրագմատիզմի և արդարության պահանջի համադրմամբ:

3.2. Կանանց դերակատարումը՝ Ղարաբաղյան հակամարտության, պատերազմի և հետպատերազմական պայմաններում

2020թ-ի 44-օրյա պատերազմի օրերին մոբիլիզացվել էր ամբողջ հասարակությունը, և եթե տղամարդիկ մեկնել էին մարտի դաշտ, ապա կանանց մեծ մասը աջակցել է թիկունքում, բանակին ապահովել անհրաժեշտ սննդի, նյութական միջոցների հավաքմամբ և փոխանցմամը: Ռեսպոնդենտ բոլոր կանայք՝ տարբեր տարիքի, տարբեր բնակավայրերից, այդ մասին են խոսել, և խոսել են՝ որպես բնական, նորմալ երևույթի մասին: Որևէ հարցազրույցում պետությանը և բանակին աջակցելը կանանց կողմից չի նշվել որպես հերոսություն, առանձնահատուկ և բացառիկ երևույթ. այդպես էր պետք, և բոլորը դա բնականոն կերպով են կատարել: Միևնույն ժամանակ, այդ մասին հպարտությամբ են խոսում:

2023թ. տեղահանման ճգնաժամը, մասնավորապես, ընդգծեց կանանց տեսակետների կարևորությունը ազգային քաղաքականության մշակման գործում: Կանայք եղել են օգնության ջանքերի առաջնագծում՝ բարձրաձայնելով տեղահանված ընտանիքների համար բնակարանային, զբաղվածության և սոցիալ-հոգեբանական աջակցության բացթողումները: Նրանց պաշտպանությունը ճնշում գործադրեց պետության և միջազգային դերակատարների վրա՝ այս հարցերն ավելի համապարփակ լուծելու համար: Այդպիսով, կանայք իրենց դիրքավորեցին որպես կենտրոնական դերակատարներ վերականգնման և դիմադրողականության համար ազգային պայքարում:

Կանանց՝ կորստի և հարմարվողականության անձնական փորձը վերածվեց համայնքային նոր դերերի, ինչն էլ իր հերթին ազդեց ազգային բանավեճի և քաղաքականության վրա: Երկարաժամկետ պլանավորման անհնարինությունը՝ մի զգացում, որը բազմիցս արտահայտվել է քննարկումների ընթացքում,

արտացոլում է ոչ միայն անձնական կյանքի անորոշությունը, այլև ավելի լայն՝ ազգային իրավիճակը: Սակայն, հենց այս անորոշությունն է շատ կանանց դրդել ավելի ներգրավված դառնալ համայնքային կյանքում: Գիտակցելով, որ պետական կառույցները փխրուն են, կանայք հաճախ զրոյից իրենց վրա են վերցնում դիմադրողականություն զարգացնելու պատասխանատվությունը: Այդպիսով նրանք ընդլայնում են քաղաքացիության իմաստը և վերաիմաստավորում քաղաքացիների և պետության միջև հարաբերությունները:

Պատերազմի օրերին և հետպատերազմյան փուլում կանանց համայնքային ակտիվությունն ու առաջնորդությունը և՛ աննախադեպ է եղել, և՛ միևնույն ժամանակ համապատասխանել է ավանդական մոտեցումներին, պատմության ընթացքում հայ կանանց կողմից դրսևորած կամային հատկություններին և արիությանը:

«Բոլորս պատերազմի հետևանքով ունեցել ենք կորուստներ: Դրանք մարդկանց կարծես բթացրել են, անտարբեր են դարձել կյանքի, ամեն ինչի հանդեպ: Միևնույն ժամանակ օրինակներ ենք տեսնում, երբ մարդիկ չեն ընկճվում, առաջ են փորձում նայել: Պատերազմի հետևանքով կանայք և աղջիկներն ավելի են կոփվել, զգոնացել, ուժեղացել: Նաև տեսնում ենք արցախցի կանանց օրինակը՝ փորձում են ուժեղ լինել, չընկճվել» (Մերի, Տավուշի մարզ):

«Պետք է աջակցել արցախցիներին, իրենց կարմքի ուժն ու նպատակասլացությունն ավելի բարձր է, քան՝ տեղացի կանանց» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):

«Մշակույթի տանը բոլորը հավաքվում էին՝ թե կին, թե տղամարդ, օր ու գիշեր այնտեղ էինք, հավաքագրում էին հագուստ, սնունդ և այլն զինծառայողների և փախստականների համար: Այնտեղ բոլոր կազմակերպական հարցերն իրականացրել են կանայք: Հա, տղամարդիկ այնտեղ էին, որովհետև գիշերային ժամերին դա անհրաժեշտ էր, բայց պատերազմի օրերին իսկապես դրսևորվել է կանանց կազմակերպական ձիրքը. թե՛ սնունդ, թե՛ դեղորայք բաժանելը, թե՛ հոգեբանական աջակցություն ցուցաբերելը" (Քրիստինե, Վայոց Ձոր):

2020թ. 44-օրյա պարետազմը փոխեց ամբողջ հասարակության կյանքն ու կենսաձևը, մտածողությունը, նաև ուղղակի կամ անուղղակի անդրադարձավ

մարդկանց, ընտանիքների, համայնքների վրա՝ խլելով հարազատների կյանքը, փոխելով կյանքի բնականոն ընթացքը:

«Կորուստներ ունեցա՝ ոչ հարազատ, բայց եղբայրս զոհվեց: Գյուղից ունենք երեք զոհ: Գյուղ մտնելիս դա ենք միշտ մտածում, հիշում: Ամուսնացել եմ 2022թ-ին՝ պատերազմից հետո. ամուսնությունը հետաձգում էինք պատերազմի պատճառով. ամուսինս զինվորական է: Պայքարեցինք մեր հոգեբանական ապրումների հետ, դա էլ կարգավորեցինք»: (Սիրանուշ, Կոտայքի մարզ)

«Նույնիսկ այն մարդիկ, ովքեր պատերազմի հետ ուղիղ առնչություն չեն ունեցել, շատ ազդվել են: Մենք ունենք Դիլիջանում համայքնային կենտրոն, որտեղ շատ կանայք էին հավաքնում, և իրենց տունն ու երեխաներին թողած՝ պաշտպանական ցանցեր էին գործում, հնարավոր ամեն ինչ անում էին, հետո՝ աջակցում տեղահանված արցախցիներին թե՛ սնունդով և հագուստով, թե՛ տուն առաջարկելով, և այդ ամենը նախաձեռնություն էր: Դրանից նաև միմյանց ապրումակցելու մակարդակը բարձրացավ: Սա ես լավ բաներ եմ նշում, սա «ծաղիկներ են», բայց կան կանայք, ում ուղղակի է վնասել պատերազմը՝ կորցրել են կյանքի գույներ, դարձել են դժվար ճանաչելի, անգամ իրենց աչքերն են փոխվել: Գիտեմ նաև, որ կան ընտանիքներ, որտեղ անգամ երկու որդի են կորցրել, ու այդ կանայք ուժեղ կանգնած են. հավաքում է կանանց, քննարկում իրենց խնդիրները, դպրոցներում հոգեբանական սեանսներ են կազմակերպում: Տեսնում ես, որ այդ կինը, այդ մայրը երկրորդ շունչ է ստացել, որովհետև այլ տարբերակ չկա» (Մելինե, Տավուշի մարզ):

Նշվում է, որ պատերազմի օրերին բոլորը, անգամ՝ դպրոցականներն էին շատ ակտիվ և աջակցող: Բոլորի մոտ սրտացավություն, «մայրական սեր» էր արթնանում: Բոլորը միմյանց համար հոգ էին տանում:

«Տղամարդկանց և կանանց միջև էական տարբերություններից է այն, որ կանայք արտահայտվում են, իսկ տղամարդիկ ամեն ինչ ներս են գցում: Պատերազմի օրերին, օրինակ, ով որ վշտի մեջ էր, հավաքվում էինք, խոսում էինք, օգնում էր, իսկ տղամարդիկ չէին կիսվում, ավելի ծանր էին տանում» (Գայանե, Արագածոտն):

Ռեսպոնդենտներից մեկը 2020թ-ի Արցախյան պատերազմում կորցրել է իր եղբորը: Նշում է, որ շատերն են կորուստներ ունեցել, և իրենց ընտանիքները փորձել են միմյանց սատարել, ոգևորել: Կանանց դերը պատերազմում և հետպատերազմական վիճակում տեսնում է և՛ անմիջական մասնակվցության, և մասնակիցներին սատարելու մեջ: Դարձյալ, տղամարդկանց հետ հավասարապես ծառայելու համեմատ ավելի նախընտրելի են այնպիսի պաշտպանական գործառույթներ, որոնք, զրուցակցի կարծիքով, ավելի են համապատասխանում կնոջ կարողություններին.

«Կարդացել եմ, որ կանայք լավ դիպուկահարներ են: Բայց քանի որ Հայաստանի անվտանգությունը ծայրահեղ վատ վիճակում է, դա կնոջ տեղը չէ: Ոչ կնոջ, ոչ տղամարդու տեղն է դա: Մեր տեղը դիվանագիտության, բանակցության դաշտն է: Կանայք ավելի համբերատար են, ավելի լավ բանակցող, զիջող» (Գոհար, Գեղարքունիքի մարզ):

Պատերազմի մասին կանանց հիշողություններում առկա է հաղթահարելու, զուսպ և ուժեղ լինելու, կազմակերպելու, ջանք գործադրելու և մյուսներին ապահովելու տրամադրվածությունը.

«Քողարկման ցանցեր են գործել, գուլպաներ՝ զինվորների համար: Հիմնականում կամավորություն է. զորամասերում ունենք ծանոթներ, հին համազգեստ ենք վերցնում, որոնք արդեն պետք է վերացնեին. դրանցից քողարկման ցանցեր ենք գործում» (Կարինե, Սյունիքի մարզ):

Կարևոր է նկատել, որ պատերազմի ամիսներին և պատերազմից հետո, կանանց խոսքերով, կատարել են և՛ կանանց, և՛ տղամարդկանց վերագրվող գործարույթներ, կրել են դժվարությունների ամբողջ ծանրությունը՝ առանց այն տիպաբանելու որպես տղամարդու, կամ կնոջ պարտավորություն:

«Մենք մեր բաժնի կանանցով, գրեթե վեց ամիս շարունակ քրտնաջան աշխատանք ենք կատարել, գրեթե մոռացել էինք, որ կին ենք: Արցախցի կանանց հետ միասին և՛ ֆիզիկապես, և հոգեպես էինք ապրում այն ամենը, ինչ տեղի էր ունենում պատերազմի ժամանակ և դրանից հետո: Ֆիզիկապես հանգստանում էինք, և անցնում էր, իսկ հոգեբանորեն չէինք կարող այդ ամենը միանգամից հաղթահարել: Այդ ժամանակ նաև կորոնավիրուսային համավարակն էր, ոտքի վրա տարանք: Համարում եմ, որ կինը շատ ամուր էակ է, ամեն ինչ կարող է

հաղթահարել, ու դրանով համոզվեցինք. այնքան աշխատանք կատարեցինք, որ հիմա զարմանում եմ, թե ինչպես կարողացանք այդ ամենն անել: Հետո 2023թ-ի սեպտեմբերից նորից արցախցիներ եկան, դե՝ արդեն փորձ ունեինք, էլի ստացվում էր» (Նաիրա, Կոտայքի մարզ):

Պատերազմի ընթացքում և դրանից հետո բարեգործական գործունեության նախաձեռնման գործում մեծ դերակատարում են ունեցել կին գործարարներ, բարերարներ, ովքեր հաճախ չեն բարձրաձայնել իրենց աջակցության մասին, սակայն նպաստել են համայնքներում միասնականությանն ու համատեղ գործունեությանը:

«Այստեղ ծերանոց ունենք, օգնում ենք, օրինակ՝ Լեռնահայաստան հիմնադրամ, Գագիկ Ճառուկյան հիմնադրամ: Ի դեպ՝ Ռոզա Ճառուկյանը հաճախ է գալիս, ասում է. "դուք ինձ ասեք՝ Բաբո. ես տարեց կամավոր եմ": Այնքան թել է ուղարկել՝ գուլպաներ գործելու: Դրանք գործող տատիկները գուլպա են գործում, մեջը գրություն են գրում՝ ուղարկում զինվորներին: Այս կամավորական ծրագիրն արդեն վեցը տարի գործում է. նաև Արա Շահինյանի բարեգործությունն է: Իրականում ոչ թե գուլպա գործելն է արդյունքը, այլ այն գաղափարը, որ գուլպա գործող տատիկը աջակցում է զինվորին, բանակին, իսկ զինվորը իրեն պաշտպանում է և իր ծառայության ժամանակ մտածում իր թիկունքում գտնվող մարդկանց մասին: Սուսաննա Մարտիրոսյանը Ծիածան ընկերության տնօրենն է, ինքն էլ է բարեգործ, ակտիվիստ, միանում է թրեյնինգներին, մեր գործունեությանը, լավ ձեռնարկատեր է, միշտ աջակցում է հայ կանանց, որ կյանք, բաց մտածելակերպ ունենան» (Կարինե, Սյունիքի մարզ):

Նշվել է, որ 2020թ-ի 44-օրյա պատերազմից և 2023թ-ի աշնանը Արցախի հայերի բռնի տեղահանումից հետո արցախցի կանանց համար նախաձեռնվել և իրականացվում են ծրագրեր՝ աջակցելու իրենց աշխատանքի տեղավորմանը նոր գիտելիքների և կարողությունների փոխանցման միջոցով:

«Սոց. նախարարությունը աշխատանքներ է իրականացնում՝ արցախցի կանանց ներգրավելու համար: Աշխատում եմ էլեկտրոնիկայի խանութում, երկու կին Արցախից աշխատանքի ենք ընդունել: Աշխատող, արարող ժողովուրդ են. սուտ է, թե «արցախցիները չեն սիրում աշխատել» (Լաուրա, Սյունիքի մարզ):

Միևնույն ժամանակ, մարզաբնակ կանանցից ոմանք իրենց հետ հարցազրույցներում նշեցին, որ ցանկալի է նման ծրագրեր իրականացնելիս չնշել հենց արցախցի կանանց, ծրագրերն իրականացնել նման գիտելիքների և կարողությունների կարիքն ունեցող բոլոր կանանց համար՝ առավելությունը չտալով Արցախից տեղահանվածներին:

«Արցախից տեղահանվածների համար շատ դասընթացներ են կազմակերպվում՝ կարի, վարսահարդարման, մատնահարդարման, որպեսզի հետո աշխատեն: Բայց դե այստեղ տարբերակում է դրվում, ինչը չեմ կարող ընդունել՝ «Դասընթացներ արցախցի կանանց համար»: Դա ճիշտ չէ. ինչու՞ չիրականացնել դասընթացներ բոլոր կանանց համար» (Արփինե, Վայոց Ձոր):

Արցախցի կանանց հատուկ չառանձնացնելու և իրենց ու տեղացի կանանց միջև տարբերակում չդնելու մասին կարծիքը նշվել է և՛ մի շարք հարցազրույցներում, և՛ Ֆոկուս-խմբային քննարկումներում, սակայն քննարկումներում հավանության չի արժանացել. բացատրվել է, որ **Արցախից բռնի տեղահանված հայ բնակչությունը, այդ թվում՝ կանայք, ունեն հատուկ կարիքներ, որոնց նաև պետք է ուղղված լինեն կանանց կարողությունների զարգացման, խթանման հատուկ ծրագրեր**:

«Հատկապես տեղահանվածների մոտ պատերազմից հետո առաջացել է իրենց սակավ ֆինանսական միջոցները ճիշտ բաշխելու հնդիրը: Նրանց մոտ կարևոր է այդ կարողությունների զարգացման ծրագրերի իրականացումը: Շատերը, օրինակ, ուզում են ջերմոց ստեղծել, բայց չգիտեն, ինչպես դա անել: Գյուղաբնակների, այդ թվում՝ կանանց շրջանում անհրաժեշտ է փոքր բիզնեսի հիմնադրման և զարգացման, դրամաշնորհներին դիմելու հայտերի պատրաստման հմտությունների զարգացումը: Ոմանք կարիք ունեն անգամ համակարգչային ծրագրերին տիրապետելու, ապա՝ բիզնես ծրագրեր մշակելու համար անհրաժեշտ կարողոությունների» (Անի, Վայոց Ձոր):

Հետաքրքիր է նկատել, որ զրուցակիցներից շատերի խոսքերով՝ Արցախի հայությունն ունի բնավորության ավելի ամուր, կայուն, զուսպ, դժվարությունների հանդեպ դիմացկուն և միևնույն ժամանակ անկոտրուն, ակտիվ, առաջնորդական կարողություններ, քան՝ հայաստանցիները, ինչը, հավանաբար, ձևավորվել է

դժվարությունների պայմաններում ապրելու, մարտահրավերներին դիմակայելու արդյունքում:

Բացի այդ, նշվում է նաև, որ Արցախի հայությունն ունի ավելի բարձր կենցաղային մշակույթ, քան՝ հայաստանցիները, և ավելի քիչ են «վարակված» սպառողական վերաբերմունքով մշակույթի, արվեստի, միմյանց հանդեպ. ավելի մարդկային են:

«Տարիներ առաջ բեմադրել էինք թատերական ներկայացում և գնացել էինք Արցախ թատերախաղերի: Շուշիում՝ դահլիճում կային տարբեր տարիքի մարդիկ, այդ թվում՝ զինվորներ, երեխաներ: Այսքան տարբեր մարդ, ու ոչ փոշի, ոչ աղբ: Երբեք չեմ մոռանա, թե զինվորներն ինչպիսի ուշադրությամբ էին լսում: Փաստորեն, այստեղից մի քանի հարկուր կիլոմետր այն կողմ, ու բոլորովին այլ մակարդակ» (Մարո, Վայոց Ձոր):

Պատերազմից հետո կանանց վրա դրված հոգսերը շատացել են. ինչպես նշում են՝ կանայք հաճախ ստիպված են կատարելու նաև տղամարդկանց վրա ավանդաբար դրված պարտականությունները: Պատերազմից հետո շատ ընտանիքներ կան, ովքեր ունեն անգործունյա տղամարդ անդամներ: Այդ ընտանիքների կանայք փորձում են որքան հնարավոր է շատ տեղերում աշխատել, անգամ՝ հավաքարարուհի, մատուցողուհի, և այլն: Պարբերաբար հավաքներին ուղարկվող տղամարդիկ տնից բացակայում են, և կայանք, այդ թվում նաև՝ պայմանագրային զինծառայողների տիկնայք, ընտանիքի, հողամասի ամբողջ հոգսերն իրենց վրա են վերցնում: Շատ կանայք նաև մեքենա են վարում, որպեսզի ամուսնու բացակայությամբ երեխաներին դպրոց տանեն: Այստեղ խոսքը ոչ թե իրավահավասարության, այլ անհրաժեշտության մասին է:

Պատերազմի ընթացքում և դրանից հետո Հայաստանի կանայք դարձյալ ցուցաբերեցին կամքի ուժ, տոկունություն, հոգեկան և ֆիզիկական ամրություն, և պետության ու հասարակության պաշտպանության պատրաստակամություն:

«Մեր ազգը միշտ հարմարվող է եղել, և քչով բավարարվող. Շատ կուզեի, որ ավելի շատ պայքարող լինենք, ինչպես դարեր առաջ: Բայց թույլ չենք: Օրինակ՝ Արցախից վերաբնակեցվածները շատ ուժեղ են, հնարավորություններ են փնտրում: Այդ մարդիկ ուզում են իրենց երկիրը, իրենց տարածքը, իրենց հողը: Բոլորս գիտակցում ենք, որ նույն կարգավիճակում բոլորս կարող ենք հայտնվել, ու պետք է ամեն ինչ անենք, որ դա տեղի չունենա: Բայց փաստացի ամեն ինչ,

ինչ կարող էինք, արեցինք: Կանայք տվեցին իրենց զավակներին, որոնք վերացան: Դա ահավոր է, երբ 18-20 տարի երեխա ես պահում-մեծացնում, ու հանկարծ հանդիպում ես մի անդունդի, որի հետ չես կարող երբեք հարմարվել: Հայտնվել էի հիվանդանոցում ու հանդիպել իմ տարիքի կանանց, ովքեր պատերազմում կորցրել են իրենց զավակներին: Գնացել էին արհեստական բեղմնավորման, որպեսզի նորից երեխա ունենան: Իմ տարիքի կանայք էին, ովքեր ունենի 60 տարեկանի տեսք: Իրենց մեջ ուժ է հայտնվում, տալիս են իրենց ամեն ինչը՝ հաղթանակի համար: Էլի, եթե պատերազմ լինի, ժողովուրդն է կռվելու, պայքարելու, բայց ժողովուրդը չի կարող դառնալ կառավարություն, որպեսզի ճիշտ որոշումներ ընդունի: Ժողովուրդն իրականում ամեն ինչ, ինչ կարող էր, արել է: Պետք չէ ասել, որ ժողովուրդը քնած է, անտարբեր է, և այլն. Դա այդպես չէ: Չունենք ուժեղ առաջնորդ, և քանի որ չունենք՝ հիմա քաոսի մեջ ենք: Պատերազմը սովորեցրեց սիրել այն, ինչ ունենք: Հնարավոր է, որ պատերազմը կանանց ավելի ուժեղ դարձրեց. Եթե պետք լինի՝ կանայք էլ կարող են վերցնել զենքն ու պաշտպանել հայրենիքը» (Կարինե, Տավուշի մարզ):

Վերջին տասնամյակի իրադարձությունները նաև շեշտում են միջսերնդային դինամիկան: Երիտասարդ կանայք, դիտարկելով իրենց մայրերի և տատերի ակտիվիզմը, հավանաբար կշարունակեն այս ժառանգությունը: Կանանց՝ որպես համայնքային առաջնորդների, ակտիվիստների և հասարակական մտավորականների դերի ընդլայնումը նշանակալի մշակութային տեղաշարժ է, որը կարող է երկարաժամկետ արդյունքներ ունենալ Հայաստանի ապագայի համար: Եթե 2018թ. “Թավշյա հեղափոխությունը” հանրային մասնակցության համար դռներ բացեց զուտ սիմվոլիկ՝ ցուցադրական կերպով, ապա 2020 և 2023 թթ. ճգնաժամերը կանանց դարձրին հասարակությունը միասնական պահելու անփոխարինելի դերակատարներ:Հարցված կանանց մեծամասնությունը նշում է, որ ղարաբաղյան հակամարտությունը մնում է չլուծված՝ թե՛ իրենց անձնական կյանքի, թե՛ պետության համար: Իրենց կարծիքով, հակամարտության լուծումը չի կարող սահմանափակվել հրադադարի ստորագրմամբ կամ բռնության ժամանակավոր դադարեցմամբ: Փոխարենը, նրանք ընդգծում են խաղաղության համաձայնագրի անհրաժեշտությունը, որը հակամարտության բոլոր կողմերը փոխադարձաբար կճանաչեն, կկարևորեն և կկատարեն: Հարցվածների կարծիքով,

միայն այն համաձայնագիրը, որն ապահովում է օրինականություն փոխադարձ ճանաչման միջոցով, կարող է ստեղծել համակեցության ամուր հիմք:

Նշվում է, որ հակամարտության հակառակ կողմի (Ադրբեջանի) կողմից հնչեցվող հռետորաբանությունն ու գործելակերպը ցույց չեն տվել նման փոխակերպող մոտեցում որդեգրելու պատրաստակամություն: Փոխարենը, նրանք մատնանշեցին թշնամական դիսկուրսի, ժխտողական վերաբերմունքի և թշնամական ժեստերի ուժգնացումը, որոնք ազդարարում են շարունակական թշնամանքի, այլ ոչ թե հաշտեցման ուղղությամբ քայլի մասին: Նրանց փորձը համընկնում է ձգձգված հակամարտությունների գիտական վերլուծությունների հետ, որոնք ընդգծում են քաղաքական դիսկուրսի կենտրոնական դերը թշնամանքի շարունակման կամ թուլացման գործում: Կանանց վկայությունները ցույց են տալիս, որ նման դինամիկան շարունակում է տարածված լինել՝ դրանով իսկ ամրապնդելով նրանց այն պատկերացումը, որ հակամարտությունը դեռևս շատ հեռու է լուծումից:

Հարցված կանանց կարծիքով, որպեսզի խաղաղությունը իմաստալից լինի, այն պետք է տարածվի աշխարհաքաղաքական ասպարեզից դուրս՝ դեպի առօրյա գոյության անձնական ոլորտներ՝ ապահովելով ֆիզիկական անվտանգություն, վերականգնելով արժանապատվությունը և նպաստելով պաշտպանվածության զգացողությանը: Առանց նման փոփոխությունների, նույնիսկ պաշտոնական հայտարարությունները և կարգավորումները չեն հանգեցնի կայուն խաղաղության:

Կանանցից շատերը նշեցին, որ կորստի, տեղահանության և անորոշության իրենց անձնական փորձը բավարար չափով չի ճանաչվել խաղաղության կառուցման ազգային կամ միջազգային շրջանակներում: Նրանց համար հակամարտության չլուծված լինելը ոչ միայն իրավական կամ քաղաքական հարց է, այլև մարմնավորված իրականություն, որը ձևավորում է նրանց առօրյա կյանքը: Ինչպես ցույց են տվել հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ հետազոտությունները, չլուծված հակամարտությունների հոգեբանական և սոցիալական հետևանքները, ներառյալ տրավման, անվստահությունը և մարգինալացումը, կարող են տևել երկար ժամանակ ակտիվ ռազմական գործողությունների դադարից հետո: Այս հետևանքները ազդում են ոչ միայն անհատների, այլև սերունդների միջև հարաբերությունների վրա, քանի որ չլուծված դժգոհություններն ու վախերը փոխանցվում են ընտանիքների և

համայնքների ներսում: Այսպիսով, երբ կանայք հակամարտությունը նկարագրում են որպես «չլուծված», նրանք կենտրոնանում են վտանգի ինչպես կառուցվածքային, արտաքին, այնպես էլ ներքին կողմերի վրա, որոնք շարունակվում են՝ չնայած պաշտոնական քաղաքականության կամ դիվանագիտական գործընթացների փոփոխություններին:

Հակամարտությունները մնում են չլուծված, երբ մերժվում են հիմնական կարիքները, ինչպիսիք են անվտանգությունը, ինքնությունը և ճանաչումը: Կանանց պնդումը խաղաղության համաձայնագրի վերաբերյալ, որը երկու կողմերն էլ «ճանաչեն և գնահատեն», ցույց է տալիս հետևյալը. առանց փոխադարձ ճանաչման, համաձայնագրերը կարող են մակերեսային լինել և արագ խախտվել: Սա հատկապես ճիշտ է այն համատեքստերում, երբ պատմական հակասությունները ժխտումը կամ ուրիշների տառապանքները ճանաչելուց հրաժարվելն օգտագործվում է որպես քաղաքական գործիք: Հայ կանանց համար սեփական մոտեցումների, դժվարությունների ճանաչումը վերացական իրավական հասկացություն չէ, այլ կոլեկտիվ տրավմայի բուժման և համատեղ ապագան պատկերացնելու նախապայման են:

Հետևաբար, կանանց պատկերացումներն օգնում են վերանայել այն, թե ինչ է նշանակում հակամարտությունը «լուծված» հայտարարելը: Նրանց տեսանկյունից, հակամարտության կարգավորումը չի կարող նույնացվել ռազմական գործողությունների դադարեցման կամ վերնախավի կողմից նախապատրաստվող պայմանագրերի ստորագրման հետ: Փոխարենը, այն ենթադրում է հակամարտության ամբողջական փոխակերպում, որը ներառում է հակամարտության դիսկուրսիվ, կառուցվածքային և փորձառական կողմերը: Այս ըմբռնումը համահունչ է խաղաղության ուսումնասիրությունների ավելի լայն բանավեճերին, որոնք կասկածի տակ են դնում պետականակենտրոն և ռազմական մոտեցումների արդյունավետությունը խաղաղաշինության գործում, և պահանջում են հակամարտող հասարակությունների ամբողջական ներառում:

Կանանց մեկնաբանությունները հանգեցնում են եզրակացության, որ ներկա պայմաններում ղարաբաղյան հակամարտությունը չի կարող լուծված համարվել: Թեև պաշտոնական հայտարարությունները կարող են վկայել խնդրի լուծման գործում առաջընթացի մասին, իրականությունը շարունակում է բնութագրվել անորոշությամբ, անվստահությամբ և իրական երկխոսության բացակայությամբ: Կանանց շեշտադրումը փոխադարձ ճանաչման, ներառական

մասնակցության և առօրյա անվտանգության հարցերի վերաբերյալ ընդգծում է նեղ սահմանված՝ պետական մարմինների կողմից “խաղաղության” հայտարարման սահմանափակումները: Այն նաև ընդգծում է կանանց ձայների հնարավոր ներդրումը հաշտեցման այլընտրանքային ուղիների մշակման գործում: Կանայք պնդում են, որ քանի դեռ Ադրբեջանի կողմից գերակշռում են թշնամական հռետորաբանությունը և բացառման գործելակերպը, հակամարտությունը կմնա չլուծված՝ թե՛ իրենց համար որպես անհատների, թե՛ հայ հասարակության համար:

Հարցվածներից ոմանք կասկածում են հակամարտության վերաբերյալ քաղաքական որոշումների կայացմանը սեփական ներդրում ունենալու հնարավորությանը՝ նշելով, որ խաղաղության և անվտանգության վերաբերյալ որոշումները կայացվում են ամենաբարձր քաղաքական և ռազմական մակարդակներում և մեծ մասամբ անհասանելի են մնում սովորական քաղաքացիների, մասնավորապես՝ կանանց համար:

Միևնույն ժամանակ, հայ կանայք հավատում են սեփական ուժերին, գիտելիքներին և կարողություններին՝ իրենց շարունակական սոցիալական, համայնքային, կրթական և քաղաքական ներգրավվածության միջոցով նպաստելու երկրի ամրապնդմանը: Ընդգծվում է կանանց դերակատարումը համայնքներում, քաղաքացիական հասարակության կազմակերպություններում և ավելի լայն ազգային ծրագրերում՝ հանրային կարծիք ձևավորելու, խոցելի խմբերի կարիքները բարձրաձայնելու և ներկայացնելու առումով: Կանայք ոչ միայն հակամարտությունից տուժած կողմ են, այլև փոփոխությունների առաջամարտիկներ, ովքեր կառուցում են համերաշխության ցանցեր և պաշտպանում արդարությունը:

Համայնքային մակարդակում որոշ հարցվածներ նկարագրել են իրենց շարունակական ներգրավվածությունը կրթության, մարդասիրական աշխատանքների և հասարակական կազմակերպությունների ոլորտներում: Ազգային մակարդակով, ընդգծվեց կանանց աճող մասնակցությունը քաղաքացիական նախաձեռնություններին, քաղաքական գործընթացների հանրային քննարկումներին, պետական կառավարման համակարգի գործունեությանը: Հարցազրույցներում արտացոլվեց կանանց ընդլայնվող մասնակցությունը պաշտպանության և անվտանգային հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի ձևավորմանն ու արտահայտմանը, պաշտպանական համակարգում կանանց ուղղակի և աճող ներգրավվածությունը՝ որպես

ժողովրդավարական մշակույթի և հաշվետվողականության ամրապնդմանն ուղղված կարևոր գործոնի: Կանանց ներգրավվածությունն անվտանգության և խաղաղության ամրապնդման ոլորտներում՝ փափուկ և կոշտ ուժի ինստիտուցիոնալ կառույցներում և գործընթացներում, արտացոլում է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի դիտարկումները, որտեղ ընդգծում է կանանց մասնակցության կենսական դերը խաղաղության կառուցման և հակամարտությունից հետո հասարակությունների վերականգնման գործում:

4. Կանանց առաջնորդական ներուժն ու իրականությունը

4.1. Առաջնորդության ընկալումը կանանց պատկերացումներում. արդյունավետ դեպքեր

Քննարկելով առաջնորդի մասին պատկերացումները՝ հետազոտության մասնակից կանայք առավել հաճախ նշում էին տղամարդ առաջնորդների կերպարներ թե՛ պատմությունից, թե՛ ժամանակակից կյանքից, այդ թվում՝ ոչ միայն դրական, այլև պատմության ընթացքում բացասական հետք թողած գործիչներին: Այս միտումը ընդգծում է մասնակիցների շրջանում ավելի խորը ըմբռնումն այն մասին, որ առաջնորդությունն ինքնին առաքինության կամ բարոյականության հոմանիշ չէ: Ավելի շուտ, դա կոլեկտիվ վարքագծի վրա ազդելու, մոբիլիզացնելու և ուղղորդելու կարողություն է՝ անկախ նրանից, թե արդյունքները կառուցողական են, թե կործանարար: Շատերի համար առաջնորդությունը նույնացվում էր տեսանելիության, հեղինակության և պատմության մեջ հետք թողնելու կարողության հետ:

Խոսելով առաջնորդի ցանկալի կերպարի որակների մասին՝ հարցազրույցների մասնակից կանայք նշեցին.

- ազնվությունը. նույնիսկ դժվար ընդունելի ճշմարտությունն ավելի գնահատելի է, քան՝ գեղեցիկ սուտը,
- ապագան կանխատեսելու կարողություն, համազգային զարգացման ծրագիր, տեսլական ունենալը,
- կարեկցանքն ու հոգատարությունը սեփական հասարակության հանդեպ,
- դիմադրողականությունն ու հարմարվողականությունը,
- ոգեշնչումը և ուղղորդումը, «ճանապարհ ցույց տալը»,
- պատասխանատվությունը,
- հաշվետվողականությունը. առաջնորդները երբեք չպետք է «թաքնվեն խմբի ետևում»,
- լսելու կարողությունը,
- բարդ, ճգնաժամային պայմաններում արդյունավետ որոշումներ ընդունելու կարողությունը,

- հաղորդակցական արվեստին տիրապետելը. ուղերձները հստակ փոխանցել, հարմարեցնել տարբեր լսարաններին և ապահովել, որ բոլորն իրենց տեղեկացված զգան,
- կոնֆլիկտների լուծում. վեճերի արդարացի միջնորդությունն ու համախմբվածությունը խաթարող գործոնների կանխարգելումը,
- աշխատանքի արդյունավետ բաժանման՝ պատվիրակման կարողությունը,
- ռազմավարական մտածողությունը. ռիսկերի կանխատեսում, անսպասելի իրավիճակների դեպքում պլանավորում և գործողությունների համապատասխանեցում երկարաժամկետ նպատակներին:

«Եթե ես չեմ կարող վստահել իմ առաջնորդների խոսքերին, ապա նրանց գործողությունները ինձ համար ոչինչ չեն նշանակում»:

«Եթե ես չեմ կարող վստահել իմ առաջնորդների խոսքերին, ապա նրանց գործո

Հայտնի կին-առաջնորդների մասին խոսելիս՝ նշել են Մարգարետ Թեթչերին, Նենսի Փելոսիին, նաև՝ Լյուդմիլա Հարությունյանին:

«Մարգարետ Թեթչերը. իրեն ասում էին՝ «Երկաթե լեդի», բայց իր ներսում շատ փխրուն կին էր թաքնված»:

«Նենսի Փելոսի՝ հատկապես իր արտահայտությունը, թե «47 տարեկանում հասկացա, որ պետք է թողնեմ իմ խոհանոցը և մտնեմ մեծ քաղաքականություն», ինձ համար առանցքային է եղել, այսինքն՝ կինը պետք է նույնիսկ խոհանոցում մտածի ոչ միայն թե ինչ պատրաստեմ, այլ լայն մտածողություն, աշխարհայացք ունենա: Կարող ես անգամ խոհանոցի գոգնոցդ հանես ու մտնես մեծ քաղաքականություն»:

«Ես Հայաստանում այդպիսի կին-լիդեռներից միայն Լյուդմիլա Հարությունյանին եմ հիշում» (Ֆոկուս-խմբային քննարկումներից):

Հատկապես երիտասարդ հարցվածների շրջանում իրենց մայրերը հաճախ նշվում էին որպես առաջնորդության ամենաակնհայտ և կայուն օրինակներ: Մասնակիցները նկարագրեցին, թե ինչպես են իրենց մայրերը առաջնորդի դերեր ստանձնել ընտանիքներում՝ այնքան բնական և անվիճելի ձևերով, որ նրանց

հեղինակությունը երբեք կասկածի տակ չի դրվել: Այս կանայք պարտադիր չէ, որ ճանաչված լինեին հասարակական կամ քաղաքական կյանքում, սակայն ընտանիքի շրջանակներում նրանք մարմնավորում էին հենց այն հատկանիշներից շատերը, որոնք մասնակիցները համարել էին արդյունավետ ղեկավարման համար կարևոր՝ վճռականություն, պատասխանատվություն, հարմարվողականություն և վստահություն ներշնչելու կարողություն:

Կանանց միջև առկա է առանձնահատուկ փոխըմբռնում. նման իրավիճակում են, իրենց կողմից կանանց հիմնախնդիրների մասին խոսելը, կանանց կարծիքն արտահայտելը բնականոն է և հիմնավորված:

«Կանանց հետ շատ եմ շփվում: Մի օրի ենք, մի հալի ենք, գիտենք, որ բոլորիս խնդիրները շատ նման են»: (Նաիրա, Կոտայքի մարզ)

Հարցված կանայք հավատում են սեփական ուժերին, գտնում, որ կինը ուժեղ, խելացի, համառ, նպատակասլաց է, և կարող է յուրաքանչյուր նպատակի հասնել, եթե այն դնում է և անհրաժեշտ ջանքեր է գործադրում:

«Չի եղել որևէ բան, որ առաջարկել ենք, պահանջել, ու չի ստացվել: Որովհետև առաջարկները հիմնավորված են: Եթե չանեմ՝ ոչինչ չեմ կարողանա անել. Ունեմ զարգանալու մոտիվացիա: Դրա համար պետք են միջոցներ և գումարներ» (Սիրանուշ, Կոտայքի մարզ):

«Եթե մենք ձեռքերս ծալենք-նստենք՝ ոչ ոգ մեզ չի աջակցի: Պետք է ինքներս ուժեղանանք» (Անի, Տավուշ):

«Աղջիկը, կինը պետք է գիտակից լինի, պետք է զարգացնել իրենց կարողությունները, գիտելիքները: Պետք է հասկանան, որ կարևոր են հասարակության համար, արժևորեն իրենց. տանը նստելով՝ ոչինչ չեն փոխելու: Պետք է մեծացնենք մեր կապերը, տեղեկատվությունը ավելի հասանելի դարձնենք» (Մերի, Տավուշի մարզ):

Բացի ազգային և միջազգային մակարդակի կին-առաջնորդների մասին պատկերացումների և իրենց մասին հիշատակումների՝ խոսվել է համայնքային մակարդակում կանանց առաջնորդության, տեղական մակարդակում կանանց կողմից իրականացված նախաձեռնությունների և մտահղացումների, հիմնադրված

կազմակերպությունների և ձեռնարկությունների, կանանց սատարման միջոցառումների մասին:

Միկրոմակարդակի առաջնորդությունը ոչ պակաս կարևոր է, քան՝ ազգային, քանի որ խթանում է համայնքների զարգացումն ու նպաստում պետական հենքերի ամրապնդմանը, մարդկանց համագործակցությանը: Այդպիսին է ռեսպոնդենտներից մեկի՝ Արագածոտնի մարզի ք. Թալինի բնակիչ Գայանե Խաչատրյանի պատմությունը, ով Թալինի՝ Կանանց ռեսուրսային կենտրոն-հիմնադրամի հիմնադիր է, կանանց աջակցում է վերապատրաստումներում, նաև՝ ձեռագործության աշխատանքներում, որոնք օգնում է իրացնել, այդ թվում՝ ՀՀ-ում արտերկրի դեսպանատների, բարերարների հետ համագործակցությամբ: Ձեռագործությունը Թալինի շրջանում տարածված կարողություն է, նույնիսկ, ինչպես ասում է զրուցակիցը, «ամոթ է, եթե աղջիկը ձեռագործությանը չի տիրապետում»:

«Շրջեցինք գյուղերով, լուսանկարեցինք կանանց աշխատանքները, Նորվեգիայի հյուպաթոսն ասաց՝ ձեր կանանց աշխատանքը շատ կոկիկ է և մաքուր. ընդունեցինք առաջին պատվերը, ստեղծեցինք հիմնադրամ» (Գայանե, Արագածոտն):

Սա զրուցակիցը դարձրեց կանանց համար զբաղվածության, եկամուտների ստացման միջոց: Կանայք գործում են տարազը կրող տիկնիկներ, կախազարդեր, տոնածառի խաղալիքներ, և այլն: Ընդունում է մեծ պատվերներ, օգնում է իրացնել, այդ թվում՝ ուղարկել արտասահման, կանանց ապահովում է եկամտով, որի անհրաժեշտությունը մարզում մեծ է:

«Շատ շատերի բախտը չի բերում, հատկապես՝ գյուղաբնակ աղջիկների: Իմ բախտը բերեց՝ սովորեցի, դարձա ուսուցչուհի, թարգմանչուհի: Երբ շրջում էի համայնքներով, հատկապես գյուղերով, տեսնում էի կանանց, ովքեր չունեն կրթություն, աշխատանք, և աշխատանք ձեռք բերելու հնարավորություն, և միշտ երազում էի. մի հատ հնար չինի՝ այս կանանց օգնելու: Իրենք ամաչում էին խոսել, ամաչում էին մասնակցել ֆոկուս-խմբերին: Մի կին ինձ անգամ ասաց՝ ապրես դու.մի հատ սիրուն շոր ունեի՝տեղ չկան հագնելու գնալու, հիմա հագնում գալիս եմ քո կազմակերպած միջոցառումներին» (Գայանե, Արագածոտն):

Հիմնադրամով կազմակերպում է նաև այլ միջոցառումներ, օրինակ՝ առաջին բուժօգնության դասընթացներ, մրցավազքի մրցումներ, որոնք միավորում եմ երկու սեռերի մարդկանց, երեխաներին, այդ թվում՝ նաև Երևանից են եկել մարզում մրցավազքին մասնակցելու: Դրանով նաև, ինչպես նշում է զրուցակիցը, «հարթվում են գենդերային կարծրատիպերը, ձևավորվում են նոր կապեր»:

Միկրոմակարդակի առաջնորդության մեկ այլ օրինակ կարող է լինել ռեսպոնդենտներից մեկի՝ Ռիտա Դավթյանի (ք. Աշտարակ) օրինակը, ով նախաձեռնել է իր բնակավայրի մաքրման և կանաչապատման աշխատանքը, հանդիպել համայնքի, բնակիչների բացասական և անտարբեր անձագանքի, ապա կարողացել է վերափոխել հանրային ընկալումներն ու միավորել մարդկանց իրենց իսկ բնակավայրի բարեկարգման համար:

«Թոշակի անցնելով՝ սկզբից զբաղվելի տարածքի մաքրությամբ՝ փորձելով մյուսներին հանրային տարածքը չաղտոտելու, մաքրելու օրինակ ցուցադրել: Ապա՝ ամբողջ փողոցով մեկ սկսեցի ծաղիկներ աճեցնել, հետո՝ ծառատունկ անել: Տեսնելով, որ մենակ եմ, ինձ չեն օգնում, սկզբից ինձ անզոր էի զգում, նեղվում էի, մտածում էի՝ մարդկանց չեմ կարող փոխել: Երեք տարի անց արդեն մի թիմ ունեմ հետս: Հետաքրքրված են, հարցնում են: Ծաղիկների սերմ են խնդրում: Բայց ամեն դեպքում հիմնականում հետաքրքրված են միայն իրենց սեփական տարածքով, բակով.ընդհանուր տարածքն իրենց չի հետաքրքրում:
Շատերը ասում են. կներես, որ չենք օգնում քեզ: Ամեն դեպքում, իրենց գութը ինչ-որ տեղ շարժվել է, մեղքի զգացում ունեն: Ես դեռ այդ շարժն եմ սպասում: Բայց որ արդեն աղբը փողոցում չեն թափում, չեն աղտոտում՝ արդեն լավ է» (Ռիտա, Արագածոտնի մարզ):

Ռեսպոնդենտը նշում է, որ հայրենասիրությունը պետք է սովորեցնել, և որ այն միայն մեծ հարցերի քննարկման և լուծման մեջ չէ, այլ քո բնակավայրը, բնությունը, միջավայրը սիրելու, բարեկարգելու, մաքուր պահելու և ծաղկեցնելու մեջ է:

«Սովորեցնել սիրել Հայրենիքը, վերաբերել որպես մնայուն, հոգևոր արժեքի, որ փոխանցվելու է սերունդներին» (Ռիտա, Արագածոտնի մարզ):

Համայնքային առաջնորդության յուրահատուկ օրինակներից է Անահիտ Սիմոնյանի կողմից ք. Թալինում և ք. Իջևանում ստեղծված՝ Քաղաքական

սրճարանները (Political Cafe), որոնց մտահղացումը կապված է եղել համայնքում քաղաքական հիմնախնդիրների քննարկման համար հարթակի ստեղծման անհրաժեշտության հետ: Ռեսպոնդենտի խոսքերով՝ իրենց սրճարանները հատկապես կանանց համար են, ովքեր կարող են սրճելու ընթացքում կիսվել համայնքային խնդիրներով, մոտեցումներով, փորձի փոխանակում իրականացնել, միավորվել:

«Վերցնենք, որպես օրինակ՝ մեր Քաղաքական սրճարանը: Այն ստեղծել ենք ամուսնուս հետ միասին, բայց փաստացի ես եմ այն ղեկավարում՝ ամուսինս այլ տեղ է զբաղված: ***Ոչ թե այն պատճառով, որ ամուսինս չի կարող, այլ որովհետև ես կարող եմ: Կարող ուժ եմ:*** *Պարտադիր չէ որ վճարենք ինչ-որ մենեջերին, որ նա այդ ամենը անի.ես ինքս այդ ամենը կարող եմ: Սրճարանը բացելու ժամանակ մենք շատ կարծրատիպեր ենք կոտրել և՛ Թալինում, և՛ Իջևանում: Երբ բացվում էինք՝ չունեինք սպասարկող անձնակազմ: Թալինում շատ դժվար էր սպասարկման ոլորտում աշխատող աղջիկ գտնել: Ստիպված ամեն ինչ մենք էինք անում: Երբ տեղափոխվեցինք Իջևան՝ բախվեցինք այլ կարծրատիպի. երիտասարդները չեն ուզում այդ ոլորտում ներգրավվել» (Անահիտ Սիմոնյան):*

Իր սրճարանում ռեսպոնդենտը աշխատանքի է ընդունել Արցախից բռնի տեղահանվածների ընտանիքի՝ դիտարկելով արցախցի կնոջ առաջնորդական որակները.

«Ունենք մեզ մոտ սրճարանում աշխատող կին՝ Արցախի Մարտունու շրջանից է, ունի երեք երեխա: Սկեսրարը մահացել է 2020թ-ի ղարաբաղյան պատերազմում, ամուսինը՝ հետագա իրադարձությունների ժամանակ: Իր հետ է ապրում նաև հիվանդ սկեսուրը: Երբ իրեն նայում եմ՝ այնքան հավասարակշռված, կայուն, «ծանր» աղջիկ է. երբ տարբեր խնդիրներ ենք քննարկում, ասում է. դե լավ էլի, անցած լինի: Դժվար է իրեն որևէ բանով զարմացնել. այնքան դժվարություններով են անցել իրենք, որ ոչնչից էլ չեն վախենում» (Անահիտ Սիմոնյան, Արագածոտնի մարզ):

ՀՀ մարզերում կանանց առաջնորդական կարողությունների դրսևորման օրինակներից է նաև ք. Իջևանում (Տավուշի մարզ) բնակվող Կարինե Սարիբեկյանի բիզնես ծրագիրը, որի օգնությամբ նախաձեռնել է մարզաբնակ կանանց

ձեռագործությա, ազգային արհեստների զարգացումն ու ստեղծված արտադրանքի իրացում՝ նպաստելով կանանց ինքնադրսևորմանն ու լրացուցիչ եկամուտների ստացմանը:

«Ունենք շատ տաղանդավոր կանայք, ովքեր տիրապետում են արհեստներին՝ գորգագործություն, կարպետագործություն: Աջակցում են այդ ամենը կազմակերպել, վաճառել: Նկատել եմ, որ հաճախ ամաչում են կանգնել տաղավարում և իրենց պատրաստած արտադրանքը իրացնել» (Կարինե, Տավուշի մարզ):

Ծրագրի նախաձեռնողը նշում է, որ այն մտածված էր ոչ միայն գյուղաբնակ կանանց լրացուցիչ եկամուտներով ապահովելու, իրենց զբաղվածությունն ընդլայնելու, այլ նաև մոտիվացնելու, ալտիվացնելու, սոցիալական հարաբերություններում ավելի ակտիվ ներգրավելու նպատակով:

«Մեր առաջին ծրագրերով մենք փորձեցինք աղջիկներին տնից հանել: Եթե սկզբում հրաժարվում էին իրենց ապրանքները շուկայում ներկայացնել, ապա փորձեցինք համոզել, որ պետք չէ ընկճվել, ապագայում և՛ ապրանքի որակը բարելավվեց, և՛ աջակցեցինք շուկայական հաշվարկներ անելու մեջ: Եթե կանայք մեր ծրագրերում չեն ներառվում, մենք իրենց ներառում ենք» (Կարինե, Տավուշի մարզ):

Ծրագրի շրջանակներում շահառուներին փոպանցվում են կազմակերպական գիտելիքներ և կարողություններ, զարգացվում է նախաձեռնողականությունը:

«Ունենք շահառուներ, ովքեր մեզ հետ համագործակցության արդյունքում արդեն ԱՁ են գրանցել: Օրինակ՝ խոզ վաճառող ԱՁ է անհրաժեշտ, միանգամից տեղեկատվություն ենք փոխանցում, թե ումից ինչ գնեն, նաև սովորեցնում ենք գործել հարկային դաշտում, քանի որ դրա հետ կապված կան վախեր: Այս պահին տղամարդ շահառուների քանակն ավելի շատ է, բայց կան դեպքեր, երբ օգնել ենք կանանց՝ գնելու կարի մեքենա, գրանցելու ԱՁ, առցանց գովազդելու և իրացնելու իրենց ապրանքը: Կուզեի, որ Երևանից մարզեր գային ընկերություններ և ընդգրկեին մեր կանանց: Մեր բնակիչները շատ տաղանդավոր են, բայց չեն կարողանում բացվել տեղեկատվության բացակայության պատճառով» (Կարինե, Տավուշի մարզ):

Առաջնորդությունը սկսվում է փոքր նախաձեռնություններից, որոնց ֆինանսական ապահովումն ու իրականացումն ավելի դյուրին է, և թույլ է տալիս կանանց ձեռք բերել կազմակերպական կարողություններ՝ հետագայում դրանք կիրառելու ավելի մեծ նախաձեռնություններում:

Չնայած կանանց որոշակի ներառվածությանը պետական, այդ թվում՝ ՏԻՄ-րում, հարցվածները դա բավարար չեն համարում: Նշվում է, որ կանայք ունեն առավելություններ տղամարդկանց հանդեպ. կանանց հատուկ որակները կնպաստեին պետական մարմինների և կոլեկտիվների ավելի արդյունավետ աշխատանքին, կնվազեցնեին կոռուպցիոն ռիսկերը, կառողջացնեին աշխատանքային մթնոլորտը:

«Կուզեմ, որ կանանց ավելի շատ տեղ տան: Մեզ մոտ ՏԻՄ ընտրություններում կանայք քիչ են ընտրվել, չնայած պետք է 30% լինեին: ***Կինը ավելի ճկուն է, ավելի հմուտ, ավելի բարեհամբույր, լսող, ավելի պարտաճանաչ****: Կնոջը դժվար է կաշառել, որևէ տղամարդ չի գնա կնոջը կաշառելուն: Տղամարդը տղամարդուն կարող է համոզել, կաշառել, խաթրից խոսել: Ես փողասեր չեմ՝ փառասեր եմ: Կուզեմ ոչ թե փող, այլ, որպեսզի իմ աշխատանքի շնորհիվ քաղաքս բարելավվի: Եթե կինը պաշտոնյա է, իր հետ լեզու գտնելն ավելի հեշտ է: Մեզ մոտ ընդամենը երկու կին-անդամ կա ավագանիում: Բնական է, որ քանի որ քիչ են, չեն արտահայտվում, իրենց ձայնը լսելի չէ: Մենք մեր համայնքապետարանում 12 բաժինների պետեր ունենք, որոնցից երկուսը՝ կին: Քաղաքապետն ունի երկու տեղակալ, որոնցից մեկը կին է /երկրորդ տեղակալը/: Իր հսկողության տակ են հիմնականում մանկապարտեզները, և նա լավ է աշխատում, մասնագետ է: Կուզեմ, որ կանայք ավելի շատ լինեն, բաժինների պետեր և խորհրդատուներ լինել» (Նաիրա, Կոտայքի մարզ):*

«Կանայք ավելի պարտաճանաչ են իրենց գործն անում: Եթե հիմա կարիք լինել վերցնելու ղեկավար պաշտոնում աշխատակից՝ կվերցնեի անոջ: Որովհետև կանայք շատ ավելի կոկիկ են, բծախնդիր, հավաքված, պատասխանատու են, սրտացավությունն ավելի մեծ է: Եվ շատ արագ են սովորում. նոր գիտելիքներ ձեռք բերելու համար իրենց ավելի կարճ ժամանակ է պետք» (Անահիտ, Արագածոտնի մարզ):

Նշվել է, որ կանանց անհրաժեշտ է դրական առաջնորդություն ստանձնել. լինել ոչ թե մյուսներին հրամայող, մյուսների հանդեպ ինքնահաստատվող և պատժող, այլև տանող, աջակցող, խթանող և օրինակ ծառայող:

«Առաջնորդիր, բայց ոչ՝ ինչ-որ մեկի ստորացման հաշվին, ոչ՝ ուրիշների հաշվին ինքնահաստատման նպատակով, այլ քո կարողությունների, գրագիտության շնորհիվ առաջնորդիր մարդկանց, բայց ոչ՝ իրենց իջացնելու հաշվին դու բարձրանաս» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

4.2. Կանանց առաջնորդությանն աջակցող և խոչընդոտող գործոնները

Գրեթե բոլոր հարցազրույցներում կանայք սկզբից նշում էին իրենց ինքնադրսևորմանը խոչընդոտող, ապա նպաստավոր գործոնները: Կանանց և աղջիկների ինքնադրսևորման, զարգացման համար առաջնային խոչընդոտող գործոններից է իրենց սոցիալական միջավայրը: Միջավայրը, շատերի կարծիքով, նպաստավոր չէ առաջընթացի, զարգացման, ինքնադրսևորման համար:

Հատկապես երիտասարդ կանայք նշում են, որ քաղաքաբնակ և գյուղաբնակ կանայք ունեն մեծ ներուժ, սակայն այդ դժվար է իրացնել: Դրա համար պետք է ծրագրեր իրականացնել, տեղեկատվություն տարածել:

«Մեզ մոտ Իջևանում, այդ թվում՝ գյուղերում կան մեծ մարդկային ռեսուրսներ՝ գիտելիքներով հարուստ կանայք և աղջիկներ, ովքեր, օրինակ՝ ամուսնացել են գյուղերում, և չեն կարողանում իրացվել՝ չունեն ինքնադրսևորման տարածք: Պետք են մոտեցումներ, որոնց արդյունքում իրենք կարողանան ինքնադրսևորվել՝ թեկուզ հետագայում բիզնես ծրագրեր իրականացնելու համար» (Թագուհի, Տավուշի մարզ):

«Կինն ինձ համար շատ ուժեղ կերպար է: Մեր համայնքնում ունենք շատ-շատ ուժեղ կանայք այն իմաստով, որ թեկուզ կարող են միայնակ մայր լինել, բայց աշխատել, փոխել իրենց մասնագիտությունը, ոլորտը, առաջ գնալ, նախաձեռնել, գիտի ուր և ինչու է գնում» (Մելինե, Տավուշի մարզ):

Կանանց վարքի, մտածողության վրա ազդում են ծնողներն ու ապա՝ ամուսինը. իրենց ազատ արտահայտվելու, զարգանալու համար անհրաժեշտ է

ավելի նպաստավոր միջավայր: Այդպիսին է, օրինակ՝ Թումոն: Այսպես, բացի դպրոցից ք. Վայքում, նաև սեպտեմբերից բացվել է ք. Եղեգնաձորի Թումո ժամանակավոր կենտրոնը: Այս պահին դրա համար նոր, մեծ շենք է կառուցվում: Թումոն հնարավորություն է՝ ստանալու լայն գիտելիքներ և կարողություններ, լայն մտածելու: Երեխաները հանդիպում են իրենց այցելող մասնագետներին, նոր աշխարհայացք են ձեռք բերում: Երիտասարդ ռեսպոնդենտներից ոմանք համայնքում առաջնորդ են դարձել, կարողացել են սովորել արտասահմանյան բուհերում, փորձում են իրենց համայնքի կյանքն ու կենցաղը բարելավել հենց Թումո հաճախելուց սկսած:

Ժամանակի ընթացքում ընտանեկան միջավայրում կնոջ ինքնազարգացման անհրաժեշտության մասին պատկերացումները փոխվել են, նաև գյուղական համայնքներում նվազել է ընտանիքների անդամների կողմից կնոջ վերաբերյալ որոշումների ընդունման պրակտիկան:

«Ես մեծացել եմ այնպիսի ավանդապաշտ ընտանիքում, որ 12-13 տարեկանում եթե դու սիրո մասին, օրինակ՝ երգ երգեիր քթիդ տակ, դա համարվում էր եսիմ ինչ. չգիտեմ ինչ կանեին քեզ, մանավանդ տատիկս: Բայց որքան մեծանում ես, սկսում ես չենթարկվել ընտանիքիդ, դրան նաև ավելանում են հարևաններդ: Օրինակ՝ իրենց երեխաները միշտ տանն են, իսկ դու մի օր Երևանում ես, մի օր՝ Ծաղկաձորում դասընթացների, և այլն, դա չի ընկալվում: Կամ աշխատանք ես գտնում, ուշ տուն ես գալիս, սկսում ես ընտանիքիդ դեմ պայքարել, և դա հեշտ չէ» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

«Երբ ես տարիներ առաջ ուզում էի վարորդական իրավունքներ ստանալ, մեքենա վարել, հայրս շատ դեմ էր, իսկ ես իմ 18 տարեկան աղջկա համար հանեցի վարորդական իրավունք, խրախուսեցի, որ դասընթացների գնա, վարել սովորի, ու հայրս դրանից շատ ոգևորված էր (բոլորը ծիծաղում են). հիմա անընդհատ ասում է՝ ինչու աղջկադ մեքենա չես գնում» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Միևնույն ժամանակ, ընտանեկան միջավայրում միմյանց վերաբերյալ որոշումների ընդունման ավանդույթը դեռ մասամբ պահպանվում է, ինչը կարող է և՛ բացասական, և՛ դրական գործառույթներ ունենալ, այդ թվում՝ միտված լինել ընտանիքի անդամների անվտանգությանը: Միևնույն ժամանակ, կանանց

նախաձեռնողականությունը, ակտիվ գործունեությունը, համայնքներում ակտիվության ընդլայնումը նպաստում է նաև ընտանիքների բարեկեցությանը:

«Անցել են այն ժամանակները, երբ տղամարդը կարող էր ձեռքը սեղանին խփել և ասել կնոջը. չես աշխատելու» (Անի 2, Վայոց Ձոր):

«Օրինակ՝ համայքապետարանը փոքր դրամաշնորհներ էր հայտարարել, ծանոթներիցս մեկը դիմել էր՝ իրենց բակում կանանց համար զրուցարան կառուցելու ծրագրով, որպեսզի կանայք բակում նստեն, զրուցեն: Նման ծրագրեր ֆինանսավորվում են, և կարծես ավելի սովորական է դառնում, որ կանայք հանդես են գալիս նախաձեռնություններով: Միևնույն ժամանակ, օրինակ՝ թրեյնինգներին աղջիկների մասնակցությունը միշտ չէ որ ստացվում է. ծնողները, հարազատները զգուշավորությամբ են վերաբերվում, թույլ չեն տալիս որ աղջիկները մասնակցեն այն ամենին, ինչը ծնողներին ծանոթ չէ» (Թագուհի, Տավուշի մարզ):

Կանայք կախված են տղամարդկանցից ֆինանսապես, նաև՝ հոգեբանորեն: Կնոջ հավասարությունը տղամարդկանց հետ ձեռք է բերվում կանանց ջանքերով, աշխատանքով, ոչ միայն իրավունքների, այլև պարտականությունների ստանձնմամբ, ինչը, հարցված կանանց կարծիքով, ամենաարդյունավետ տարբերակն է:

«Ինքս լրիվ ինքնուրույն եմ, ինքնաբավ, հասել եմ դրան: Զինվորականի կին եմ, և գիտեք, ինչպես են զինվորականները վերաբերում ընտանիքին՝ պաշտպանում, փայփայում: Միևնույն ժամանակ, հասել եմ նրան, որ լիարժեքորեն մասնակցում եմ ու ընտանիքի հավասար հենասյուն հանդիսանում» (Սիրանուշ, Կոտայքի մարզ):

«Մեր մարզի կանայք ավելի շատ պասիվ են, բայց դա ավելի շատ գալիս է տղամարդկանցից, գալիս է ընտանեկան կարգավիճակից: Միշտ տղամարդն է եղել ասողը, թե կինը ինչ անի կամ չանի՝ այդպես էր դարեր շարունակ: Բայց եթե կինը խելացի է, և կարող է լավ առաջարկներ ունենալ՝ ուրախ կլինեմ, եթե այդպիսի կանայք կարողանան բարձր պաշտոններ ունենալ, որովհետև կինը ավելի հոգատար է, համբերատար է, խորը մտածող է» (Կարինե, Տավուշի մարզ):

Մարզաբնակ կանանց՝ համայնքներում և ընտանիքում տղամարդու հետ հավասար տեղ և կարգավիճակ զբաղեցնելու առումով նպաստավոր են փոքր բիզնեսի ծրագրեր, որոնցում ներգրավվելով կամ դրանք նախաձեռնելով՝ կանայց տնտեսապես ավելի ապահով են դառնում և կարողանում են նպաստել իրենց ընտանիքների ու համայնքի տնտեսական պաշտպանվածությանը: Այդ իմաստով հաճախ հենց կանայք են միմյանց օգնում. ստեղծում տնտեսական բնույթի կազմակերպություններ, արտադրամասեր, որտեղ աշխատում են կանայք:

«Եթե նախկինում կանանց ձայնը, հատկապես՝ գյուղական համայնքներում լսելի չէր, ապա այժմ կանայք՝ աշխատելով իրենց վրա, կարողանում են զարգացնել կանանց մասնակցությունը: Եթե մի կին կարող է իր հետևից երեք կին տանել, ապա դա շարժիչ ուժ է դառնում: Ակտիվ կանայք կարողանում են իրենց հետևից տանել այլ կանանց, այդ թվում՝ մյուս մարզերից: Կոնկրետ ասոցիացիաներ են ձևավորվում: Այսպես, օրինակ՝ մեր «Արուս Ղազարյան» ԱՁ-ն, ով Լոռու մարզում ունի պահածոների արտադրամաս, բայց չունի բավարար հատապտուղ և աշխատուժ, ապա կարողանում է ներգրավել այլ մարզերի կանանց իրենց ռեսուրսով: Եթե ասում ենք՝ լիդերշիպ, ապա դեռևս հասարակության ակտիվ կողմը տղամարդիկ են: Միևնույն ժամանակ, ժամանակի ընթացքում այդ պատկերը փոխվում է» (Մերի, Տավուշի մարզ):

Մարզաբնակ կանանց ակտիվության ընդլայնմանը նպաստում են նաև քաղաքական կուսակցությունների կին-ներկայացուցիչներ, ովքեր դրանով նպաստում են և մարզերում կանանց ինքնուրույնության բարձրացմանը, և՝ տվյալ քաղաքական ուժին աջակցողների շարքերի ընդլայնմանը:

«Ունենք աղջիկներ, ովքեր ուզում են մասնակցել զարգացման, ձեռնարկատիրական ծրագրերին, օրինակ՝ բացում են տուրիստական գործակալություններ: Դեմ չեմ: Այստեղ կային աղջիկներ, ովքեր ձեռնարկատիրական գործունեություն ուզեցին անել՝ կարի արտադրամաս ստեղծելով: Աջակցեցինք: Դիմեցինք Կապանի՝ Կանանց ռեսուրս կենտրոնին, ծրագիրը միասին գրեցինք, դիմեցինք Գերմանիայի դեսպանատուն. ֆինանսավորեցին: Ընդլայնվեցինք: Հիմա աղջիկներն իրենց բիզնեսն են անում, ընդլայնվել են, իրենց եկամուտն ունեն: Լինում են նաև գյուղատնտեսական ծրագրեր, ինձ դիմում են՝ ծրագրի կարկասն արդեն ունեմ: Լրացնում ենք, դիմում,

ջերմոցային տնտեսությունն ենք զարգացնում, չիր-չիր ծրագիրն ենք իրականացնում: Կինը ստեղծող էակ է» (Կարինե, Սյունիքի մարզ):

Հատկանշական է, որ խիստ ավանդական ընտանիքներում մեծացած աղջիկները, հետագայում դառնալով ծնող, իրենց երեխաներին արդեն ավելի ազատ են դաստիարակում ու քիչ են զսպում:

«Ես այնքան ավանդապաշտ ընտանիքում եմ մեծացել, այնքան խիստ, որ երբ ամուսնացա, ամուսնուս ընտանիքում ինձ ավելի ազատ էի զգում, քան՝ ծնողական տանս: Հիմա որ համեմատենք՝ աղջիկս ինչպես է ապրում և իրեն ինչ է թույլ տալիս՝ կյանքիս հետ անհամեմատելի է, որովհետև մենք թույլ ենք տալիս մեր երեխաներին այն, ինչ մեզ մեր ծնողների կողմից թույլ չի տրվել: Թույլ ենք տալիս, որ իրենց ցանկություններն իրականացնեն. ուզում են սովորել՝ սովորեն, աշխատել՝ աշխատեն» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Շիրակի մարզ):

Առաջնորդությունը բոլորի համար չէ, անհրաժեշտություն չէ. դրա գիտակցումը նույնքան անհրաժեշտ է, որքան՝ առաջնորդական ներուժի ու կարողությունների բացահայտումն ու փոխանցումը:

«Ես Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի կողմից կազմակերպված շատ դասընթացների եմ մասնակցել՝ առաջնորդության թեմայով, օրինակ՝ կինը քաղաքականության մեջ, և այլն, ու հասկացել եմ, որ առաջին օրը եղել են կանայք, ովքեր դասընթացի երկրորդ օրն արդեն չեն եղել, փաստորեն՝ հասկացել են, որ առաջնորդությունը իրենց համար չէ, իրենց չի հետաքրքրում: Դա շատ լավ է, որովհետև յուրաքանչյուրը պետք է օբյեկտիվորեն գնահատի իր կարողությունները, և որոշի՝ պատրաստ է արդյոք հետագայում ներդնել այդ ստացված գիտելիքները, օրինակ՝ քաղաքականության մեջ մտնելով, ինչ-որ կառույցում իր առաջնորդական որակները դրսևորելու, թե՝ ոչ» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Նշվում է, որ տարիների ընթացքում իրականացված բարեփոխումների արդյունքում բարձրացել է կանանց ներգրավվածությունը քաղաքական

իշխանության մարմիններում[49], կանայք ներառված են նաև տեղական ինքնակառավարման մարմիններում /ՏԻՄ/, որտեղ ըստ օրենքի՝ զբաղեցնում են ոչ պակաս քան 30%[50], ինչպես նաև ծառայում են զինված ուժերում, ոստիկանությունում, և այլն: Այս բոլոր բարեփոխումները հարցված կանայք դրական են գնահատում:

Խմբային քննարկումների մասնակիցները խոսել են 2018 թ. "Թավշյա հեղափոխությունից" հետո կանանց զգալի քանակի ավելացման մասին ՀՀ քաղաքական պաշտոններում՝ խորհրդարանում, նախարարություններում և բարձր մակարդակի կառավարական պաշտոններում: Սա ակնառու շեղում էր նախորդ ժամանակաշրջաններից, երբ կանանց ներկայությունը քաղաքական կյանքում նվազագույն էր և հաճախ ցուցադրական: Շատ կանանց համար այս տեսանելիությունը ավելին էր, քան սիմվոլիկ. այն ոգեշնչող էր: Կանանց պաշտոններ զբաղեցնելը ստեղծում էր տպավորություն, թե քաղաքականությունը բացառապես տղամարդկանց ոլորտը չէ:

Կանանց քաղաքական ներգրավվածության ձեռքբերումները ոչ միայն սիմվոլիկ էին, այլև գործնական: Հարցվածները շեշտեցին, որ բազմազան խմբերի կողմից մշակված քաղաքականությունները, որպես կանոն, ավելի համապարփակ են և արձագանքում են հասարակության կարիքներին: Օրինակ՝ կին առաջնորդները հաճախ ուշադրություն էին հրավիրում այն խնդիրների վրա, որոնք քաղաքականություն մշակող տղամարդիկ անտեսում էին, ինչպիսիք են՝ երեխաների խնամքը, առողջապահության մատչելիությունը, ընտանեկան բռնությունը և աշխատանքի ու ընտանեկան կյանքի միջև հավասարակշռությունը: Թեև այս մտահոգությունները ավանդական տեսանկյունից կարող են թվալ «անձնական» կամ «կենցաղային», վերջիններս անմիջականորեն ձևավորում են տնտեսության և աշխատաշուկաների գործունեությունը, նպաստում սոցիալական կայունությանը: Այսպիսով, կանանց ներառումը ապահովեց, որ պետական քաղաքականությունը հաշվի առնի հասարակության կարիքների ամբողջ

[49] Այդ մասին տե՛ս, օրինակ. Շահնազարյան, Գ., Հովհաննիսյան, Ս. Տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական ներգրավման առաջնայնությունները: «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2016 № 3 (21), էջ 3-13:

[50] «Եթե դրա արդյունքով կուսակցության մանդատների 70 տոկոսից ավելին բաժին է հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա առավել շատ ներկայացված սեռի՝ 70 տոկոսը գերազանցող մանդատները տրամադրվում են ընտրական ցուցակի՝ պակաս ներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուներին, եթե այդպիսիք առկա են՝ ապահովելով պակաս ներկայացված սեռի 30 տոկոսից ոչ պակաս ներկայացվածություն: Եթե ընտրական ցուցակում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչներ չկան, ապա այդ մանդատները մնում են թափուր»: ՀՀ Ընտրական օրենսգիրք, **Հոդված 141.** https://www.arlis.am/hy/acts/201330

շրջանակը՝ նախապատվությունը չտալով ավանդաբար տղամարդկանց հետ կապված կարիքներին:

Կանանց քանակի մեծացումը նկատելի է հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների կազմում:

«Կային ժամանակներ, երբ համայնքապետարաններում աշխատողների մեծ մասը տղամարդիկ էին: Այժմ շատ են նաև կանայք, նաև՝ ոստիկանությունում շատ կանայք են ծառայում: Չէի ասի, որ կա գենդերային խտրականություն: Եթե կին ես ու կարողանում են այդ աշխաքանքը լավ անել, ինչու՞ չանես» (Արփինե, Վայոց Ձոր):

«Սխալ կարծիք է, որ համայնքապետարաններում կանանց ձայնը լսելի չէ: Ինքս՝ որպես ավագանու անդամ, միշտ դիմել եմ առաջարկներով և երբեք իմ հանդեպ խտրական վերաբերմունք չեմ հանդիպել: 2018թ-ից ավագանու անդամ եմ. այդ ժամանակ ավագանու յոթ անդամներից միայն ես էի կին, վեցը՝ տղամարդ: Իսկ 2021թ-ից ունենք ավագանու 15 անդամ, որոնցից 4-ը կին է» (Արմենուհի, Կոտայքի մարզ):

«Կանանց ձայնը ավելի լսելի է դարձել: Իրենց ձայնի արժեքը իրենք հիմա գիտեն, մասնակցում են տեղեկան ինքնակառավարման մարմինների նիստերին, քննարկումներին, կարող են աշխատատեղից թույլտվություն վերցնել և մասնակցել, և դա սիրով անում են: Վերջերս մի դասվար ուսուցչուհի, ով դուրս էր եկել դպրոցից, հիմնել է պելմենու արտադրամաս, և նաև մեր ծրագրից 600 հազար դրամ հավելյալ ստանալով՝ մեծացրել է իր արտադրության ծավալները» (Մերի, Տավուշի մարզ):

Առկա է նաև հակառակ կարծիքը. համայնքների կառավարման գործընթացներում կանանց մասնակցությունը դեռևս հանդիպում է տղամարդկանց կարծրատիպային վերաբերմունքի, չընկալման, կամ էլ ձևական բնույթ է կրում:

«Համայքնապետարանում, կամ ավագանիում ինչ-որ խնդիր ես փորձում ներկայացնես, որ լուծում ստանա, արժանանում ես տարօրինակ հայացքների. տղաներին ավելի լավ են վերաբերում և ընկալում, կարող են ասել՝ Կին ես, սա քո խելքի բանը չէ» (Թագուհի, Տավուշի մարզ):

«Ընտրացուցակներում որ ասում են՝ այսքան տոկոսը կանայք պետք է լինեն, ասեմ ձեզ՝ ձևական բնույթ է կրում, չի աշխատում» (Գայանե, Արագածոտն):

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները նաև նշեցին, որ ղեկավար պաշտոններ ստանձնող կանայք հաճախ բախվում են թերահավատության և դիմադրության գործընկերների, համայնքի անդամների և նույնիսկ ընտանեկան շրջանակների կողմից: Առաջնորդությունը, հատկապես հանրային կամ կազմակերպչական համատեքստերում, կարող է ընկալվել որպես անհամատեղելի կանացի ավանդական դերերի հետ, ինչը հանգեցնում է սոցիալական պատժամիջոցների կամ իշխանության աննկատ խաթարման: Կանայք պետք է հաղթահարեն կրկնակի խոչընդոտ. նրանցից ակնկալվում է վճռականորեն առաջնորդել, սակայն նրանք հաճախ պատժվում են արդյունավետ առաջնորդության հետ կապված հատկանիշների համար, ինչպիսիք են հաստատակամությունը կամ վճռականությունը:

«Կանայք, ովքեր դուրս են գալիս իրենցից ակնկալվող «սահմաններից», հաճախ բախվում են «երկաթե տիկին» կամ «տղամարդ կին» պիտակների, ինչը ցույց է տալիս, թե ինչպես է հասարակությունը կարգավորում շեղումները ավանդական կանացիությունից»:

Նշվել է, որ ներկայացվածության բարձրացումը ինքնըստինքյան չի նշանակում հավասար ազդեցություն: Կառուցվածքային խոչընդոտները, արմատացած հայրիշխանական վերաբերմունքը և տղամարդ գործընկերների դիմադրությունը հաճախ սահմանափակում էին կանանց ազդեցությունը քաղաքականության մեջ: Որոշ հարցվածներ հիշեցին դեպքեր, երբ կին առաջնորդները զրկված էին որոշումների կայացման գործընթացներից կամ ստիպված էին ավելի շատ աշխատել՝ լսելի լինելու համար: Այնուամենայնիվ, նույնիսկ սահմանափակ լինելու դեպքում, կանանց ներկայությունը աստիճանաբար փոխեց քաղաքական դիսկուրը առ այն, թե ով ունի կառավարմանը մասնակցելու իրավունք:

Միևնույն ժամանակ, կանանց ընդլայնվող ներկայությունը պետական կառավարման համակարգում միշտ չէ որ որակյալ է և արդյունավետ: Կառուցվածքային խոչընդոտները, արմատացած հայրիշխանական

վերաբերմունքը և տղամարդ գործընկերների դիմադրությունը հաճախ սահմանափակում էին կանանց ազդեցությունը քաղաքականության մեջ: Որոշ հարցվածներ հիշեցին դեպքեր, երբ կառավարման համակարգում ներգրավված կանայք զրկված էին որոշումների կայացման հնարավորություններից կամ ստիպված էին ավելի շատ ջանքեր գործադրել՝ լսված լինելու համար: Այնուամենայնիվ, նույնիսկ սահմանափակ լինելու դեպքում, կանանց ներկայությունը աստիճանաբար փոխեց քաղաքական դիսկուրը առ այն, թե ով ունի կառավարմանը մասնակցելու իրավունք:

Քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը շարունակում է կախված լինել համայնքում առկա միջանձնային կապերից, փոխհարաբերություններից, որոնք կնոջ առաջխաղացումը և ինքնուրույն քաղաքական գործունեությունը չեն խթանում:

«Համայքնային պրոցեսներին կանանց մասնակցության կարիքը կա, այդ թվում՝ համայնքների զարգացման, կառավարման հարցերում կանանց իրական մասնակցությունը գրեթե զրո է: Ինչ էլ որ կա՝ հասարակական կազմակերպությունների շնորհիվ է: Համայնքային կազմակերպությունները որևիցե բան չեն անում՝ կանանց հզորացման համար: Կանայք չգիտեն, որտեղից են սկսվում իրենց իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքապետը, օրինակ, իրենց հարևանի տղան է, մտածում են՝ հո չենք կանգնի իր դեմը խոսենք» (Անահիտ, Արագածոտնի մարզ):

«Ավագանիներնի անդամ կանանց մասնակցությունը շատ պասիվ է: Չեմ նկատել, որ իրենք ինչ-որ խնդիր փորձեն լուծել, կամ առաջադրեն որևէ խնդիր: Նստում են ավագանու նիստին, կողմ-դեմ քվեարկում ու գնում: Այս իրավիճակը մեզ մոտ դեռ չի կոտրվել» (Թագուհի, Տավուշի մարզ):

«Եթե հաշվի առնենք, որ նաև օրենսդրական մակարդակում իշխանության մարմիններում կանանց հատկացվող քվոտաներ են կիրառվում, ապա փոփոխություններն առկա են: Այս ամենը փոքր համայնքներում, իհարկե, արվում է՝ անելու համար, ձևական բնույթ է կրում: Երբեմն դա արվում է,

որովհետև դա պարտադիր կետ է և պետք է արվի, և ոչ թե, որովհետև այդպես է ճիշտ» (Մելինե, Տավուշի մարզ)::

Հասարակության մեջ առկա անհավասարության մասին են խոսում հատկապես երիտասարդ սերնդի կանայք, ովքեր պատրաստ չեն համակերպվելու այդ երևույթի հետ, ընդորում՝ խոսքը գնում է ոչ միայն կանանց և տղամարդկանց միջև, այլ առհասարակ անհավասարության մասին, որը պայմանավորված է մարդկանց մոտ ֆինանսական և սոցիալական կապիտալի տարբեր հնարավորություններով: Երկու սեռերի միջև հավասարությունը հասարակության զարգացման անհրաժեշտ պայմաններից է:

«Հավասարությունը լավագույն գործիքը կլինի մեր երկրի զարգացման մեջ: Մենք ունենք սակավ մարդկային ռեսուրս, և շատ խնդիրներ: Միայն կանանց և տղամարդկանց հավասար ներդրմամբ դրանք հնարավոր է լուծել: Սա ենթադրում է, օրինակ, որ կանայք պետք է տղամարդկանց հետ հավասար սկզբունքներով ծառայեն բանակում, ոստիկանության շարքերում, ղեկավար պաշտոններ ստանձնեն: Օրինակ՝ բանակում շատ հաստիքներ կան, որ կանայք կարող են զբաղեցնել: Անգամ ֆիզիկական ծանրաբեռվածության առումով շատ աղջիկներ, ովքեր ներգրավվել են մարզաձևերում, կարող են բանակում տղաների հետ հավասարապես ծառայել: Գտնում եմ, որ սա լավագույն տարբերակը կլինի» (Թագուհի, Տավուշի մարզ):

«Ինքս մի քանի տարի աշխատել եմ Վ. Սարգսյանի անվ. Պաշտպանական համալսարանում, որտեղ սովորում են աղջիկ կուրսանտներ: Իրենք շատ ուժեղ մարդիկ են: Եթե տղաները, օրինակ, իրենց ծառայությանը վերաբերում էին ինչպես աշխատանքին, գործին, ապա աղջիկների վերաբերմունքը այլ էր: Կոնկրետ գաղափարախոսությամբ են գալիս բանակ: Բացի ռազմական ոլորտից՝ կանայք կարող են շատ մեծ ձեռքբերումներ ունենալ բժշկության, գիտության ոլորտներում, երկրին շատ առաջխաղացում բերել» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Հարցվածների խոսքերով՝ առկա է կոռուպցիա. պաշտոնների ստանձնման հնարավորությունները կախված են ծանոթ-բարեկամ ունենալուց, ինչը խոչընդոտում է երիտասարդների, այդ թվում՝ կանանց առաջխաղացման հնարավորությունները և առհասարակ զարգացումը:

«Կարծում եմ, որ մինչև մենք չփոխվենք՝ չփոխենք մեր մտածողությունն ու գաղափարները, մենք փոփոխություններ չենք ունենա: Երբ գնում ենք ընտրությունների՝ առանց պատկերացման, թե ում ենք ընտրում, և ընտրում ենք հարևանի տղային, որովհետև նա այդ պահին լավն է՝ առանց գիտակցելու, թե ինքը ինչ արժեքների կրող է, ապա փոփոխություններ չենք ունենա երբեք: Երբ չունենք կին ավագանի, և ես այդ մասին մտածելով մեծ ցավ եմ ապրում, որքան ցածր է մեր կանանց ինքնագնահատականն ու քաղաքացիական գիտակցությունը, որ իրենք այդ համայնքում մեծամասնությունն են, ու ոչինչ չեն անում դրական փոփոխությունների նպատակով, մենք որևէ փոփոխություն չենք ունենա: Դա չի նշանակում, որ ապրում ենք քարե դարում. մենք փոխվում ենք, բայց սոցիումի մի մասնիկն են, և ընդհանուր, համակարգային փոփոխություններ են անհրաժեշտ» (Սաթենիկ, Կոտայքի մարզ):

Հետաքրքիր էր պարզել, որ ղեկավար պաշտոններում կանանց ներգրավումը նույնպես պայմանավորված է ծանոթ-բարեկամ՝ ոչ ֆորմալ կապերի և հարաբերությունների մեխանիզմներով, ինչը, սակայն, զրուցակիցների խոսքերով, միշտ չէ որ բացասական երևույթ է:

«Մեզ մոտ ՏԻՄ-ում լավ աղջիկներ ունենք՝ չամուսնացած, հմուտ, ակտիվ աղջիկներ: Նախաձեռնող են, ակտիվ են: Այդ դաշտում գտնվողները գտնում են իրենց բարեկամներից համապատասխան աղջիկ, որ օրենքի համաձայն պաշտոն զբաղեցնեն, միգուցե դա լավ չի, բայց հետագայում այդ աղջիկներին բերում են արենա, ու իրենց իրենց դրսևորում են» (Անահիտ, Գեղարքունիքի մարզ):

Հասարակության մեջ առկա են բացասական կարծրատիպեր՝ կապված քաղաքականության հետ, քաղաքականության մեջ ակտիվ ներգրավվածության, այս կամ այն կուսակցության անդամ լինելու: Սա կարելի է բացատրել քաղաքական ուժերի ցածր վարկանիշային միավորներով, վերջին տասնամյակում Հայաստանում բոլոր քաղաքական ուժերի հանդեպ վստահության ցածր մակարդակով[51]: Այս ամենի հետևանքներից է այն, որ քաղաքականության մեջ կանանց ներգրավումը տեղի է ունենում անվստահության, անգամ՝ դրանից ամաչելու պայմաններում:

[51] Տե՛ս, օրինակ. https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2025/

«Կուզեի, որ կանայք հպարտ ու առանց ամաչելու ասեին. ես կին եմ քաղաքականության մեջ: Գիտեմ շատ դեպքեր, երբ կանայք ամաչել են բարձրաձայն հնչեցնելու, թե այս կամ այն կուսակցության ներկայացուցիչ են: Կուզեի, որ կանանց ոգեշնչենք» (Արմենուհի, Կոտայքի Մարզ):

Մշակութային նորմերը հատվում են ավելի լայն սոցիալական ճնշումների հետ, ներառյալ ամուսնության, երեխաների դաստիարակության և խնամքի վերաբերյալ սպասումները, որոնք անհամաչափորեն ազդում են կանանց վրա: Մասնակիցները ընդգծեցին, որ այս խոչընդոտների հետևանքը ոչ միայն ղեկավար պաշտոններում կանանց տեսանելի պակասն է, այլև կանանց ներդրման մշտական թերագնահատումը թե՛ պետական, թե՛ մասնավոր ոլորտներում: Այս մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ են հասարակական փոփոխություններ, որոնց արդյունքում կանայք կճանաչվեն և աջակցություն կստանան՝ որպես առաջնորդներ, ոչ միայն մասնագիտական, այլև քաղաքացիական և համայնքային կյանքում:

Կանանց առաջնորդական կարողությունների զարգացմանը միանշանակորեն նպաստում են այդ ուղղությամբ պարբերաբար կազմակերպվող դասընթացները: Դասընթացները կազմակերպվում են տարիներ շարունակ, դրանց արդյունքներն ակներև են. կանայք և աղջիկները դրսևորում են նախաձեռնություններ, իրականացնում փոքր բիզնեսի պրոյեկտներ, համագործակցում տեղական ինքնակառավարման մարմինների հետ և մասնակցում ընտրություններին, առաջ են գալիս տարբեր ծրագրային առաջարկներով, ստեղծում և ղեկավարում հասարակական կազմակերպություններ, և այլն:

«Թրեյնինգները շատ կարևոր են այն իմաստով, որ ազդեցության տակ լինելով՝ գալիս ենք ու պահում այդ մուլտիպլիկատորի էֆֆեկտը. միգուցե մեզ ճնշեն, ճնշեն, բայց մենք դեռ այդ ազդեցության կրողն են: Հաճախակի թրեյնինգները թույլ են տալիս, որպեսզի դա ամրանա, ու անընդհատ կրթություն է պետք: Ես այլ մարդկանց համար օրինակ եմ ծառայում, ու կուզեի լինել այն արժեքների կրողը, որոնք ուսանելի և օգտակար կլինեին այլ մարդկանց համար»: (Սաթենիկ, Կոտայքի մարզ)

«Կա աշխատատեղերի, զբաղվածության կարիք: Կա ազգային մտածելակերպ, որը հաճախ խոչընդոտում է կանանց աջակցությանը: Սակայն, բազում

վերապատրաստումներ, ծրագրեր աջակցել են կանանց ինքնուրույնությանն ու զարգացմանը: Ինքս մշտապես առնչվում եմ կանանց հետ և այդ հզորացումը ակնհայտ տեսնում եմ» (Մարիամ, Կոտայքի մարզ):

Թրեյնինգները ունեն կոնկրետ գործնական նշանակություն. նպաստում են նոր գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը, հավատքին սեփական ուժերին և ինքնաճանաչմանը, գործնական ասխպարեզում մրցունակությանը:

«Նախորդ անգամ մասնակցել էի թրեյնինգի, ու հենց անմիջապես հետո եղան ավագանու ընտրություններ. մասնակցել եմ, ու այնքան հետաքրքիր էր, որ զուգադիպեց, և կարծես թրեյնինգներում ստացած գիտելիքներս կարող էի փորձարկել ընտրությունների ժամանակ: Այնտեղ ելույթ էի պատրաստել այն թեմայով, թե ինչ կասեիք լրագրողների հետ հանդիպման ժամանակ, շատ հետաքրքիր էր, ու մի քանի ամիս անց հրավեր եմ ստանում մասնակցելու ավագանու ընտրություններին: Ու այնքան վարժ ամեն ինչ ստացվեց՝ ինձ թվում էր, որ ինչ-որ հետաքրքիր բան է կատարվում»:

«Ես էլ եմ մասնակցել ավագանու ընտրություններին՝ պետք է ելույթ ունենայի, շահագրգռեի ընտրողներին, թե ինչու պետք է ինձ ընտրել, ու զբաղեցրել եմ երրորդ տեղը: Թրեյնինգներում ստացված գիտելիքներս ինձ շատ պետք եկան» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Նշվել է, որ կանանց հասցեագրված դասընթացները չպետք է ինքնանպատակ լինեն, այլև նպաստեն կանանց զբաղվածությանն աշխատաշուկայում: Հետաքրքիր էր պարզել, որ մարզերում ստեղծվող նորարարական բնույթի կազմակերպություններում տեղացի կանանց աշխատանքի ընդունելը տարածված պրակտիկա չէ, իրենց նախընտրում են արտասահմանցի կամ երևանցի մասնագետներին, մինչդեռ վերապատրաստելով տեղաբնակներին համապատասխան գիտելիքների և կարողությունների առումով՝ հնարավոր է իրենց ավելի մրցունակ դարձնել ստեղծվող աշխատատեղերի համար:

«Դիլիջանում աշխատող ընկերությունները, օրինակ՝ Ռուբեն Վարդանյանի ստեղծած Impuls Management-ը, Դիլիջանում չգտնելով համապատասխան կադրեր, աշխատակիցներին բերում են Երևանից, նաև Ռուսաստանից, ովքեր, իհարկե, շատ լավ են տիրապետում, օրինակ՝ լեզուներին, համակարգչային

տեխնոլոգիաներին, սակայն չգիտեն տարածաշրջանային առանձնահատկությունները, համայնքին լավ չեն տիրապետում: Տեղացիներին վերցնում են շատ փոքր գործառույթներում: Համայնքում կա հենց այդպիսի՝ փափուկ հմտությունների կարիքը: Միգուցե նաև՝ ինքնավստահության բարձրացման կարիք կա, որովհետև կան շատ կանայք, ովքեր զինված են գիտելիքներով, բայց ինքնավստահ չեն: Տեսել էի այդպիսի մի թրեյնինգ, կողմից նայում էի ու մտածում՝ բայց պե՞տք է արդյոք նման թրեյնինգ, բայց տեսա՝ շա՛տ է պետ: Որովհետև շատ կանայք կարող են ամաչել տղամարդկանցից, կամ շփոթել ինքնավստահությունը գոռոզամտության հետ» (Մելինե, Տավուշի մարզ):

Կանանց կարողությունները և առաջնորդական նախաձեռնությունները զարգացնող ծրագրեր իրականացվում են ինչպես Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների, այնպես էլ քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Զրուցակիցների կողմից բազմիցս նշվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից շարունակաբար կազմակերպվող թրեյնինգները:

«Ես նաև ուսումնասիրել եմ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի գործունեությունը, տեսել եմ, որ իշխանական չեն, համագործակցային են, արդյունավետ են, օգտակար են, շատ չեն ցուցադրվում, բայց կարևոր գործեր են իրականացնում: Համենայնդեպս, այդպես է թվում» (Սիրանուշ, Կոտայքի մարզ):

«Այն մակարդակը, որն իրենք են ապահովում, այլ թրեյնինգներում շատ հազվադեպ եմ տեսնում» (Մարիամ, Կոտայքի մարզ):

Նշվել են նաև այնպիսի անհատների, կազմակերպությունների, ծրագրերի անուններ, որոնք, ըստ հարցվածների, կարևոր դերակատարում ունեն անցումային փուլում կանանց սատարման գործում, ինչպիսիք են.

- «Աշխատանք և հայրենիք» /ղեկավար՝ Ղազարյան Ռուզաննա/ ՀԿ-ի կողմից իրականացվող «Ծնորհալի կանայք» ծրագիրը,
- "People in need" կազմակերպությունը,
- Oxygen
- ԿԶՆԱԿ
- Solution Hub

- Թումո դպրոցներ
- We are together միջազգային ծրագիր
- «Ծիածան» առաջնորդների դպրոց
- Արագածոտնի մարզում հիշատակվեց Աննա Թոլքոտ Աստվածատուրյանի անունը, ով ամերիկահայ բարերար է և համայնքին մշտապես աջակցում է: Իր աջակցությամբ, մասնավորապես, տնկվեց «Հիշատակի անտառ»,
- Լևոն Բարսեղյան, Գյումրու «Ասպարեզ» ակումբ
- Հերմինե Կարապետյան, Աշտարակի «Մոտիվ» ստուդիայի հիմնադիր
- Հրանտ Ավանեսյան, ԵՊՀ Հոգեբանության ֆ-տ, Հետպատերազմական վիճակում հոգեբանական խնդիրների հաղթահարման ձեռնարկի հեղինակ:

Որպես տեղական, ներքևից նախաձեռնվող վերապատրաստումների խիստ դրական փորձ՝ նշվել են նաև «Մենք» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի կողմից կազմակերպված թրեյնինգները. կազմակերպիչը՝ Խաչիկյան Վահեն, մասնակիցներին ծանոթացրել է համայնքային բյուջեին, ծախսերին, ծրագրերին, խնդիրներին, դրանց լուծման հնարավորություններին[52]: Մյուս դրական փորձը Սևան քաղաքի քաղաքապետարանում աշխատող, Քոլեջում քաղաքագիտություն դասավանդող Արթուր Մելքոնյանի աջակցությունն է երիտասարդական նախաձեռնություններին («Նա Սևանի մենթորն է», ով ասում է. «դուք նախաձեռնեք՝ ես ամեն կերպ կաջակցեմ»):

Կանանց հետ հարցազրույցներում բազմիցս նշվել է կանանց՝ իրենց կարողությունների մասին տեղեկացվածության բարձրացման անհրաժեշտության մասին: Ըստ ռեսպոնդենտների՝ կանայք հաճախ տեղյակ չեն այն հնարավորությունների մասին, որոնք իրենց համար ընձեռնվում են, այդ թվում՝ կրթական, վերապատրաստման, գործարարության, բարեգործության, առաջնորդության դրսևորման առումներով: Կանանց տեղեկացման անբավարար մակարդակի հետևանքն է, որ, ինչպես նշվեծ, իրենց ուղղված ծրագրերը հաճախ իրականացվում են «փոքր շրջանակներում»՝ միևնույն շահառուների համար: Նշվել է նաև որոշ տեխնիկական խնդիրների, դժվարությունների մասին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝ հատկապես հեռավոր գյուղերում բնակվող կանանց համար ծրագրերի իրականացման ժամանակ:

[52] https://hkdepo.am/hy/org/we---lori-region-youth-ngo

«Երբ մեզ մոտ են գալիս կանայք, աղջիկներ, իրենք սկի տեղյակ չեն, թե ինչ հնարավորություններ կան իրենց համար» *(Անի, Վայոց Ձոր):*

«Հնարավոր է, այդ կոմպլեքսավորվածությունն է, թե ինչ է, որ աղջիկները պասիվ են ներառվում: Բացի այդ, շատ տեխնիկական հարցեր կան, որոնց պատճառով դժվար է լինում մասնակցել: Շատ վառ օրինակ. այս տարվա ապրիլի 28-ին թրեյնինգ էր անցկացվում աղջիկների համար՝ IT ոլորտի վերաբերյալ, Ջերմուկում: Սերտիֆիկատ էին տալու, ինչը շատ լավ է: Մյուս կողմից, ճանապարհածախսը չէին հատուցելու: Բացի այդ, թրեյնինգը պետք է տևեր չորս ժամ, և այնտեղ ոչ մի բանի մասին չէին մտածել, անգամ սրճի ընդմիջում չէին կազմակերպելու: Այդ պատճառով չդիմեցի» (Արփինե, Վայոց Ձոր):

Կանանց տեղեկացվածության բարձրացումը կնպաստեր իրենց ավելի ակտիվ ինքնադրսևորմանն ու ակտիվացմանը համայնքներում և ընդհանուր առմամբ հասարակության մեջ:

«Հենց այսօր Ադենաուեր հիմնադրամի տրված պայուսակն էի կրում, և մտածեցի՝ որքան լավ կլինի, եթե տարաբնույթ թրեյնինգներ իրականացվեն՝ համայնքապետարանի, դպրոցների ներառմամբ: Նաև՝ տեղեկատվության գործընթացը պետք է բարելավել. մարդիկ քաջատեղյակ չեն, մարդիկ ակտիվություն չեն դրսևորում ու շատ հարցերից հետ են մնում: Ամեն նման միջոցառումից, թրեյնինգից հետո միտքս պայծառանում է, նոր գաղափարներ են առաջ գալիս» (Արփինե, Վայոց Ձոր):

«Լավն այն է, որ այժմ կանանց և աղջիկների մոտ այլևս կոտրված է նախկինում առկա զգուշավորությունը՝ կրթվելու, սեմինարներին մասնակցելու վերաբերյալ: Այժմ, մեկ-երկու անգամ դասընթացներին գալով՝ իրենք են զանգում, հարցնում՝ շարունակությունը երբ է լինելու» (Անի 2, Վայոց Ձոր):

«Չնայած աղջիկները ավելի արագ են սովորում խոսել, հետա ավելի լավ են սովորում, քան տղաները, այնուամենայնիվ հետո իրենց հանրային կյանքում պակաս ինքնավստահ են զգում, քան տղաները: Պետք է աջակցել ինքնավստահության բարձրացման առումով» (Սաթենիկ, Կոտայքի մարզ):

Այնուամենայնիվ, հետխորհրդային փուլում և հատկապես վերջին տարիներին Հայաստանում կանայք ավելի ինքնավստահ են դարձել:

«Կանայք չունեն ռեսուրսներ, իրենց ժամանակը քիչ է, դրա համար չեն կարողանում ավելի անկախ, ինքնուրույն դառնալ: Միևնույն ժամանակ, այժմ կանայք ավելի ինքնավստահ են» (Սարվարդ, Սյունիքի մարզ):

«Կանայք ինքնավստահ են դարձել, իրենց նախաձեռնությունները փորձում են իրագործել: Ունենք այնպիսի հայկական կարծրատիպ, թե հայ կինը չի կարողանում ինքնարտահայտվել: Այժմ ունենք խոսքի ազատություն, մարդն իր տեղն ու դերը կարողանում է ունենալ: Չեն մտածում՝ կարելի է, չի կարելի... Մտածում են՝ որն է ռիսկը, ռիսկերի կառավարում են փորձում անել, ռիսկերը նվազեցնել և ծրագրերն իրականացնել» (Կարինե, Սյունիքի մարզ):

Կանանց զարգացման ծրագրերին և նախաձեռնություններին ոչ բոլոր համայնքներում են աջակցում: Արագածոտնի մարզի համայնքներից մեկի բնակիչ ռեսպոնդենտը նշեց, որ իրենց համայնքի ղեկավարի, համայնքապետարանի մոտեցումը կառուցողական չէ.

«Նախորդ համայնքապետերից մեկը, այդ ժամանակ՝ գյուղապետ, ասաց, թե արի, իհարկե, ծրագրերդ ներկայացրու, միայն թե Worldvision-ի նման «Գենդեր, գենդեր նորից չանեք. հոգնել եմ արդեն»: Նոր համայնքապետը բոլորովին չի աջակցում. «Երբ որ նորից պորտուգալացիները եկան մեր համայնք հանդիպման, ինձ համայնքապետի օգնականն ասաց. դու վերև /հանդիպմանը/ չես բարձրանալու: Շատ պաշտոնավարող տղամարդիկ՝ տեսնելով, որ կինն իրենցից ավել է անում, և առանց գումարի, սկսում են խոչընդոտել: Ես շատ բան եմ անում չեղած տեղից: Իրենցից մնում է գոնե չխոչընդոտել: Պորտուգալացիները ասում են՝ բայց մենք եկել ենք Գայանեի հետ հանդիպման, ո՞նց կլինի որ նա վերև չբարձրանա: Համագործակցությունս չի ստացվում սրանց հետ: Ոչ էլ առանդնապես դրա կարիքն ունեմ (ծիծաղում է)» (Գայանե, Արագածոտն):

Միևնույն ժամանակ, խոսվել է վերապատրաստման ծրագրերի, թրեյնինգների վերաբերյալ սպառողական մոտեցման առկայության մասին. որոշ կանանց մոտ ձևավորվել է սովորություն՝ թրեյնինգներին մասնակցելու ոչ թե, որպեսզի ստացված գիտելիքների և կարողությունների միջոցով իրականացնեն

հետագա ակտիվություն, զարգանան, ընդլայնեն գործունեության դաշտը, այլև՝ ժամանակ անցկացնելու, շփվելու նպատակով: Թրեյնինգներին մասնակցելը ոմանց համար ինքնանպատակ է:

“Կանայք կարծես ծրագրից ծրագիր են ակտիվանում ու ոգևորվում: Այսինքն՝ եթե ծրագիր չի լինում, կանայք նորից պասիվ են” (Քրիստինե, Վայոց Ձոր):

Վերապատրաստման ծրագրերի հնարավոր թերությունների է համարվում դրանց բովանդակության քաղաքական բաղադրիչը, որից անհրաժեշտ է խուսափել:

«Կան սեմինարներ, որոնք ունեն քաղաքական համատեքստ.դրանք, իհարկե, որոժ դեպքերում օգտակար են, բայց կուզեի, որ այդ բաղադրիչը չլինի» (Մարիամ, Կոտայքի մարզ):

Մարզերում կանանց և աղջիկների համայնքային ակտիվության բարձրացման միջոցներից է իրենց ներգրավումը կամավորական աշխատանքներում և նախաձեռնություններում: Ռեսպոնդենտներից շատերի խոսքերով՝ կամավորությունը մարզերում և հատկապես գյուղական համայքներում զարգացած չէ: Այսպես, Արագածոտնի մարզի ռեսպոնդենտների մեկի խոսքերով՝ իրենց համայնքում աղքատության մակարդակը բարձր է, մարդիկ աշխատում են ցածր եկամուտներով, շատերը նաև՝ հողագործությամբ, ուստի և չեն կարող իրենց թույլ տալ լրացուցիչ աշխատանք, եթե այն եկամուտ չի բերում: Շատերի մոտ հարց է առաջանում. ինչու՞ ժամանակ և ջանք գործադրել, եթե եկամուտ չի բերում:

Կարծրատիպերի առումով հատկապես առանձնանում են մարզի եզդիաբնակ գյուղերի կանայք, ովքեր որևէ նախաձեռնության իրավունք չունեն, և եթե միջոցառումների ներկա են գտնվում, ապա *«չեն խոսում, գալիս են իրենց կեսուրների հետ, ամեն հարցում նայում են իրենց արձագանքին»* (Գայանե, Արագածոտնի մարզ):Քաղաքականությունից զատ, կանանց առաջխաղացումը պետական և այլ կառավարման ոլորտներում բազմիցս ընդգծվել է որպես առաջընթաց: Հարցվածները նկարագրել են, թե ինչպես են նախարարություններում, համայնքներում և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող կանայք նպաստել այնպիսի որակներին, ինչպիսիք են թափանցիկությունը, մանրամասներին ուշադրությունը և արդարության նկատմամբ հանձնառությունը: Կանայք, ովքեր հաճախ կառավարել են տնային

տնտեսություններ դժվարին պայմաններում, զարգացրել են դիմացկունություն, բազմախնդիր գործելու ունակություններ և խնդիրներ լուծելու հմտություններ, որոնք լավ են նրանց ծառայում ղեկավար դերերում: Օրինակ, որոշ կին կառավարիչներ հայտնի էին համայնքային վեճերը միջնորդելու, սակավ ռեսուրսները արդյունավետորեն կառավարելու կամ ընտանիքների իրականությանը համապատասխանող սոցիալական ծրագրեր մշակելու իրենց ունակությամբ: Նրանց ղեկավարման ոճը հաճախ շեշտը դնում է համագործակցության, հաղորդակցության և կոնսենսուսի վրա՝ հիերարխիայի և գերիշխանության փոխարեն: Մոտեցման այս տարբերությունը հարստացրեց կառավարման կառույցները և ստեղծեց մի միջավայր, որտեղ բազմազան կարծիքներն ավելի լիարժեքորեն են հաշվի առնվում:

Բացի իրական առաջնորդության օրինակներից՝ ռեսպոնդենտները խոսել են նաև **կեղծ առաջնորդության** մոտեցումների մասին: Որպես սպառողական մշակույթի տարածման հետևանք՝ նշվել է, որ կանանց շրջանում տարածում է ստացել ոչ միայն իրական, արդյունավետ առաջնորդական մշակույթ, այլ նաև կեղծ առաջնորդական բարքեր. ֆինանսատնտեսական կարողություններ ձեռք բերած կանայք /հիմնականում՝ ամուսինների միջոցով/ իրենց սկսել են մյուսներից բարձր դասել:

«Կանայք իրենց «առաջնորդ» են զգում, եթե չաշխատելով փող ունեն, երեխաների համար դայակ են վարձում, ուտելիքը պատրաստելու փոխարեն պատվիրում են: » *(Մարո, Վայոց Ձոր):*

Հատկապես երիտասարդ ռեսպոնդենտները նշում են, որ **“Հաճախ կանայք են միմյանց խանգարում”.**

«Երբեմն հենց կանայք են կանանց թիրախավորում շատ տարբեր հարցերում. սա մեր իրականության մեջ արմատավորված երևույթ է: Նույնիսկ շատ փոքր հարցերում, երբ թվում է, թե չպետք է կինը թիրախավորվեր հենց կանանց կողմից, թիրախավորվում է: Կանայք կանանց համար գաղափարի մասին անընդհատ պետք է խոսել, այդ ուղղությամբ դեռ շատ աշխատանք կա տանելու: Մոռանում ենք, որ մարդ ունի ապրումակցման կարիք: Հաճախ շատ ոչ-mindful /կներեք արտահայտությանս համար/ կերպով ենք միմյանց վերաբերում: Շատ-շատ աղջիկներ բախվում են կանանց կողմից ոչ միայն չսատարելուն, այլ նաև անառողջ քննադատության» (Մելինե, Տավուշի մարզ):

Քննարկումների ընթացքում կարևորվել է կանանց կարիքների գնահատումը, մասնավորապես՝ իրենց համար դասընթացների պլանավորման համար: Թրեյնինգներից առաջ անհրաժեշտ է պարզել, գնահատել կանանց կարողությունները, որպեսզի թրեյնինգներն ավելի արդյունավետ, հասցեական լինեն:

«Պետք է իրականացնել կարիքների գնահատում՝ ըստ մարզերի, վեր հանել ընդհանուր և առանձնահատուկ խնդիրներ: Օրինակ՝ Սյունիքի մարզում աղջիկներն ավելի ազատ են՝ տուրիզմի զարգացման շնորհիվ: Գեղարքունիքի մարզում՝ շատ ավելի կոմպլեքսավորված են, ու ավելի քիչ են մարզից դուրս գալիս: Չհաշված, որ ոչ ոգ էլ չի գալիս մարզ, հատկապես՝ Գավառ: Սևանը չի թողնում, որ Գավառ մտնեն» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Նշվել է, որ կարիքների և կարողությունների գնահատման միջոցով անհրաժեշտ է պարզել, թե կինն ինչին է ընդունակ. դա թեսթերի միջոցով «հանել դուրս», զարգացնել:

Կանանց կարիքների գնահատումը փաստացի դրված է սույն հետազոտության հիմքում ևս:

Այսպիսով, կանանց առաջնորդական ներուժի սահմանափակման և խթանման մեխանիզմների բացահայտումը թույլ է տալիս սահմանափակելու, կասեցնելու բացասական գործոններն ու խթանելու դրական ազդեցություն ունեցողները:

4.3. Կանանց կարիքներն ու կարողությունները՝ համայնքների և պետության անվտանգության, զարգացման ապահովման համատեքստում

Ընդհանուր առմամբ՝ բազում հարցազրույցներում նշվել են կանանց հետևյալ կարիքները.

- Մոտիվացիայի, մտածելակերպի փոփոխության,
- Ոգևորող անձանց, հաջողված կանանց օրինակների, փորձառու մասնագետների, հերոսների,
- կանանց ինքնագիտակցության բարձրացման,

- քննադատական մտածողության,
- Ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման կարողությունների կարիք. «կանայք հաճախ ապառիկով թանկարժեք իրերի գնումներ են կատարում, պարտքերի մեջ են մտնում: Ֆինանսական գրագիտության կարիքը կա» (Անահիտ, Արագածոտնի մարզ):

Կանանց համար կազմակերպվող դասընթացների առումով շահառուներն ունեն և նշել են հետևյալ թեմատիկ դասընթացների, ինչպես նաև գիտելիքների և կարողությունների փոխանցման կարիքը.

- բիզնես ծրագրերի կազմում, ներկայացում, գրանցում, ֆինանսական հսկողության իրականացում,
- օրենսդրական փոփոխություններ, մասնակցային բյուջետավորման մասին տեղեկատվություն,
- կառավարման մարմինների հետ ճիշտ և արդյունավետ հաղորդակցվելու, դիմումներ գրելու, ծրագրերին մասնակվելու կարողությունների զարգացում
- դրամաշնորհային ծրագրերից տեղեկացվելու, դիմելու կարողությունների զարգացում,
- համացանցից ճիշտ օգտվելու կարողություններ, կեղծ տեղեկատվությունը բացահայտելու և տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու կարողություններ /մեդիա գրագիտություն/,
- ծնողավարություն,
- տարիքային հոգեբանություն. կնոջ կյանքի փուլերի առանձնահատկությունների հետ կապված գիտելիքների և կարողությունների զարգացում,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում,
- արհեստական բանականության կիրառում մասնագիտական նպատակներով,
- հանրային խոսքի վարպետություն, հասարակական-քաղաքական քննարկումներին փաստարկված մասնակցություն՝ ավելի ներկայանալի և վստահ զգալու նպատակով, այդ թվում՝ տարբեր կազմակերպությունների հետ շփումներում,
- «մենթալ առողջության» դասընթացների և տեխնիկաների սովորեցման կարիք, որոնք կօգնեն ճգնաժամային իրավիճակներում,

- ճգնաժամային իրավիճակներում կողմնորոշում,
- անձնական աճի և կարողությունների բացահայտման, ինքնագնահատման, ինքնաբացահայտման կարողությունների զարգացման,
- կնոջ կյանքի փուլերում անհրաժեշտ կարողությունների զարգացման,
- կարիերայի զարգացման, ֆինանսական գրագիտության գիտելիքների,
- անձնական կյանքն ու կարիերան համատեղելու կարողությունների, որոնք կօգնեն չկորցնել անձնական կյանքը, ընտանիքը՝ նաև նպաստելով ինքնազարգացմանն ու անձնական աճին,
- բանակցային արվեստ,
- հայրենիքը սիրելու, պետության և հասարակության հիմնախնդիրները կարևորելու և դրանց լուծմանը նպաստելու ցանկություն:

Հատկապես ֆոկուս-խմբային քննարկումներում, խոսելով ավանդական արժեքների կորստի մասին, առաջարկվել է վերապատրաստումներն ուղղել ազգային արժեքների տարածմանը, կոլեկտիվ գործողությունների կարողության զարգացմանը:

«Անցած տարի աշուն-ձմեռ ամիսներին դասընթացներ էի վարում տարբեր մարզերում երիտասարդների համար՝ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ: Այստեղ ասում ենք՝ արժեքներ, ինչ արժեքներով է այսօր ապրում հայ հասարակությունը: Ես ցավով եմ ասում, բայց երբ հարցնում էի՝ ինչ արժեքներով են ապրու

«Շեշտադրումը կդնեի տեղահանված գյուղաբնակ կանանց համար փոքր բիզնեսի ստեղծման վերաբերյալ դասընթացներին» (Անի 2, Վայոց Ձոր):

Կարևորվել է բանակցային արվեստին տիրապետելը ոչ միայն գործնական, այլև անձնական միջավայրում այն օգտագործելու նպատակով:

«Լինի դա քո եղբայրը, քո հայրը՝ կարողանաս իրենց հետ քո առաջընթացի, շահերի, կարիքների մասին բանակցել: Կարողանաս բացատրել, որ ուզում ես առաջընթաց ունենաս, հաջողությունների հասնես, օրինակ՝ դառնաս Ազգային Ժողովի պատգամավոր. ես իմ ամուսնում նիշտ այդպես եմ համոզում, ասում եմ՝ ես ուզում եմ ապագայում ԱԺ պատգամավոր դառնալ (ծիծաղում են): Այսինքն՝ դու չես պատրաստվում ժամանակ անցկացնես, լուսանկարվես այնտեղ, այլ պետք է աշխատես, օգուտ բերես: Ասում եմ՝ տես, ինչ է, ես մյուսներից ավելի վա՞տն եմ: Ու մեր քննարկումները այդպես են անցնում, ու ես վերջիվերջո հաղթում եմ» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Նշվել է կանանց իրավունքների վերաբերյալ տեղեկատվական գործընթացների շարունակելիության, ինչպես նաև հոգեբանական աջակցության անհրաժեշտությունը: Կարևոր է կանանց և աղջիկների մոտ տարիքային հոգեբանության, այդ թվում՝ կնոջ կյանքի փուլերի հետ կապված ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխությունների վերաբերյալ գիտելիքների և կարողությունների փոխանցումն ու զարգացումը: Կինը պետք է կարողանա աջակցել և՛ ինքն իրեն, և՛ այլ կանանց և աղջիկներին:

«Կանանց հոգեբանական աջակցության, իրազեկման՝ հատկապես իրավական մասով. կանանց 90%-ը քաջատեղյակ չէ իրենց իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ: Դա իրենց ինքնագնահատականը ևս կբարձրացնի: Խոսքը տեղահանվածների՝ բնակծրագրերի, փոքր բիզնեսի կազմակերպման վերաբերյալ» (Անի 2, Վայոց Ձոր):

«Հատկապես դեռահաս և երիտասարդ տարիքում աղջիկներն ունենում են պրոբլեմներ, որոնց հաղթահարումը գրեթե անհնար է, եթե կողքին չկան աջակցող մայրը, ավագ քույրը, լավ ընկերուհիները: Նման վիճակներում անհրաժեշտ են գիտելիքներ և կարողություններ, որոնց սովորեցումը խիստ

կարևոր է: Առհասարակ, կախված տարիքից, կանանց անհրաժեշտ են հոգեբանական գիտելիքներ» (Անի, Սյունիքի մարզ):

Հարցվածները նշել են, որ հատկապես գյուղական համայնքների աղջիկների համար անհրաժեշտ է հաղորդակցման, մտքերի և հույզերի արտահայտման կարողությունների զարգացում: Չնայած բազում ռեսպոնդենտների կողմից նշված այն փաստի, որ հետխորհրդային փուլում կանայք և աղջիկներն ավելի ինքնավստահ են դարձել, այնուամենայնիվ ինքնավստահության և մոտիվացվածության ուղղությամբ թրեյնինգներն անհրաժեշտ են:

«Կոմպլեքսներից ձեռբազատվելու, ինքնավստահության ուղղություններով թրեյնինգներ» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Գյուղական համայնքների միջև հաղորդակցությունների, տրանսպորտի ոչ լիարժեք աշխատանքը և կանանց զբաղվածությունը տնային տնտեսություններում հաճախ իրենց զրկում է աշխարհայացքից, անգամ՝ իրենց բնակավայրի մասին պատկերացումներից և գիտելիքներից: Ռեսպոնդենտներից մեկն առաջարկել է մարզերում ստեղծել գյուղաբնակների՝ փոխադարձ այցելությունների, համատեղ միջոցառումների ծրագրեր, որոնք կնպաստեն տեղային մտածելակերպի ընդլայնմանը, կանանց աշխարհայացքի, պատկերացումների ընդլայնմանը:

«Իջևանի գյուղերից մի կին է աշխատում մեզ մոտ. առավոտյան գալիս է, երեկոյան գնում: Մի անգամ խոսում էինք կոլեկտիվով որևէ տեղ գնալու մասին, ասաց՝ կյանքումս միայն մեկ անգամ եմ հեռու տեղ մենակ՝ առանց ամուսնու գնացել. գնացել էր Երևան՝ առողջական խնդիրներով: Մյուս բոլոր դեպքերում միայն գնացել է Իջևան և վերադարձել գյուղ, այլ տեղ չի եղել: Իր նեղ շրջապատից դուրս որևէ բան չի տեսել: Այստեղ էլ լինելով՝ անընդհատ շտապում է տուն, ասում է՝ շատ գյուղատնտեսական գործեր ունի, չի կարողանում անգամ նստել մի պահ, հանդարտվել ու սուրճ խմել: Չի պատկերացնում, որ իր գյուղական միջավայրից դուրս կյանք կա: Հետաքրքիր կլիներ, եթե տարբեր գյուղերից, բնակավայրերից կանայք միմյանց այցելեին, փորձի փոխանակում իրականացվեր, աշխարհայացքն ընդլայնվեր» (Անահիտ, Արագածոտնի մարզ):

Ինչպես արդեն նշվել է, շատ հարցազրույցներում խոսվում է տղամարդկանց ներուժի թերզարգացման, տղամարդկանց միջավայրում կրթվելու, զարգանալու

մոտիվացիայի անկման, խաղամոլության և թմրամոլության տարածման մասին: Կանայք հաճախ նշում են, որ **թրեյնինգներ, զարգացման և ամրապնդման ծրագրեր պետք է իրականացնել ոչ միայն կանանց, այլ նաև տղամարդկանց համար**:

«Ես Ձեզ խորհուրդ կտամ թրեյնինգներ իրականացնել ոչ այնքան կանանց, որքան՝ մարզերի, գյուղերի տղամարդկանց համար: Անհրաժեշտ է հավասարություն, կանանց համար հնարավորություններ, տղամարդկանց պետք է կրթել: Տղամարդիկ և կանայք պետք է նույն հարթության վրա լինեն»: (Սիրանուշ, Կոտայքի մարզ)

«Թրեյնինգները պետք է լինեն երկսեռ. պետք է տղամարդիկ մասնակցեն կանանց սատարմանը, տեսնեն, որ անհրաժեշտ է հավասարություն: Մեկը մյուսի ներուժը պետք է օգտագործի» (Գայանե, Արագածոտն):

«Ունենք արժեհամակարգ ստեղծելու կարևորագույն խնդիրը՝ և՛ աղջիկների, և՛ տղաների դեպքում: Առաջնորդությունը ենթադրում է նաև հավասարություն, միմյանց չվնասելու, հարգելու մշակույթը, գիրք կարդալու, ազգային արժեքները ճանաչելու և պահպանելու մոտեցումները: Այժմ տեղեկատվությունը շատ է՝ բոլոր կողմերից թափվում է: Անհրաժեշտ է փոխանցել կարողություններ՝ տեղեկատվության հանդեպ ընտրողական վերաբերմունքի, վերլուծելու կարողության առումով» (Դիանա, Գեղարքունիքի մարզ):

Միևնույն ժամանակ, կանանց սատարումն ու ուժեղացումը բերել է տղամարդկանց թուլացմանը. փաստորեն՝ անհրաժեշտ է կանանց մեջ առաջնորդության ձևավորում և սատարում՝ ոչ թե տղամարդկանց մեջ առաջնորդական որակների զսպման և սահմանափակման, այլև՝ կանանց և տղամարդկանց կարողությունների և ջանքերի համատեղման և փոխլրացման սկզբունքով:

«Իրականում՝ ժամանակ է գալու, երբ արդեն տղաներին է պետք գալու սատարել և իրենց համար թրեյնինգներ կազմակերպել: Կանանց ներուժը զարգանում է, իսկ տղաներինը՝ նահանջ ապրում: Տղաների՝ մասկուլին էներգիան քչացել է, կոտրվել: Ինձ թվում է՝ դա ամբողջ աշխարհում է այդպես: Հայաստանի վրա դա ավելի քիչ է ազդել, որովհետև մենք պատերազմող երկիր ենք ամեն դեպքում:

Բայց ամբողջ աշխարհում տղամարդկանց նահանջը զգացվում է: Տղամարդիկ հասկացան, որ կանանց վրա կարելի է շատ մեծ պատասխանատվություն դնել, և թուլացան» (Էլեն, Գեղարքունիքի մարզ):

Նույն տեսակետը հնչեցվել և քննարկվել է ֆոկուս-խմբային զրույցներում: Նշվել է, որ կանանց իրավունքների շեշտադրումը ստվերել է կանանց պարտականությունների հարցը, ինչպես նաև տղամարդկանց իրավունքները. տղամարդիկ դարձել են մշտական քննադատության օբյեկտը, և սահմանափակված են իրենց դերերում:

«Այսօր շատ են խոսում կանանց հանդեպ ընտանեկան բռնության հիմնախնդրի, դեպքերի մասին: Թվում է, թե այդ դեպքերը շատացել են: Իրականում չեն շատացել, բայց սկսել են բարձրաձայնվել: Ես կարծում եմ, որ մեր աղջիկները, երբ ընտանիքներ կազմեն, արդեն տղամարդիկ իրենց կողմից կենթարկվեն ընտանեկան բռնության, այդ թվում՝ հոգեբանական /ծիծաղում են/: Վերջին տարիներին անընդհատ խոսվում է կանանց իրացունքների մասին, և եկել է մի իրավիճակ, երբ կարիք կա խոսելու նաև տղամարդկանց իրավունքների մասին. իրենց շատ տուժում են: Ու դա էլ է սխալ: Ոչ բոլորն են հասկանում կանանց և տղամարդկանց միջև ներդաշնակ հարաբերությունների անհրաժեշտության մասին, իսկ միայն կանանց իրավունքների պաշտպանությունն այդ ներդաշնակությունը խախտում են: Ինքս էլ եմ շատ մասնակցել այդպիսի սեմինարների, թրեյնինգների՝ կանանց իրավունքների թեմաներով, և եթե չունենայի քննադատական մտածողություն, ազատությունը կխառնեյի այլ բացասական հարցերի հետ» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Կանայք և տղամարդիկ փոխվել են դերերով. դա, զրուցակիցների պատկերացումներում, ունի և՛ առավելություններ, և բացասական կողմեր: Առավելություններից է կանանց ինքնադրսևորումն ու ինքնակայացումը, թերություններից՝ արդեն նշված հետընթացը տղամարդկանց կյանքում, գործառույթներում և հանրային պատկերացումներում:

«Իմ ընտանիքում, հաշվի առնելով ներկայիս պայմանները, մենք փորձեցինք հասկանալ, թե ում մոտ է ավելի լավ ստացվում փող աշխատել: Մենք փոխզիջման գնացել ենք: Ու ընտանիքը որպես այդպիսին այլևս չկա: Որովհետև

սկզբի փուլերում ինքն էր ինձ առաջ տանում, ինքն էր ապահովում իմ առաջխաղացումը: Բայց հետո ես զարգացա, իսկ նա մնաց նույն տեղում: Նա ապահովել է այն միջավայրը, որում ես կարող էի զարգանալ, կարիերա ստեղծել, իսկ նա օգնում էր, նայում էր երեխաներին: Հետագայում ստացվեց, որ մենք տարբեր մակարդակի մարդիկ ենք. ես առաջ ընկա, իսկ նա մնաց նույն տեղում: Նա ինձ առաջ է հրել, իսկ ես իրեն հետս տանում եմ (ծիծաղում է)» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Առաջարկվել է նաև թրեյնինգներն իրականացնել ոչ թե կենտրոնացված, այլ՝ տեղական սկզբունքով.

«Պետք է ոչ թե տարբեր մարզերից թրեյնինգների հրավիրել կանանց, այլ ամեն մարզում մշտական սկզբունքով գործեն թրեյնինգներ կանանց համար» (Լաուրա, Սյունիքի մարզ):

Հասարակության մեջ տղամարդկանց դերի անկումը զրուցակից կանայք կապում են նաև սեփական “ճնշող” ազդեցության հետ. տղամարդուն անընդհատ մեղադրելը կանանց իրավունքների խախտման, կնոջը սահմանափակելու համար բերել է նրան, որ կինն ավելի ազատ է, տղամարդը՝ հասմանափակված: Մյուս կողմից, շատ տղամարդկանց այդպես ավելի հարմար է, երբ կնոջ կողմից ստանձնվող գործառույթները կարելի է իրենց վրա ամբողջությամբ բարդել: Ընդհանուր առմամբ, նկատելի է ավանդականից դեպի արդիականի անցման արդյունքում անհավասարության նոր դրսևորումներ. կինն ավելի ակտիվ է դարձել, քան՝ տղամարդը, և ոչ թե՝ տղամարդու հետ միասին:

«Տղամարդիկ տեսնում են, որ կինն ամեն ինչ անում է, և թուլանում են. մեկա՝ «պախատ անող» կա»:

«Շատ տղամարդիկ կան, որ ասում են՝ բա ինքը ընտանիքի կինն է, ինքը պիտի այդ ամենը անի, օրինակ՝ գնա շուկա առևտուր անի: Եթե ես՝ տղամարդ հալով, գնամ սկսեմ շուկայում առևտուր անել, գին գցել՝ ամոթ է, իսկ կինը դա շատ լավ է անում, թող անի ուրեմն»:

«Բայց անկեղծ լինենք. մենք էլ ենք իրենց /տղամարդկանց/ շատ հաճախ շահագործում: Անկեղծ: Դա տարրական բան ենք համարում, բայց, օրինակ՝

տղամարդը բացում է դուռը, որ կինն անցնի, ու իրար հետևից քսան կին է անցնում, նա էլ այդ դուռը համբերատար պահում է: Ես, օրինակ, դա տեսնելով՝ չեմ անցնում. մենք ասում են՝ մենք կին ենք, մեզ պետք է հարգել, բայց նույն տղամարդուն էլ պետք է հարգել: Կամ ջուր ես խմում՝ կանայք մոտենում են, իրար հետևից ցայտաղբյուրից ջուր են խմում, ու մի տղամարդ կանգնած սպասում է: Ավելի լավ չէր լինի՝ նա արագ խմեր-գնար, ու հետո կանայք դանդաղ խմեին: Կամ, օրինակ, ընդունված է, որ տղամարդն է կնոջ համար վճարում: Հաճախ տղամարդկանց իրավունքներն են ոտնահատվում» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Լոռու մարզ):

Նշվում է կրթության արժեքի համատարած անկման մասին. սովորելու, կրթվելու կարևորությունը, օգուտը, սովորելու մոտիվացումը այն նպատակներից են, որոնք պետք է մշտապես դրվեն և ուղղված լինեն և՛ աղջիկներին, և՛ տղաներին.

«Կրթության հանդեպ մոտիվացում: Իմ օրինակով պատմեմ՝ իմ դասարանում կային և՛ խելացի տղաներ, և՛ աղջիկներ, իրենց մի մասը՝ լավ սովորող, մի մասը՝ չսովորող: Հետո տարիներ անց ինձ տեսնում են, ասում՝ ճիշտ էիր մեզ ասում, որ սովորենք, ջանք գործադրենք, քեզ չեինք լսում» (Դիանա, Գեղարքունիքի մարզ):

Համայնքներում մարդկանց, այդ թվում՝ կանանց և աղջիկների սատարման, իրենց ինքնազարգացմանը նպաստելու մոտեցումներից է դպրոցից սկսած արհեստներ սովորեցնելը՝ խորհրդային տարիներին կիրառվող և ապա՝ մոռացված մոտեցման վերականգնումը:

«Մասնագիտական կողմնորոշում, մոտիվացում: Անհրաժեշտ է սովորեցնել արհեստներ, այդ թվում՝ դպրոցից սկսած: Տեսել էի տեսանյութ, թե ինչպես են Չինաստանի մանկապարտեզներում սովորեցնում պատ շարել, պատկերացնու՞մ եք: Մանկապարտեզներում: Որպեսզի, եթե հետագայում բարձրագույն կրթություն չստանան, կարողանան կարևոր մասնագիտություն, գիտելիքներ և կարողություններ ունենալ, հասարակությանը պետք գալ: Իսկ մեզ մոտ հիմնականում խոհարարական արվեստ են սովորեցնում աղջիկ-տղաներին» (Ռիտա, Արագածոտնի մարզ):

«Մասնագիտական կողմնորոշման կարիք, որը պետք է հենված լինի կանանց ցանկությունների, կարողությունների վերլուծության և ինքնավերլուծության միջոցով» (Մերի, Տավուշի մարզ):

Մոտիվացման կարիքը շատ է զգացվում. նշվում է, որ անգամ անվճար և օգտակար դասընթացների կազմակերպման պարագայում կանանց մասնակցությունը կարող է ցածր լինել հենց մոտիվացիայի բացակայության, կամ նյութական բնույթի պարագայում. դասընթացներից անվճար պայուսակների և բլոկնոտների ստացումն ավելի են կարևորում, քան՝ գիտելիքները:

«Առաջնահերթությունը ինքնակրթությունն է: Մեր հասարակության մեջ կան կանայք, ովքեր ամեն ինչից հեռու են, զբաղվում են միայն իրենց տան հոգսերով: Երբ, օրինակ, միջոցառումներ ենք կազմակերպում, շատ քին են մասնակցում, չնայած՝ մուտքն ազատ է: Հաճախ այդպիսի կանանց հետ որևէ ընդհանուր թեմա չենք կարողանում գտնել» (Իվետա, Տավուշի մարզ):

«Եթե նախկինում կանայք մասնակցում էին թրեյնինգներին, որպեսզի, կներեք, ինչ-որ բան ստանան, օրինակ՝ գրիչ-բլոկնոտ, ապա հիմա ակտիվ մասնակցում են գիտելիքներ ստանալու, ակտիվանալու նպատակով» (Մերի, Տավուշի մարզ):

Օտար լեզուների դասավանդման որակի բարձրացման կարիք է զգացվում: Մասնավորապես, օտար լեզվի դասավանդումը կարիքն ունի այն համապատասխան միջավայրում անցկացնելու՝ դպրոցներում ունենալու դասասենյակներ, որտեղ կարտացոլվի անգլալեզու պետությունների միջավայրը, մշակույթը: Լեզվի դասավանդման միջոցով հնարավոր է նաև մարզաբնակ տղաներին և աղջիկներին ծանոթացնել այլ մշակույթների հետ, ընդլայնել իրենց աշխարհայացքը, որը նաև հիմք կհանդիսանա լայնախոհության, բազմակարծության համար:

Կարևորվել է մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտությունը. սովետական ժամանակահատվածում, ինչպես նաև ժամանակակից հասարակություններում մասնագիտական կողմնորոշումն իրականացնող կազմակերպությունները օգնում են ստանալ պետությանն ու հասարակությանն անհրաժեշտ մասնագիտություն, դրանով ինքնադրսևորվել, արդյունավետ դառնալ, մինչդեռ ներկայիս Հայաստանում նման մոտեցումները բացակա են.

մարդիկ առաջնորդվում են նորաձև մասնագիտություններով, մեծամասնությունը, այդ թվում՝ կանայք արդյունքի չեն հասնում, չեն ինքնիրացվում:

«Մասնագիտական սխալ կողմնորոշում. «Այսօր մասնագիտություններից ամենատարածվածը ծրագրավորումն է, բայց պետությունն ու հասարակությունն ունի բազում այլ մասնագետների կարիքը: Մարդկանց պետք է կրթել, տեղեկացնել, կողմնորոշել» (Մարո, Վայոց Ձոր):

«Դպրոցներում երեխաներին պետք է մասնագիտորեն կողմնորոշել: Միշտ խորհուրդ ենք տալիս. մասնագիտություն ընտրելիս պետք է պլանավորեք, որ ձեր ընտրած մասնագիտությունը ձեզ եկամուտ բերի: Աղջիկս դպրոցը բարձր գնահատականներով ավարտել է, ԵՊՀ կիրառական ընդունվել է, բայց չի շարունակել. որոշել է, որ կգնա բուժական կոսմետոլոգիա, այս պահին օրը 30.000 փող է աշխատում. իր համար իր բիզնեսը ունի» (Կարինե, Սյունիքի մարզ):

Նշվել է նաև, որ կանանց աջակցությանն ուղղված դասընթացներ պետք է վերաբերեն “փափուկ կարողությունների” (soft skills) զարգացմանը, որոնք կխթանեն կանանց ակտիվ կողմնորոշումը սոցիալական միջավայրում:

«Ինձ թվում է՝ երբեք ավելորդ չէ խոսել այն մասին, թե ինչպես նախաձեռնել. որտեղից սկսել, ինչից գալ: Շատերը չգիտեն ամենատարրական բան. ինչ քայլերով ինչ-որ բան իրականացնել: Խոսքս երևի project management-ի մասին է: Հատկապես կանանց շրջանում պետք է խթանել կրթությունը, այդ թվում՝ քաղաքացիական կրթությունն ու գիտակցությունը: Հաճախ կանայք ասում են՝ դե, իմ անելով ի՞նչ կարող է փոխվել: Համայնքներում շատ բաների կարիքը կա, հիմնականում՝ soft skills-ների» (Մելինե, Տավուշի մարզ):

Բազմիցս կարևորվել է արդյունավետ կանանց կողմից իրենց փորձով կիսվելու հնարավորությունը, որը կոգեշնչի այլ կանանց, կուղղորդի, կնպաստի մյուսների առաջխաղացմանը:

«Կուզեի, որ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի դասընթացների շրջանակներում լիքը սիրուն օրինակներ ցուցադրվեին, թե ինչպես են տարբեր կանայք հասել հաջողությունների մասնագիտական ոլորտներում և կարողացել են բալանսավորել աշխատանքը, կարիերան, և անձնական կյանքը» (Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից, Շիրակի մարզ):

Ամփոփելով՝ ուզում ենք բերել հարցված կանանցից մեկի խոսքերը, որոնք մոտիվացնող, սեփական ուժերին հավատալու և մյուսների համար օրինակ ծառայող մոտեցում են:

«Ինձ շատ են խանգարել, բայց կինը բնույթով շատ ուժեղ է: Միշտ հաղթահարել եմ: Չկա «չկարողանալ, չանել»-ը. չ-ով չամիչ կա, չիր կա (ժպտում է): Ցանկություն է պետք: Հիմա էլ, անընդհատ ինձ կրթում եմ, դասընթացների մասնակցում եմ, սովորում եմ: Անհնար ոչինչ չկա: Ինչ էլ ուզել եմ՝ դժվարություններով, բայց հասել եմ» (Լաուրա, Սյունիքի մարզ):

Ամփոփելով կանանց հետ հարցազրույցների արդյունքներն իրենց և իրենց համայնքների ապագայի մասին՝ բացահայտում ենք իրատեսության և գործնական տրամադրության ուշագրավ համադրություն: Անորոշությունը որպես կյանքի անխուսափելի կողմ ընդունելով՝ կանայք կարևորում են այն մոտեցումները, որոնք հզորացնում են ինչպես կնոջը, այնպես էլ իր համայնքին: Մշտապես սովորելու և փորձ ձեռք բերելու, համայնքային կյանքում ակտիվ ներգրավվելու, դժվարություններին դիմակայելու և անորոշության պայմաններում կողմնորոշվելու, ընտանիքին և համայնքին սատարելու մոտեցումներն իրենց կյանքի կենտրոնական հենասյուններն են: Հուսահատությանը տրվելու փոխարեն՝ հետազոտության մասնակից կանայք կերտում են մի իրականություն, որտեղ դասեր են քաղում դժվարություններից, ամրապնդում իրենց կարողությունները և իմաստալից ներդրում են ունենում կոլեկտիվ կյանքում՝ ձևավորելով առաջընթացի մի ուղի, որը լի է և՛ հույսով, և՛ հաջողություններով: